

15062

Ա. ԳՈՒԾԿԻՆ



Ան Մյ

ՕՐԱՐԻՎԱԾՅՈՒՄ

891-71-092

ՊԵՏԱՐԱՏ — ՅԵՐԵՎԱՆ

7-90



891.71.092

7-90

W

19 NOV 2010

# Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

1010  
42403

ՅԵՐԵՎԱՆ



1937

19 DEC 2013

15062

MSS. A. 9. 2

15062



Պ Ո Ւ Շ Կ Ի Ն Ի Կ Յ Ա Ն Ք Ն  
Ո Ւ  
Գ Ր Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը



\* \* \*

### Exegi monumentum

Քարձրացրի անձեռակերտ յես հուշարձանն իմ վեհ,  
Չի մամռոտի դեպ այն տանող՝ ժողովրդի ճամբան,  
Անհրնազանդ գլխով նա բարձրացավ ավելի վեր  
Հուշասյունից Ալեքսանդրյան:

Վհչ, անվախճան եմ յես—հոգիս նրվիրական յերգով  
Իմ աճյունից յերկար կապրի և կրմնա անեղծ—  
Յեվ իմ հուչակը չի հանգչի, վորքան լուսնի ներքո  
Կապրի թեկուզ մի բանաստեղծ:

Համբավն իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,  
Ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող  
Սլավոնի թողը սեզ ու ֆինն ու դեռ այսոր լվայրի  
Տունգուզը և կալմիկն ստեպ սիրող:

Յեվ յես յերկար կապրեմ սիրով ժողովրդի սրտում  
Քանի վոր քնարն իմ արթնացրել է զգացմունքներ բարի,  
Յեվ իմ դաժան դարում յերգել եմ յես ազատություն  
Յեվ գութ հանուն ընկածների:

Դու յերկնքի հրամանին անսա՛, ո՛ր ի՛մ մուսա,  
Յեվ մի սարսի հալածանքից և մի ձգտի պսակի,  
Դու անտարբեր լըսիր զբարտաթյուն և գովասանք,  
Յեվ հիմարին մի առարկի:

## ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

1897 թ. ձմռան խուլ գիշերին Նիկոլայ I թագավորի ժանդարմները գողերի պես թագուն և գաղտագողի կերպով տանում էյին Պուշկինի մեռած մարմինը: Յարական կառավարութունը փորձում էր ուս ժողովրդից գողանալ նրա մեծ բանաստեղծին, վոր սպանվել էր ազնվականության ու ռեակցիայի դործակալի կողմից: Գիտութունը վաղուց է հերքել Պուշկինի մահվան շուրջն ստեղծված անհասկանալի մտախնայներից առաջացած պաշտոնական լիբերալ լեգենդը: Պաշտական մարդկանց կողմից մասնաված Պուշկինի մենամարտը վախճանն էր այն չերկարատե պայքարի, վոր մղում էր հանճարեղ բանաստեղծը ռեակցիոն ազնվականության դեմ՝ հանուն ուս գրականության բախտի:

Պուշկինի մահվամբ այս պայքարը չվերջացավ: Նրա դագղի վրա շարունակվեց այն: Պայքարը շարունակվեց պոետի յերկերի շուրջը և այն ժամանակ, յերբ բանաստեղծը պաշտոնապես ճանաչվեց: Թագավորական մինիստրները, վորոնք «ժողովրդական լուսավորության» անվան տակ յերկրում խավարամտութուն էյին տարածում, աշխատավորներից թագցնում էյին իսկական Պուշկինին:

Ազնվական և բուրժուական գրականութունն իր բաժինն ունեցավ Պուշկինի բանաստեղծական դեմքը կեղծելու գործում: Նրա անունը փորձում էյին դարձնել ռեակցիոն «մաքուր արվեստի» դրոշակ: Հանուն Պուշկինի պայքարում էյին աշխատավոր մասսաների հեղափոխական շարժման դեմ:

Աղքատությամբ և տաժանակիր աշխատանքով ճնշված, անգրագետ և խավար մասսաներին մատչելի չէյին պոետիան ու

գրականությունը: Կուլտուրան — ազնվականության և բուր-  
ժուազիայի մենաշնորհն էր: Պուշկինին ազգային բանաստեղծ-  
անվանելով, նրանք իրենք իրենց նույնացնում էին ազգի հետ:  
Սակայն կապիտալիստների ու կալվածատերերի այս «ազգին» խոր  
թշնամությամբ ելին վերաբերվում միլիոնավոր աշխատավորները:

Պրոլետարական մեծ հեղափոխությունն առաջին անգամ  
ազգային ուսուստեղծի իսկական ժողովրդական փառք է  
ստեղծում Պուշկինին, խորհրդային չերկրի ժողովուրդների մեծ  
բանաստեղծի փառք: ԽՍՀ Միության ԿԳԿ վորոշումը Պուշ-  
կինյան կոմիտե կազմակերպելու մասին—պատմական մեծ  
նշանակություն ունի:

Մեծ չերկրի կառավարությունը մեծարում է հիշատակը  
Պուշկինի, իբրև ուսու գրական լեզվի ստեղծողի: Այս նշանակում  
է, վոր ուսու գրական լեզուն դարձել է միլիոնավոր աշխատա-  
վորների սեփականություն, հետագա կուլտուրական աճման ու  
զարգացման կարևոր գինք: Պուշկինը հիասքանչ, հզոր ու ճկուն  
ուսու գրական լեզվի ստեղծողն է յեղել և մնում է իբրև մեծ  
ուսուցիչ, և դեպի Պուշկինը տածած սիրտ, նրա չերկրի իսկա-  
կան ծանոթության հիման վրա չէ դաստիարակվում խորհրդային  
չերիտասարդությունը:

Պուշկինը ուսու նոր գրականության ստեղծողն էր: Այս  
գրականության կլասիկ ժառանգությամբ է սնվում մեր արդի  
խորհրդային գրականությունը: Մերը դեպի պոեզիան անբաժան  
է ստեղծագործական լի կրքից և կյանքի խնդալի հափշտակու-  
թյունից, և հենց այդպես է խորհրդային ժողովուրդների  
կյանքը: Պուշկինին գիտե և սիրում է մեր առաջագեմ չերիտա-  
սարդությունը: Պուշկինից է գալիս մեր լավագույն պոետների  
տոհմագրությունը: Իսկ մեր խորհրդային կպոխայի լավագույն  
պոետի՝ Մալախովսկու նշանակության մասին վաղուց չէր, վոր  
ասաց ընկ. Ասալինը. «Մալախովսկին եր յեվ մնում է մեր խորհրդային  
եպոխայի լավագույն յեվ ամենաազդեցիկ բանաստեղծը: Համ-  
ցանք է անսարքեռությունը դեպի նրա հիշատակն ու նրա յերկերը»:  
Մալախովսկու մասին ասված այս խոսքերը բարձրագույն աստի-  
ճանի վրա գրին մեր բանաստեղծության նշանակության հարցը,  
և ԽՍՀՄ ԿԳԿ վորոշումը Պուշկինյան կոմիտեյի մասին շարու-  
նակում է ընկ. Ասալինի խոսքերում նշած գիծը:

Պուշկինը— ուսուական մեծ ազգային պոետ է: Սակայն  
նրա գեղարվեստական խոսքի անմահ չերկերը հարստացրին

մարդկությունը: Ռուս ժողովուրդն արդարացիորեն է հպարա-  
նում իր պոետով: Պուշկինի միջոցով արտահայտվեց մեծ չերկ-  
րի, նրա աշխատավոր մասսաների տաղանդը, ներշնչման ուժն  
ու կիրքը:

Սակայն Պուշկինը գրում էր վոչ միայն ուսու ժողովրդի  
համար: Նրա համար թանգ էին բոլոր ազգությունների աշխա-  
տավորները, թանգ էր յուրաքանչյուր լեզուն, յուրաքանչյուր  
կուլտուրան: Նա ընդգծում էր իր բանաստեղծական բնավորության  
ինտերնացիոնալ գծերը, յերը գրում էր մարգարեաբար:

Համբավն իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,  
ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող—  
Մլավոնի թոռ սեգ ու ֆինն ու այսոր վայրի  
Տունգուղը և կալմիկն ստեպ սիրող:

Այն տենչը՝ վոր անիրականալի յե «վայրենի» լեզուների  
ճնշման վրա հիմնված բուրժուական հասարակարգում, իրակա-  
նանում է խորհրդային չերկրում՝ ազգային կուլտուրաների  
հարուստ զարգացմամբ և ժողովուրդների մեծ բարեկամությամբ:

Պուշկինը խորհրդ. Միության մեջ թանգ է բոլորին, և  
Պուշկինյան կոմիտեյում միանում են ամբողջ Միության գրող-  
ներն ու գործիչները: Բոլորը միևնույն խնդիրն ունեն— ամենա-  
լայն կերպով տարածել Պուշկինի պոեզիան, նրա բոլոր չերկերը  
Միության բազմամիլիոն աշխատավորության մասսաների մեջ:

Պուշկինյան կոմիտեյի կազմը վկայում է Պուշկինի մահ-  
վան հարյուրամյակի տոնակատարման մեծ նշանակությունը,  
պրոլետարական մեծ գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու նա-  
խագահությամբ համախմբվել են կառավարության և կոմու-  
նիստական կուսակցության ներկայացուցիչները, գիտության և  
բանաստեղծության, թատրոնի, գրականության և գրականա-  
դիտության գործիչները: Խորհրդային ժողովուրդների ազանդա-  
վոր պոետները մտնում են Պուշկինյան կոմիտեյի մեջ, վոր-  
պեսդի վկայեն խորհրդային բոլոր գրականությունների բա-  
րեկամությունը, նրանց գաղափարական ազգակցությունը և  
նրանց փոխադարձ կապը: Պուշկինյան կոմիտեյում արտացոլվել  
է վողջ խորհրդային միությունն իր կուլտուրական հոյակապ  
գեմքով, և կոմիտեյի աշխատանքը— ևս մի քալ է կուլտուրայի  
հետագա խորացման և զարգացման մեջ:

Պուշկինյան կոմիտե կազմակերպելով խորհրդային իշխանությունը վողջ յերկրին ասում ե գեղարվեստական գրականության կարևորության մասին, բանաստեղծության խոշոր նշանակության մասին կուլտուրական և սոցիալիստական շինարարության համար: Այս ցուցումն առաջին հերթին պետք ե հաշվի առնի խորհրդային դպրոցը, վորտեղ գեռ ևս մեծ պակասություններ կան աշակերտների ծանոթության գործում ուսական գրական լեզվին, ուսական գեղարվեստական գրականության և մասնավորապես Պուշկինին:

(«Պրավդա»)-ից

## ՊՈՒՇԿԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԼԻՅՅՑ

(1799 — 1817)

Ալեքսանդր Պուշկինը ծնվել 1799 թ. մայիսի 26-ին (նոր տոմարով՝ հունիսի 6-ին) Մոսկվայում: Նրա հայրը, Սերգեյ Լվովիչը (1771—1848), չերեմնի հարուստ կալվածատիրական ընտանիքից եր: Նախնիքների կալվածքներից (Նիժեգորոդսկի նահանգում) նրան քիչ բան հասավ. բայց հասածն ել նա վատնում եր, բոլորովին չհետաքրքրվելով տնտեսական գործերով: Նա ծառայում եր Մոսկովյան կոմիտարիատում, բայց ծառայությամբ մտահոգված չեր: Նրա ծանոթների մեջ կային շատ գրողներ, իսկ նրա չեղբայր Վասիլի Լվովիչը անուն եր հանել վորպես բանաստեղծ: Պուշկինի ասնը գրականությամբ հետաքրքրվում եյին, իսկ ինքը Սերգեյ Լվովիչը Փրանսիական կլասիկների յերկրպագու յեր և ինքն ել գրում եր Փրանսերեն և ուսերեն վոտանավորներ, վորոնք, ի միջի ալլոց հայտնի եյին միայն ծանոթներին և ազգականներին:

Պուշկինի մայրը, Նադեժդա Ոսիպովնան, ծնյալ Հաննիբալ, սերում եր Հաննիբալից, Պետրոս մեծի «խափշիկից», վորը պատկերված ե Պուշկինի վեպում:

Պուշկինը շփերթ դաստիարակություն ստացավ: Իրար փոխարինող Փրանսիացի գուվերնյորները, պատահական ուսուցիչները խոր ազդեցություն չեյին կարող ունենալ մի յերեսայի

վրա, վորը մեծ չափով թողնված էր իր բախտին: Պուշկինն իր մանկութունն անցրեց Մոսկվայում, միայն ամառները ընտանիքի հետ մեկնում էր Չախարովո, իր տատի մերձսոսկովյան կալվածքը: Բացի Ալեքսանդրից Պուշկիններն ունեյին ելի յերկու յերեխա՝ մեծը՝ Ուլան և կրտսեր վորդին՝ Լեվը: Ծնողները յերեխաների վրա շատ ուշադրութուն չեյին դարձնում, և, ըստ յերևույթին, Ալեքսանդրն ընտանիքում սիրված յերեխա չէր:

Հետագայում նրա չեղբայրն Ալեքսանդրի մանկական տարիները մասին գրում էր. «Մինչև տասնութեկ տարեկան հասակը նա դաստիարակվել է ծնողների տանը: Պոեզիայի սերը նրա մեջ արտահայտվեց նրա առաջին հասկացողութունների հետ միասին, ութ տարեկան հասակում, յերբ նա արդեն գիտեր կարգալ և գրել, իր ուսուցիչների վրա Ֆրանսերեն լեզվով կոմեդիաներ և եպիգրամներ էր հորինում: Ընդհանրապես նրա դաստիարակութունն իր մեջ ուստական քիչ բան էր պարունակում: Նա միայն Ֆրանսերեն էր լսում. նրա գուլերնյորը Ֆրանսիացի էր, խելոք և զարգացած մի մարդ. նրա հոր գրագարանը միմիայն Ֆրանսերեն գրքերից էր բաղկացած: Յերեխան անքուն գիշերներ էր անցկացնում և հոր կարիներում գաղտուկ կլանում էր գիրք գրքի յետևից»:

1810 թվին Յարսկոյե Սելոյում, Ալեքսանդր I-ի պալատին կից, մի արտոնյալ ուսումնական հաստատութուն՝ լիցեյ ստեղծելու նախագիծ ծագեց: Պուշկինը, վոր ազդեցիկ ծանոթներ ուներ, վորոշեց իր վորդի Ալեքսանդրին տալ այդ դպրոցը: 1811 թ. հունիսին Ալեքսանդրն իր հորեղբոր, բանաստեղծ Վասիլի Լվովիչի հետ միասին մեկնեց Պետերբուրգ: Այստեղ շնորհիվ Պուշկինների ծանոթ Ալեքսանդր Տուրգենևի միջնորդութունների, նրա լիցեյ ընդունվելն ապահովվեց և ոգոստոսի 12-ին նա ընդունելության քննութունները բռնեց: Հոկտեմբերի 19-ին կատարվեց նոր ուսումնական հաստատության հանդիսավոր բացումը, և այդ որվանից Պուշկինն սկսեց իր լիցեյական կյանքը: Լիցեյը փակ ուսումնական հաստատություն էր, այսինքն լիցեյիստներն ապրում էյին լիցեյում, Յարսկոսելսկի մեծ պալատի կողաշենքում: Ընդամենն ընդունել էյին 30 աշակերտ: Յեվ վորովհետև մեծ մասամբ պրոտեկցիայով էյին ընդունում, իսկ յերեխաներին լիցեյ տեղավորելը, վորտեղ նրանք պետության հաշվին էյին պահվում և վորտեղ ավար-

տելուց հետո նրանց ծառայության կարգերան ապահովված էր թվում, — ձեռնառու գործ էր համարվում, ուստի այնտեղ տեղավորվեցին գլխավորապես միջին նվազ ապահովված ազնվականների յերեխաները, ազնվականների, վորոնք պաշտոնեական կապեր ունեյին: Այն հասարակութունը վորի մեջ Պուշկինն ընկավ, բոլորովին էլ արխտոկրատական չէր, թեև այնտեղ կային տոհմիկ և տիտղոսավոր ծնողների մի քանի յերեխաներ:

Լիցեյում դասավանդելու համար հրավերած էյին լավագույն մանկավարժները. բայց լավագույններն էլ բարձր մակարդակ չունեյին: Դասավանդութունը կանոնավոր չէր, վոր բացատրվում էր և՛ դասատուների անպատրաստությամբ, և՛ վարչական անկարող ղեկավարությամբ, և՛ անհաջող կազմված ծրագրով: Լիցեյում մեայու տեղությունը սահմանված էր վեց տարի, ըստ վորում այդ վեցամյա ծրագիրը բաժանվում էր յերկու չեռամյա դասընթացի: Այդ տարիների ընթացքում լիցեյը պետք է տար, բարձրագույնին հավասարազոր, ավարտված ընդհանուր կրթություն: Ուստի ծրագրում չափազանց շատ նյութ էր մտնում, վոր այդքան ժամանակամիջոցում չէր կարող յուրացվել, և դասընթացի յուրացումն, անհրաժեշտորեն, վեր էր ածվում ամենամակերեսային ծանոթացման: Դասավանդությունն առավելապես հումանիտար թեքում ուներ՝ ուսումնասիրում էյին գրականություն և իրավաբանական գիտություններ: Լեզուների ավանդումը վատ էր դրված:

Համեմատաբար լավ էր դրված Ֆրանսերեն լեզվի ավանդումը, վորի դասատուն փորձված մանկավարժ Բուդրին էր, Մարտի հարազատ յեղբայրը, վոր Ռուսաստանում էր բնակություն հաստատել:

Կրթության պակասը լիցեյիստները լրացնում էին դրսից: Արտաքին շրջապատի ընտելացիրը տրված է Բուլգարինի վոստիկանական մասնության մեջ, վոր նա տվել էր վոստիկանության, հավանորեն, 1826 թվին և վերնագրված էր «Нечто о Царскосельском лицее и о духе оного».

«Յարսկոյե Սելոյում կանգնած էր հուսարական գունդը, ամառն այնտեղ ապրում էյին բազմաթիվ ընտանիքներ, մայրաքաղաքից գալիս էյին բազմաթիվ հյուրեր, — և յերիտասարդներն աստիճանաբար սկսեցին ստանալ հասարակության մեջ շրջող լիբերալ գաղափարները: Պետք է նկատել, վոր այն ժամա-

1811

նակ Լիցեյում չերիտասարդներին հաճախելն ընդունված եր-  
նրանք նույնիսկ կամացուկ (այսինքն՝ առանց թուլլովության,  
բայց բացեի բաց) գնում եյին տները պարերեկույթի, և գնում  
եյին Պետերբուրգ, սպաների հետ քեֆեր ելին անում և Պետեր-  
բուրգում հաճախում եյին շատ մարդկանց, վորոնք զգալի դե-  
ր են խաղում և վորոնց անունները տալ չեմ ուզում: Լիցեյում  
սկսել են կարգալ բոլոր արգելված գրքերը, այնտեղ եր գտնու-  
վում զաղտնի կերպով ձեռքից ձեռք անցնող բոլոր ձեռագրերի  
արխիվը և, վերջապես, հասավ այն բանին, վոր յեթե պետք եր  
լինում վորեւ արգելված բան գտնել, ուղղակի դիմում  
եյին Լիցեյ...»

Չնայած աչառու չափազանցությանը, վոր բոլորում ե գույ-  
ները խտացնելու ցանկութունից, Բուլգարինի գրությունը  
ճշմարտությունից հեռու չե: Այս տեսակետից բնորոշ ե Պուշ-  
կինի ցուցմունքը, վոր տվել եր 1828 թ. «Գավրիլիադայի»  
գործի արթիվ: Պուշկինը գործն ուզում եր այնպես պատկե-  
րացնել, վոր իբր թե պոեմի հեղինակը յերգիծաբան Գորչակովն  
ե յեղել, իսկ ինքը, Պուշկինը, այդ պոեմն արտագրել և լիցե-  
յում և հաղորդում եր. «ձեռագիրը ձեռքից ձեռք եր անցնում  
հուսարական գնդի սպաների մեջ, բայց թե յես այն ումնից եմ  
ստացել, յես բոլորովին չեմ կարողանում հիշել»: Այսպիսով,  
Պուշկինը ճշտությամբ ցույց տվեց արգելված գրականության  
լիցեյ թափանցելու ուղին:

Լիբերալ վորու լիցեյ ներթափանցումը, բնականաբար,  
բացատրվում ե այն ժամանակվա քաղաքական դեպքերով:  
Պուշկինի լիցեյում գտնվելու հենց առաջին տարում սկսվեց  
պետերբուրգ Պրանսիայի դեմ, վոր Ռուսաստանից հսկայական  
լարումն պահանջեց: Նապոլեոնի արագ առաջխաղացումը Ռու-  
սաստանի խորքը և մանավանդ Մոսկվայի գրավումը Ֆրանսի-  
ացիներին կողմից 1812թ. սեպտեմբերին Պետերբուրգը յին-  
թարհում եր վտանգի, և առաջ յեկավ Յարսկոյե Սելոյից լիցեյը  
եվակուացիայի յենթարկելու նախագիծը: Լիցեյիստներին այս  
այս բոլորը չեր կարող չհուզել և նրանց ուժեղ ուշադրությունը  
չբարձնել դեպի կատարվող դեպքերը: Յարսկոյե Սելոյով շարու-  
նակ զորքեր եյին անցնում: Ռազմական դեպքերը շարու-  
նակվում եյին մինչև 1815թ.: Դեպքերը վերջացան Պրանսիայում  
Բուրբոնների նախահեղափոխական դինաստիայի վերականգնու-  
մով, քաղտարագիրների վերադարձով և նապոլեոնյան քաղաքա-

կան սիստեմի վերացումով, վորն իր ծագումով կապված եր  
Ֆրանսիական հեղափոխության հետ: Նոր քաղաքականությունը  
սահմանեց Վիեննայի 1814 թ. կոնգրեսը: Ռազմական դեպքերի  
հետաքրքրությունը, բնականաբար, վեր եր ածվում հետաքրք-  
րության դեպի ներքին քաղաքականությունը, դեպի պետական  
կարգի և հեղափոխական պայքարի հարցերը: Ֆրանսիա վերադա-  
նալով Բուրբոններն ստիպված եյին տալ սահմանադրություն,  
վոր գոյություն ունեցավ մինչև 1830թ. դեպքերը: Լիբերալ  
խոսակցությունները պաշտոնապես թույլ եյին տրվում: Ֆրանսի-  
այից վերադարձած զորքերն իրենց հետ բերեցին նաև «հե-  
ղափոխական վարակը»: Լիցեյի մոտիկությունն արքունիքին  
դարձավ պատճառ միապետի լուսապսակից զրկվելուն, վորով-  
հետև լիցեյիստները տեղյակ եյին Ալեքսանդր I-ի և նրա  
մերձավոր շրջապատի մասին առաժվոր անհամեստ բնույթի  
բամբասանքներին: Պատերազմական ցնցումը և յերկրի նյու-  
թական գրության վատթարացումը սուր անբավականության և  
ներքին խմորման աղբյուր եյին հանդիսանում: Գաղտնի կազմա-  
կերպությունների յերևան գալը բնական հետեանք եր: Լիցեյը  
դրախց մեկուսացված չեր:

Յարսկոյեյի գնդի հուսարներին մեջ, վորոնց հետ կապված  
եր Պուշկինը, գտնվում եր Պ. Չապաևը, վոր Պուշկինի վրա  
առանձնահատուկ ազդեցություն թողեց: Լինելով քաղաքակա-  
նապես զարգացած, բարձր կուլտուրական մարդ, խիստ լիբե-  
րալ տրամադրվածությամբ, Չապաևը Պուշկինի հետ քաղա-  
քական գրույցներ եր ունենում և շատ նպաստեց նրա մտահո-  
րիտնի ընդարձակմանը: Պուշկինն իր ամբողջ կյանքում նրա  
նկատմամբ բարեկամական զգացմունքներ պահպանեց: Նրա  
առաջին քաղաքական վոտանավորներից մեկն ուղղված ե  
Չապաևին:

Լիցեյիստների զբաղմունքը պոեզիայով արասնայտվում եր  
ձեռագիր ժուռնալների հրատարակումով, վորոնց մի մասը հա-  
սի ե մեզ: Քաղաքական տեսակետից այդ ժուռնալները (վոր  
գնվում եյին դասատուների հսկողության տակ) հետաքրքրու-  
թուն չեն ներկայացնում, բայց նրանք վկայում են գրական  
մեծ կուլտուրայի գոյությունը լիցեյում: Այդ մանկական նմա-  
նդական գրվածքները շուտով հասնում են ժամանակակից  
պահանջյան մակարդակին, և արդեն 1814թ. լիցեյիստների  
աջև բացվում են տպագիր սրգանների եջերը: Լիցեյի բանաս-

տեղծները մեջ առաջին տեղը նախ պատկանում էր Իլլիչևսկուհուն, վորը տիրում էր վոտանավորի մեծ թեթևության և Ֆրանսերենից չափածո մանրունքներ էր թարգմանում: Բայց շուտով նա առաջին տեղը զիջեց Պուշկինին: Բացի նրանցից, վոտանավորներ էյին գրում Դելվիգը, Կուլսելեկերը և ավելի փոքր չափով մյուս լիցեյիստները: Պուշկինը գտնվում էր Ֆրանսիական գրականության ազդեցության տակ: Հրաշալի կերպով Ֆրանսերեն լեզվին տիրապետելու համար նրան «Ֆրանսիացի» անունն էլին տվել, մի բան, վոր նապոլեոնի հետ մղվող պատերազմի տարիներին բնավ պատվավոր մականունն չէր:

Նրա պոետական կարչերայի սկզբին ուսու բանաստեղծներից նրա վրա ամենամեծ ազդեցությունն էյին գործում Բառյուշկովը և Կարամզինի շուրջը խմբված գրողների ամբողջ խմբակը: Պուշկինը նրանց հետ կապված էր ընտանեկան հարաբերություններով: Նրանց խմբակին էր պատկանում հորեղբայրը, Վասիլի Լվովիչը: Պուշկինը լինում էր Կարամզինի տանը, վորն ապրում էր Յարսկոյե Սելոյում: Արդեն լիցեյական տարիներում նա ծանոթացավ Ժուկովսկու և Վլադիմիրսկու հետ: Այդ խմբակի ազդեցությունն առանձնապես արտահայտվեց Պուշկինի սեղծագործության վրա սկսած 1815թվից:

Պուշկինի լիցեյական գրական փառքը վերաբերում է 1814թ. յերբ նա մամուլում առաջին անգամ հանդես չեկավ, տպագրելով «Вестник Европы»-յի հուլիսյան համարում «К другу стихотворцу» վոտանավորը: Նրա հետևյալ գրական հաղթանակն էր ան, յերբ փոխադրական քննություններին (չեռամյա բարձր դասըթացին անցնելու ժամանակ) Պուշկինը կարգաց «Воспоминания в Царском Селе» հայրենասիրական ներբողը (ողան), գրված հանդիսավոր լիրիկայի բարձր վոճով, վոր պատերազմի շրջանում հաստատվեց պոեզիայում և գրական տրագիգիայով հանում էր XVIII դ. ներբողներին: Ընթերցումը տեղի ունեցավ 1815թ. հունվարի 8-ին: Քննությունը ներկաների մեջ էր զառամյլ Դերժավինը, վորն ուղղվեց յերիտասարդ բանաստեղծի յերկր: Այդ տարվա վերջին Պուշկինը ներգրավվեց կարամզինականների և հին ուղղության բանաստեղծների գրական պայքարի մեջ:

Լիցեյում մնալու ժամկետը վերջացավ 1817թ. ամռան. ավարտական քննությունները տեղի ունեցան հունիսի 9-ի, յերբ Պուշկինը կարգաց պատվերով գրած «Безверие» վոտանավորը:

Լիցեյն ավարտելուց հետո Պուշկինը նշանակվեց տաշտոնի արտաքին գործոց կոլլեգիայում: Այդ հիմնարկությունը, վոր հետագայում (1832թ.) վերակազմվեց արտաքին գործոց մինիստրություն, աչքի էր ընկնում աշխատակիցների առանձնահատուկ ընտրությամբ. ընդունվելու համար բարձր կրթական ցենզ էր պահանջվում: Նրա ծառայողների կազմը գրականապես տարբերվում էր Պետերբուրգի մյուս հիմնարկների չինովնիկական միջավայրից: Պուշկինի պաշտոնակիցների մեջ մեծ գրտնում էնք Գրիբոյեդովին:

Ծառայության մտնելուց մի ամիս հետո Պուշկինն արգեն մինչև սեպտեմբեր արձակուրդ ստացավ և մոտ յերկու ամիս անցկացրեց Միխայլովսկոյեում իր մոր Պսկովյան կալվածքում: Հետո Պուշկինը յերեք տարի, համարյա առանց դուրս գալու մնաց Պետերբուրգում (չհաշվելով 1819 թ. ամռանը Միխայլովսկոյե գնալը):

Լիցեյից հետո Պետերբուրգում անցկացրած տարիները Պուշկինն անց կացրեց գրական ուժեղ աշխատանքով: Լիցեյում յեղած վերջին մեկ և կես տարում նա իր գրվածքները ժուռնալներում տպագրելու հնարավորությունն չուներ: Լիցեյն ավարտելը նրա առաջ բաց արեց ժուռնալների եջերը: 1817թ. նա մի քանի վոտանավոր տպագրեց Չազոսկինի «Северный Наблюдатель» ժուռնալում: Ծիշտ է, այդ ժուռնալի դադարումով Պուշկինն համարյա դադարեց իր վոտանավորները տպագրելուց, բայց այդ ժամանակ նա զբաղված էր իր վոտանավորների ժողովածուն պատրաստելով: Նա մտադիր էր գրանք հրատարակելու առանձին գրքույկով: Այն ժամանակ նա գլխավորապես աշխատում էր «Ռուսլան և Լյուդմիրայի» վրա, վորն սկսել էր իր լիցեյական կյանքի վերջին տարին:

Լիցեյից դուրս գալուց հետո Պուշկինի առաջին տպավորությունները քաղաքական տպավորություններն էյին: Քաղաքական մտահորիզոնի ընդարձակմանը նպաստեց Նիկոլայ Տուրգենևի հետ ունեցած ծանոթությունը, վորը գյուղացիների ազատագրության բուռն կողմնակիցն էր, Չառդակի հետ, հաճախակի շփումն իր լիցեյական ընկեր Պուշկինի հետ, վորը մտել էր գաղտնի ընկերության մեջ, և լիբերալ սպայության

բազմաթիվ ներկայացուցիչներին հետ, վորոնց հետ Պուշկինը դեռ  
ևս լիցեյումն եր կայեր հաստատել:

Այս շրջանի հիմնական քաղաքական վոտանավորներն են՝  
«Ազատություն» — ը (1817), «Չաադակին» (1818), «Հեքլաթներ» — ը  
(1818) և «Գյուղը» — ը:

«Ազատություն» վոտանավորի քաղաքական իդեոլոգիան  
վկայում է խիստ չափավոր ազատամիտ գաղափարների ազդե-  
ցությունը Պուշկինի վրա, վոր ժամանակավորապես տիրեցին  
պրեմտյան հրապարակախոսության մեջ Բուրբոնների վերա-  
հաստատումից հետո: «Որինականության» (լեգիտիմիզմի) այդ  
քաղաքական սխտեմի տեսակետից ֆրանսիական հեղափոխու-  
թյունը հանդիսանում էր ազգի մոլորության և վայրենացման  
որինակ. հեղափոխական եկեղեցիները, բնականաբար, հանգեցին  
Նապոլեոնի բռնապետական ռազմական զիկտատուերային. միայն  
որինական դինաստիայի վերականգնումը, վորն հենց իր առա-  
ջին քայլերից ֆրանսիացիներին սահմանադրություն («խար-  
տիա») տվեց, յերկրի համար ապահովում է կարգ և ծաղկումն:  
Չափավոր սահմանադրություն միապետական սխտեմի հետ  
միասին՝ ահա լիբերալների այդ խմբակի իդեալը: Պուշկինը  
հայտարարում է վերացական «ազատության» համակցումը  
«հզոր որենքների» հետ: Այդ որենքը վեր է «ժողովրդից» և  
«թագավորներից»: Որենքի վոտանահարումը ցարի, ինչպես և  
ժողովրդի կողմից առելի չէ Պուշկինին: Ատելի յե Պուշկինին  
Նապոլեոնի «ինքնիշխան չարագործի» պատկերը:

Բնորոշ է Պուշկինի ազատամտությունը պատկերող մի  
գիծ — այդ Վոլտերով տարվելն է: «Անարդար» իշխանության  
(«неправедная власть») հիմքը նա համարում է «նախապաշար-  
մունքների» (предрасуждение) թանձրացլալ խավարը: 19-րդ  
դարի սկզբում «նախապաշարմունքներ» համարում էին յե-  
կեղեցական — կրոնական սխտեմը: «Ազատության» վերջին  
տողերում Պուշկինը լիակատար պարզորոշությամբ բաց է ա-  
նում այդ այլարանական ֆորմուլան, «գահի պատնեշների»  
թվում բանտերի կողքին զոհասեղանները (алтарь) դնելով:  
Պաշտոնական միստիցիզմի զարգացման, Բիրլիական ընկերու-  
թյան գործունեյության շրջանում, գոլիցինյան մինիստրության  
հաստատման տարում այս մոտիվը կենդանի արձագանք է հան-  
դիսանում շրջապատին, թեպես ըստ եյության, ինչպես և շա-  
բան «Ազատության» մեջ, արտահայտում էր XVIII դարի ֆրան-

սիական լուսավորականների տրամադրությունները:

Չաադակին ուղղված վոտանավորն, ինչպես և «Ազատու-  
թյուն» — ն սկսվում է՝ հանուն քաղաքացիական մոտիվների՝ սեր-  
յերգելուց հրաժարվելով: Ի տարբերություն քաղաքական ուս-  
մունքների արտոբախտ շարադրանքի, վոր ձենք գտնում ենք  
«Ազատություն» վոտանավորում, այստեղ արդեն խոսվում է  
ինչ վոր սպասելիքների մասին ուսուսական իրականության սահ-  
մաններում: Այդ սպասելիքները բավականաչափ անորոշ են, և  
հեղինակի քաղաքական ծրագիրը պարզ չէ: «Սուրբ ազատու-  
թյուն» — սա մի ֆորմուլա յեր, վորն ամեն մեկն իր ուղածի  
պես եր բաց անում: Բայց այստեղ այդ ազատությունը հա-  
մակցվում է ինքնիշխանության բեկորների հետ: «Ճակատագ-  
րական իշխանության ճնշում» — այս է շրջապատի բնութա-  
գիրը: Չպետք է գերազնահատել այս ուղերձի հեղափոխականու-  
թյունը, բայց չի կարելի նրա մեջ չտեսնել նաև գործողության,  
թեկուզ և անորոշ վոչ բավականաչափ պարզ գործողության  
կոչ: Նման վոտանավորները հրաշալի ազիտացիոն միջոց էին,  
վորովհետև հնարավորություն էին տալիս դնել նրանց մեջ  
ամեն տեսակի բովանդակություն:

«Հեքլաթներ» — ը (Noël) յերգիծարանական վոտանավոր է,  
ուղղված Ալեքսանդր I-ի դեմ: Այդ վոտանավորով Պուշկինն  
իրեն անջրպետում է պաշտոնական լիբերալիզմից: «Թագավոր-  
հայրը հեքլաթներ է պատմում» — այդպես են բնութագրված  
Ալեքսանդրի սահմանադրական խոստումները:

«Գյուղը», վոր գրված է Միխայլովսկոյի գյուղի յերկրորդ  
հաճախումից հետո, վերաբերում է ճորտատիրական իրավունքի  
հարցին: Վոտանավորը գրված է «դասեր ցարերին» — ի վոճով,  
վոր սովորական էլին դեռ ևս XVIII դ. գրականության մեջ:  
Պուշկինը խոսում է ճորտատիրության վերացման մասին, կար-  
ծես կառավարությանը գիմելով: Դա արդեն պրոպագանդա  
յե, ուղղված ռեֆորմ կատարելու իշխանությամբ սժտված ան-  
ձանց: «Ցարի նշանով» („по манию царя“) ֆորմուլան ցույց է  
տալիս, վոր վոտանավորը գրվել է այնպիսի պարագաներում,  
յերբ ճորտական ղրության վերացման մասին խոսակցություն-  
ները դեռ ևս պտտում էին կառավարական շրջաններում, յերբ  
Արակչեևի նախագծի տապալումը դեռ ևս կատարված փաստ  
չեր և յերբ տվյալ հարցի նկատմամբ ինքնակալության հե-  
աշխատակցելը հնարավոր էր թվում:

Իհարկեք, նման վտանավորներում բացահայտ ե ուղղիցիոն վողին, սակայն այս ուղղիցիան հեղափոխական չէ, թեպետ և հնարավորութունն է թույլ տալիս դաշնակցելու հեղափոխութեան հետ («Չառդակին»):

Իհարկեք, կառավարութեան մոտ Պուշկինի վատ համբավն ստեղծելու պատճառը Պուշկինի ծրագրի արմատականութունը (радикальность) չէր: Ուշադրութունն էյին գրավում ուղղիցիոն տրամադրութեամբ գրված բազմաթիվ եպիգրամներ, վորոնց վորոշելն անհնար է ներկայումս—Պուշկինի անունով շրջում էյին Ալեքսանդրի, Արակչեևի և ուրիշների դեմ ուղղված եպիգրամների ցիկլեր, սակայն վոչ բոլորը բնավ, ինչպես կարելի չէ յենթադրել, Պուշկինին ելին պատկանում:

Գաղտնի ընկերութուններն անդամների ձեռքին Պուշկինի վտանավորները դարձան գրական պրոպագանդաչի զենք: Նրանք ձեռագրերով տարածվեցին հսկայական չափով, մանավանդ սպայութեան մեջ, և Պուշկինի համար փառք էյին ստեղծում վոչ պակաս չափով, քան նրա մամուլում լույս տեսած յերկերը:

Այդ տարիներին Պուշկինը մեծ վողեվորութեամբ թատրոնն էր հաճախում: Իրաման, ուներան, բալետը հավասարապես գրավում էյին նրան: Այն ժամանակվա թատրոնը ինտենսիվ կյանք էր ապրում: Մոլեռանդ թատերասերները— իսկ դրանց թվին պատկանում էր Պետերբուրգի հաճարյա ամբողջ ազնվական յերիտասարդութունը— կազմեցին խմբակներ, կուսակցութուններ, վորոնք վորեք չափով արտացոլում ելին հասարակական խմբավորումները: Այդ ժամանակ թատերական պայքարը ամենից քիչ կրում էր ակադեմիական վեճերի ընույթ՝ մաքուր արվեստի և դրամատիկ յերկերի բեմական մարմնացման ձևերի մասին: Թատրոնը մի յուրատեսակ պարլամենտ էր, և շվոցներում ու ծափահարութուններում, թատերական յերեկուկներում, ժուռնալներում տարվող բանավեճերում արտահայտվում էյին բոլորովին վոչ թատերական համակրանքներ և հակակրանքներ:

Յերկու տարվա ընթացքում — 1818 և 1819— Պուշկինը տպագրեց միայն վեց վտանավոր: Հենց այդ տարիներին Պուշկինն ուժեղ թափով գրում էր «Ռուսլանն ու Լյուդմիլա»-ն:

«Ռուսլանն ու Լյուդմիլա»-ն մի վորոշ գրական դպրոցի պոեմա չէ: Իհարկեք, դա յերիտասարդ գրականութեան յերկ է, և ռեակցիոններ-քննադատներն իսկույն մարտահրավերն զգա-

ցին: Բայց կարամզինականները, վորոնց շրջանում Պուշկինն աճում էր, նույնպես այդ պոեմը լիովին իրենցը համարել չէյին կարող:

Պուշկինի անձնական հարաբերութունները նրան կապում էյին բազմաթիվ շրջանների հետ: Խորթ չեյին նրան և բարձր աշխարհի սալոնները, մասնավորապես նա իշխանուհի Գոլցիցինայի սալոնի յեռանդուն հաճախորդն էր: Նա շարունակ լինում էր Կարամզինի մոտ, վորն իր ընտանեկան և գրական կապերով աշխատում էր ղեկավարել յերիտասարդ Պուշկինին: Պուշկինն իր ժամանակը շարունակ անց՝ էր կացնում յերիտասարդ սպայութեան շրջանում: Քեֆերը, թղթախաղը և ամենաբազմադան բնույթի սիրային հրապուրանքները ծառայութեամբ շատ չծանրաբեռնված Պուշկինի ժամանակ անցկացնելու սովորական ձևն էյին հանդիսանում: Մայրաքաղաքի այդ ուրախ կյանքն ընդհատվում էր միայն հիվանդութուններով, մինչև վոր կտրվեց հանկարծակի հարավ աքսորվելով: Այդպիսի ապրելակերպը նրա համար բազմաթիվ բոպեյական բարեկամներ ստեղծեց, վորոնց շրջանում նա մոռանում էր իր հին լիցեյական ընկերներին:

Նա հպարտանում էր իր ուղղիցիոն քաղաքացիական բանաստեղծի դրութեամբ: Նրա մի քանի արտաուոց վարձուներն ուշադրութունն էյին գրավում հենց իրենց հոխորտալից բնույթով: Այսպես, որինակ, պատմում են, վոր Լուվելի ձեռքով Ֆրանսիական դահաժառանգ Կերրիի դքսի սպանվելուց հետո (1820թ. փետրվարի 13-ին) Պուշկինը թատրոնում ցույց էր տալիս Լուվելի նկարը «Թագավորներին դաս» մակագրութեամբ: Այդ արարքները, և, վոր գլխավորն է, եպիգրամները և «Ազատութուն» ողան իրենց վրա դարձրին կառավարութեան ուշադրութունը: Փոթորիկը մոտենում էր, Ալեքսանդր I-ը վճռեց Պուշկինի դատաստանը տեսնել և նրան աքսորել Սիբիր կամ Սոլովկի: Բայց Կարամզինի, Ժուկովսկու և մյուսների միջնորդութունների հետևանքով վորոշվեց Պուշկինին աքսորել Յեկատերինսկով, հարավային յերկրամասի կոլոնիստների գլխավոր հողաբարձու գեներալ Ինզովի արամադրութեան տակ: Մայիսի 6-ին Պուշկինն արդեն Պետերբուրգից պիտի մեկնել: Նա իր գործերն շտապ կարգի բերեց: «Ռուսլանն ու Լյուդմիլան» արդեն մամուլի տակ էր: Պուշկինը վորոշեց իր վտանավորների ժողովածուի տպագրութունն ապահովել, վոր ինքն

արդեն պատրաստել եր տպագրութեան համար: Այդ տպագրութեանը նա հանձնարարել եր իր բարեկամ Նիկիտա Վսեվոլոժսկուն: Բայց Պուշկինի մեկնելուց հետո ինչ վոր դժվարութեաններ առջացան և վոտանավորները ժողովածուն լույս չտեսավ:

### Հ Ա Ր Ա Վ Ո Ի Մ

(1820—1824)

Պուշկինը նախորոք գեներալ Ռաևսկու հետ, վորի վորդու հետ մտախի բարեկամներ եյին, պայմանավորվելով, վոր նրան ուղեկցելու չե Ղրիմ կատարելիք ճանապարհորդութեան ժամանակ մեկնեց Յեկատերինոսլավ: Հազիվ եր Պուշկինը Յեկատերինոսլավ հասել, վոր մրսեց և անկողին ընկավ: Ռաևսկին նրան հիվանդ տեսավ: Ինչովը հեշտութեամբ իրավունք տվեց Ղրիմ մեկնելու: Ռաևսկինը Պուշկինի հետ միասին նախ ուղեվորվեցին Կովկաս: Կովկասյան ջրերում նրանց սպասում եր Ռաևսկու ավագ վորդին՝ Ալեքսանդրը, վորին Պուշկինն հետագայում բնութագրեց և «Իեմոն» վոտանավորում: Կովկասյան ջրամուկներում (այժմյան Պյատիգորսկում) Պուշկինն անցկացրեց յերկու ամիս հունիսի 5-ից մինչև ոգոստոսի 5-ը, իսկ հետո Ռաևսկիների հետ միասին ուղեկորվեց Ղրիմ:

Ղրիմում անցկացրած յերեք շաբաթը Պուշկինը նվիրեց հանդատի և ընթերցանութեան և ըստ յերևույթին վոչ մի տեղ չեր գնում: Իր հանգիստը հարավում նա անցկացրեց Ռաևսկու հետ քաղաքական նորութեաններ քննելով, վորոնց նկատմամբ Պուշկինը— քաղաքական աքսորյալ— պետք ե առանձին ուշադրութեամբ վերաբերվեր:

Հեղափոխականների հաղթանակն Իսպանիայում և Իտալիայում հուլիս եր տալիս, վոր այս անգամ ուսկցոն ուժերը կպարտվեն: Քաղաքական ազատութեան մտախիները Պուշկինի համար առաջնակարգ նշանակութեան ունեցին, ինչպես վոր այդ մասին նա հայտարարեց իր «Կովկասյան դերի» պոեմում, վորի հերոսը վորոչ չափով արտացոլում եր իր՝ Պուշկինի տրամադրութեանները: Բայց նոր տպավորութեանները ազդեցութեան տակ քաղաքական ազատութեան ֆորմուլան այլևս այն չեր: Նա վերջնականապես նոր բովանդակութեան ստացավ ավելի ուշ, յերբ Պուշկինը Քիշինեում և Կամենկայում ընկավ Հարա-

վի գաղտնի ընկերութեան քաղաքական ծրագրով համախմբված մարդկանց շրջանը:

Քիշինեում Պուշկինն ապրեց համարյա յերեք տարի, մինչև 1823թ. հուլիսը: Ծառայութեան մեջ Ինչովը նրան շատ չեր նեղում: Ժամանակակիցների հիշողութեանները վկայում են, վոր Ինչովը դեպի Պուշկինը նահապետական վերաբերմունք ուներ: Պուշկինի բազմաթիվ զանցանքները, նրա գծաութեաններն ու մենամարտերը վերջանում եյին կամ Ինչովի հորդորանքներով կամ տնային բանտարկութեամբ, վորի ժամանակ Ինչովը գալիս եր զրուցելու մեղապարտ Պուշկինի հետ:

Կամենկա կատարած իր ուղեկորութեանների ժամանակ Պուշկինը լինում եր Հարավային գաղտնի ընկերութեան գործիչների շրջանում: Այսպիսով հարավում Պուշկինը մոտուց ծանոթացավ դեկաբրիստների հետ. նա ի միջիայլոց ծանոթ եր նաև Պեստելի հետ, վորին հանդիպում եր Քիշինեում 1821 թվի գարնանը:

Պուշկինի Քիշինեում յերած ժամանակ քաղաքական գրութեանը լարված եր: 1820թ. ոգոստոսին Փարիզում բացվեց զինվորական դավադրութեան, հենց նույն ոգոստոսին ել Պորտուգալիայում տեղի ունեցան անկարգութեաններ:

Քաղաքական այս բոլոր փաստերն այս կամ այն չափով արտացոլվեցին Պուշկինի յերկերում: Ռեակցիոն կառավարութեանների դեմ հեղափոխական խմբավորումների մղած պայքարին Պուշկինն հետևում եր խիստ լարվածութեամբ, և Քիշինեում անցկացրած տարիները նրա համար քաղաքական աճման տարիներ եյին:

Հարավում Պուշկինի կարգացած գրվածքների մեջ աչքի ընկնող տեղ են գրավում Ռուսոյի յերկերը: Ռուսոյի գաղափարները յեվրոպական քաղաքակրթութեան և յեվրոպական «լուսավորութեան» արատավորութեան մասին տանում եյին դեպի սոցիալական վերանորոգութեան անհրաժեշտութեանը: Այդ գաղափարներն ընդունել եյին ֆրանսիական հեղափոխականների ձախ թևը, յակոբյանները և բնականաբար մոտ եյին Հարավային գաղտնի ընկերութեան ռազիկալ գործիչներին, վորոնք հետևում եյին հանրապետական համոզմունքների: Պատմական իրադրութեանը Պուշկինին մղում եր այդ ուղիով: Բուրբոնների վերականգնումից հետո Յեվրոպայում հաստատված սահմանադրական կարգը 20-ական թվականների հեղափոխական շարժումների

հանդեպ յերևան բերեց իր անկայունությունը: «Որինականության» («Լեգիտիմիզմի») դադարը խախտվեց: Սոցիալական հակասություններն սկսեցին գրավել Պուշկինի ուշադրությունը, վորը գեռ ևս իր համար չէր պարզել դրանց պատմական պատճառները և այդ պրոբլեմների լուծումը վորոնում եր Բայրոնի բանաստեղծական ուսսոխումի վորով: Ըստ վորում Բայրոնի որինակը, վորն ուղեորվել եր Հունաստան տաճիկների դեմ վարած հույների պատերազմին մասնակցելու համար, անմիջակաճորեն աղղեց Պուշկինի վրա: Նա յերազում եր Ռուսաստանից հույների մոտ վախճելու մասին:

1823թ. Պուշկինը, կորցնելով Պետերբուրգ վերադառնալու ամեն մի հույս, բարեկամների հոգացողությունների շնորհիվ, տեղափոխվեց յեվրոպական Ողեսսա ծառայություն:

Պուշկինի նոր պետն եր կոմս Վորոնցովը, վոր 1823թ. հակայական լիազորություններով նշանակվել եր Նովորոսիյսկի գեներալ—նահանգապետ: Անգլոման, իր սովորություններով և դիրքով վեմոճա, Վորոնցովն իր վերաբերմունքին դեպի աքսորյալ Պուշկինը տվեց խիստ պաշտոնական բնույթ, վոր վոչնչով չէր հիշեցնում ինզովի վերաբերմունքը: Վորոնցովը պահանջում եր ակնածանք: Պուշկինի բանաստեղծական տաղանդը նա չէր գնահատում. դա փոքրիկ ընդհարումների առիթ տվեց: Պուշկինը գրում եր եպիգրամներ, վորոնք հասնում եյին Վորոնցովի ձեռքը և նրան կատաղեցնում: Պետերբուրգի իշխանավորներին գրած իր նամակներում Վորոնցովն իր անբավակասություններն եր հայտնում Պուշկինի իր մոտ լինելու առթիվ, և խզումն անխուսափելի եր:

Կյանքի նյութական հանգամանքներն Ողեսսայում Պուշկինի համար կատարելապես պարզեցին, վոր նա պրոֆեսիոնալ գրող ե: Մինչև այդ գրական հոնորարները միայն կողմնակի յեկամուտ եյին և Պուշկինն ապրում եր ուճիկով և հոր տված միջոցներով: «Ռուսլան և Լյուդմիլա» և «Կովկասյան գերի» առաջին պոեմները, վոր հրատարակել եր դրամական տեսակետից վոչ այնքան բժախնդիր Գնեդիչը, համարյա վոչինչ չափին: Քիրշինում, վորտեղ ծախսելու տեղ չկար, Պուշկինը աղքատիկ միջոցներով բավականանում եր: Ողեսսայում, վորտեղ գայթակզությունն ավելի եր, իսկ հայրը դադարեց նրան դրամ ուղարկելուց, հեղինակային հոնորարը դարձավ նրա գոյություն գլխավոր նյութական բազան: Պուշկինը գեռ ևս մեծ յեկամուտներ

չէր ստանում, բայց պարզվեց, վոր այդ յեկամուտներն ունենալն հնարավոր ե: Պուշկինի Ողեսսայում յեղած ժամանակ լույս տեսավ «Բախչիսարայի շատրվանը» վոր հրատարակեց Վյագեմսկին և զգալի յեկամուտ տվեց. այն բարձր հոնորարը (3000 ռ.), վոր Պուշկինն ստացավ, մի նշանակալից դեպք եր ուսական գրքային գործում և նույնիսկ, այդ տեսակետից, մամուլում քննություն առնվեց: Հրատարակչներից Պուշկինն սկսեց ձեռնուտ առաջարկություններ ստանալ: Պուշկինն իր տեսակետը լիովին բացատրեց Վորոնցովի գրասենյակի կառավարչին՝ Կազնաչեկին գրած նամակում, վոր նա գրեց ծառայությունից հեռանալու որերին: «Չկարծեք, վոր յես վոտանավոր գրելու վրա նայում եյի հանգեր թխողի մանկական փառասիրությունը կամ վորպես զգայուն մարդու հանգստի վրա: Դա պարզապես իմ արհեստն ե, ազնիվ արդյունաբերության մի ճյուղը, վորն ինձ ապրուստ և տնային անկախություն ե տալիս: Ինձ կասեն, վոր 700 ռ. ստանալով, յես պարտավոր եմ ծառայել: Դուք գիտեք, վոր միայն Մոսկվայում կամ Պետերբուրգում կարելի ե գրքի առևտուր անել, վորովհետև միայն այնտեղ են գտնվում ժողովուրդները, ցենզորները և գրավաճառները. յես ամեն ըրպե պետք ե հրաժարվեմ ամենաշահավետ առաջարկություններից միմիայն այն պատճառով, վոր մայրաքաղաքներից 2000 վերստ հեռավորություն վրա յեմ գտնվում: Կառավարությունն ուզում ե վորոչ կերպ փոխատուցել իմ կորուստները, յես այդ 700 ռ. ընդունում եմ վոչ վորպես աստիճանավորի ուճիկ, այլ վորպես աքսորյալ կալանավորի որապահիկ»:

Բնական ե, վոր ծառայության վերաբերմամբ այդպիսի հայացքներ ունենալով, նա Վորոնցովի մոտ յերկար մնալ չէր կարող: Յեվ 1824թ. սկզբից Վորոնցովի նամակներում Պուշկինի նկատմամբ ջղայնություն և զգացվում: Արդեն ապրիլի սկզբին Պուշկինի հեռացումը կանխորոշված եր: Հետագա դեպքերը միայն սրեցին դրությունը: Մայիսի վերջին Պուշկինին գործուղեցին մորելի դեմ պաշտարելու, այդ գործուղումը նա համարեց վիրավորանք, ընդունելով այն, վորպես դիտավորյալ վիրավորանք: Գործուղումից վերադառնալով, նա հրաժարական ներկայացրեց: Միաժամանակ վոստիկանությունը ըռնել եր Պուշկինի մի նամակը, վորտեղ նա գրում եր: «Չուտ աֆեյիզմի (այսինքն՝ աթեյիզմի) դասեր եմ առնում»: Այս նամակը վճռեց գործը: Ալեքսանդր կայսեր կարգադրությամբ Պուշկինն աքսորվում եր

Միխայլովսկոյե, իր ծնողներէ կալվածքը, քաղաքացիական և հոգևոր իշխանութեանց հսկողութեան տակ: Անաստվածութեանը հավասարեցնուած եր պետական հանցագործութեան: Այս անգամ արդեն արքայը վոչնչով չէր սքողված: Պուշկինը փորձեց փախչել արտասահման (այդ բանում նրան ողնում էր Վյադեմսկայան), բայց դրանից վոչինչ դուրս չեկավ: Ողեսայից նա մեկնեց հուլիսի 30-ին և վոչ մի տեղ կանգ չառնելով, ոգոստոսի 9-ին յեկավ Միխայլովսկոյե:

### ՄԻԽԱՅԼՈՎՍԿՈՅԵ

(1824—1826)

Պուշկինի ընտանիքն այդ ժամանակ գտնվում էր Միխայլովսկոյեում: Հայրն իր վրա ընդունեց վորդուն հսկելու վստիկանական պարտականութեանները: Դա առաջացրեց ընտանեկան ծանր ընդհարումներ, վորոնց հետեանքով հայրը մեկնեց:

Ընտանիքի մեկնելուց հետո Պուշկինի կյանքը խուլ գյուղում ընթանում էր հանգիստ, առանց առանձին դեպքերի: Պուշկինի ամբողջ ժամանցը կազմում էին գրոսանքները, հարեան Տրիգորսկի կալվածքն հաճախելը: Ինչպես է, վոր Միխայլովսկոյեում առանձնանալը ուժեղ ստեղծագործութեան և ուսումնասիրութեանների ժամանակ էր: Յեթե Պուշկինը դեռ ևս Քիշինկոում տեսավ «լուսավորութեամբ դարին հավասար լինելու» անհրաժեշտութեանը, ապա այնուամենայնիվ հաղիվ թե սխալ էր վորոնցովը, հայտարարելով, թե՝ «Նա պետք է յերկար կարգա և սովորի»: Միխայլովսկոյեում Պուշկինը, վերջապես, ազատ ժամանակ գտավ: Այն ինչ նրա սեփական գրական բախտը տանում էր դեպի իր բանաստեղծական ստեղծագործութեան ճիշտիմաստավորման անհրաժեշտութեանը, վոր առանց թեորեաիկ զբաղմունքների հնարավոր չէր: Պուշկինը մեկնում էր հարավ դեռ ևս իրեն նշանակալից վոչ մի բանով ցույց չտված: Բայց արդեն «Ռուսլան և Լյուդմիլա»-յի յերևան գալը ժողովաբանութեամբ առաջ բերեց կատարի բանավեճ մի կողմից «Вестник Европы» ամսագրի քննադատների, վորոնք խիստ կերպով հարձակվում էին հեղինակի վրա նրա թեթևամտութեան, կողտութեան, կլասիկ հնութեան նկատմամբ ունեցած անակնածելի վերաբերմունքի համար, և մյուս կողմից յերիտասարդութեան միջև, վորը շեք-

մորեն վողջունում էր պոեման: «Կովկասի գերին» արդեն միայն դրական կարծիքների հանդիպեց և հսկայական թվով նամանողութեաններ առաջացրեց:

Անհրաժեշտ է հաշիւ առնել, վոր Միխայլովսկոյեում Պուշկինի հասարակական-քաղաքական համոզմունքները խորը վերակառուցման յենթարկվեցին: Նրա հեղափոխական հայացքները կազմվեցին նրան շրջապատող Հարավային գաղտնի ընկերութեան անդամների անմիջական ազդեցութեան և Արևմուտքում շարունակ աճող հեղափոխական շարժման տպավորութեան տակ: Բայց արդեն Ողեսայում գաղտնի ընկերութեան ազդեցութեանը դադարեց: Յեվրոպայում հաղթանակեց ռեակցիան, և հեղափոխական շարժումները ճնշվեցին: Պուշկինի անձնական ճակատագիրն էլ նպաստում էր հիասթափմանն ու սկեսպտիցիզմին: Դեռ ևս Ողեսայում Պուշկինը քաղաքական հիասթափութեան նշաններ էր ցուցաբերում (տես, «Свободы сеятель пустынный» վոտանավորը): Միխայլովսկոյեում նա իրեն ավելի ևս զինաթափված էր զգում և ավելի քիչ էր հավատում հեղափոխական պայքարի հաջողութեանը:

Միխայլովսկոյե Պուշկինը բերեց «Յեզենի Ոնեգինի» յերկու գլուխը: Միխայլովսկոյեում ապրելու ընթացքում նա գրեց ևս չորս գլուխ: Այսպիսով «Յեվգենի Ոնեգինը» «Բորիս Գոդունովի» հետ միասին հանդիսանում են Պուշկինի գլխավոր ստեղծագործական աշխատանքը Միխայլովսկոյեում: Այդ տարիների ընթացքում վեպի պլանը խիստ փոխվեց: Փոխանակ ուսական հասարակութեան սատիրական պատկերի, վոր մասամբ տրված է առաջին գլխում, վեպն անցավ կալվածատիրական կյանքի կենցաղային ռեալիստական պատկերների նկարագրութեան:

Հենց Միխայլովսկոյեում ավարտվեց վերջին «հարավային պոեման», վոր սկսված էր Ողեսայում՝ «Գնչուները»: Նրա մեջ Պուշկինն ամփոփում է քսանական թվականների առաջին կիսի իր տրամադրութեանները և դրանով բաժանվում նրանցից: «Յեվգենի Ոնեգինը» զարգանում էր բոլորովին նոր պլանով: Ընդհանրապես Միխայլովսկոյեում լեղած ժամանակը— հանրագումարների ժամանակ է. Պուշկինն այստեղ սկսեց գրել իր հիշողութեանները, վոր 1825թ. դեպքերից հետո վոչնչացվեցին: Այնտեղ նա պատրաստեց իր վոտանավորների առաջին ժողովածուն և տվեց իր վերիկայի տասը տարվա հանրագումարը:

Միխայլովսկոյեում գրած վերջին մեծ յերկը «Կոմս Նուլին» գվարձալի պոեմն է: Նա թվագրած է 13 դեկտեմբերի 1825թ.:

Հետևյալ որը Պետերբուրգում տեղի ունեցավ ապստամբու-  
թյուն, վոր ճնշվեց Նիկոլայ I գործերով:

Պուշկինի վրա շատ ծանր անդրադարձավ գաղտնի ընկե-  
րությունների ջախջախումը, վոր տեղի ունեցավ դրանից հետո:  
Ձերբակալվածների մեջ էլին Պուշկինի շատ բարեկամները. նրա  
լիցեյական ընկերները՝ Պուշչինն ու Կյուսիելբեկերը, յերկու  
Ռասկոլնիկները (յերկուսն էլ, սակայն, շուտով ազատվեցին),  
Բեստուժերը, Ռիլեկը և շատ ուրիշները:

Պուշկինը, վոր հեռու մնաց դավադրությունից և դատաս-  
տանից, հուշս ուներ, վոր իր վիճակը կփոխվի: Բայց միաժա-  
մանակ նա ուզում էր պահպանել գործողությունների և համոզ-  
մունքների ազատություն: «Վճռականորեն ասում եմ ձեզ, վոր  
ինձ համար պատասխանատու չլինեք և չյերաշխարհեք»,—  
գրում էր նա Ժուկովսկուն դեկաբրիստների վերաբերմամբ սկզբ-  
ված հետաքննության առթիվ: Տեսնելով, վոր իր դրության  
մեջ փոփոխություն չկա, նա 1826թ. մարտի 3-ին գրում է  
Պլետնյովին. «Թող ինձ թույլ տան թողնել անիծյալ Միխայլովս-  
կոյին: Հարց ե. անմեղ եմ չես, թե վոչ. բայց յերկու դեպ-  
քումն էլ չես վաղուց պիտի Պետերբուրգում լինեյի: Ահա թե  
ինչ է նշանակում լինել հավատարիմ հպատակ. կմոռանան և  
քվիթ»: Մի քանի որ հետո նա Ժուկովսկուն գրում է պաշտոնա-  
կան նամակ այն նպատակով, վորպեսզի նա ցույց տա այն ում  
վոր հարկն է. «Գուցե նորին մեծությունը կցանկանա փոխել  
իմ վիճակը: Ինչպիսին էլ վոր լինի իմ քաղաքական և կրոնա-  
կան մտածելակերպը, յես այն պահում եմ ինձ համար և մտա-  
դիբ չեմ խելացնորությամբ հակառակելու ընդհանուրի կողմից  
ընդունված կարգին ու անհրաժեշտությանը»: Այսպիսի արտա-  
հայտություններով էր Պուշկինը պայմանավորվում Նիկոլայ I-ի  
կառավարության հետ: Նա ընդունում է նրա հաղթանակը և  
պարտավորություն վերցնում զենքը ցած դնել, բայց նախկին  
մտածելակերպից չի հրաժարվում:

Այն ինչ դեպքերը բոլորովին այնպես չեցին զարգանում,  
ինչպես Պուշկինն իրեն պատկերացնում էր: Ժուկովսկին նրան  
գրում էր. «Իու վոչ մի բանում խառնված չես—դա ձիշտ է,  
Բայց գործողներից ամեն մեկի թղթերում քո վոտա-  
նավորներն են գտնվում: Դա կառավարությանհետ բարեկամա-  
նալու վատ ձև է»: Յեվ Նիկոլայի կառավարությունը, գիտե-  
նալով, վոր Պուշկինը թշնամիների թվումն էր, միանգամից

չվորոշեց, թե նրան ինչ ձևով զինաթափ անի՝ պատժելու, թե՞  
ներման միջոցով:

Սեպտեմբերին Պուշկինը ֆելդցեդերով ուղարկվեց Մոսկվա  
Նիկոլայ I-ի հետ տեսակցելու:

#### ՔՍԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՁԸ

Դեկաբրիստների դատավճիռն ի կատար ածվեց 1826թ.  
հուլիսի 13-ին: Հինգ մարդ բարձրացվեցին կախաղան, մնա-  
ցածներն աքսորվեցին կամ աստիճանադրվեցին և զինվոր ու-  
ղարկվեցին: Պուշկինը գրում էր Վյազմսկուն. «Կախվածները  
կախված են, բայց 120 բարեկամների, յերաջրների, ընկեր-  
ների տաժանակիր աշխատանքը սոսկալի չե»: Պուշկինն իր նա-  
մակներում զուսպ էր, լավ հիշելով, վոր իր աքսորի առիթն իր  
անդգուշ նամակի բացումն էր վոստիկանության կողմից: Վյա-  
զմսկին այնքան զուսպ չեր և գրում էր կնոջը. «Ինձ համար  
Ռուսաստանն այժմ պղծված է, արյունոտված. յես այնտեղ  
խեղդվում եմ, անտանելի չե»: Կատարված մահապատժի, բարե-  
կամների, յերաջրների, ընկերների աքսորի միտքը Պուշկինից  
չեր հեռանում: Չգալով դեկաբրիստների հետ ունեցած կապը,  
նա իր պարտքն էր համարում նրանցից չհրաժարվել և ամեն  
կերպ ոժանդակել նրանց ազատվելուն: Այդպիսի տրամադրու-  
թյամբ նա թողեց Միխայլովսկոյին: Այդ ժամանակ Մոսկվա-  
յում թագադրության առթիվ հանդեսներ էլին տեղի ունենում:  
Թագադրության առթիվ հրատարակված մանիֆեստը «վոդորմա-  
ծություններով» չտարածվեց դատապարտված դեկաբրիստների  
վրա: Պուշկինը Մոսկվա յեկավ սեպտեմբերի 8-ին և նույն օրն էլ  
ներկայացվեց Նիկոլայ I-ին: Այդ տեսակցության վոչ մի ման-  
րամասնություն չի մնացել: Արդյունքներն հետևյալներն էլին.  
Պուշկինը տեղափոխությունների ազատություն էր ստանում.  
այնուհետև նրա յերկերը ներկայացվում էին իրեն Նիկոլայ  
I-ին՝ թույլատվության, իսկ միջնորդ նշանակվում էր Ժանդարմ-  
ների շեֆ Բենկենդորֆը:

Սակայն հենց առաջին քայլերից Պուշկինը մի քանի հիաս-  
թափություններ ապրեց: Սեպտեմբերին գործ ծագեց «Անդրե Շե-  
նյե»-ից վոտանավորները ձեռագրերով տարածելու մասին, վո-  
րոնք մեկնաբանվեցին վորպես վոտանավորներ դեկտեմբերի 14-ի  
մասին: Պուշկինին հարցաքննում և պահանջում էլին բացատ-

ըրություն: Այդ գործը շարունակվեց 1828 թվին և անցնելով բոլոր ինստանցիաները մինչև սենատն ու Պետական խորհուրդը, վերջացավ 1828թ. հուլիսին՝ Պուշկինի վրա գաղտնի վոստիկանական հսկողութիւն սահմանելով և նրանից ստորագրութիւն առնելով, վոր մինչև ցենզուրայի քննելը նա իր գրվածքները ձեռագրով վոչ վորքի չպիտի հայտնի:

Պուշկինի վերաբերմամբ կառավարութեան վարած քաղաքականութիւնը թելադրվում էր նրան իր կողմը գրավելու և վորպես արքունական գաղափարների մունետիկ գործածելու ձգտումով: 1827թ. հուլիսի 12-ին Բենկենդորֆը գրում էր Նիկոլայ I-ին. «Պուշկինը - բավական մեծ դատարկապորտ է, բայց յեթե հաջողվի նրա գրչին և նրա խոսակցութիւններին ուղղութիւն տալ, դրանով մենք անմիջական շահ կունենանք»: Բենկենդորֆը Պուշկինի համար Բուլգարինի դերն էր պատրաստում:

1827թ. առաջին կեսը Պուշկինն անցկացրեց Մոսկվայում, իսկ մայիսին իրավունք ստացավ Պետերբուրգ գնալու: Այստեղ նա ապրեց մինչև 1828թ. հոկտեմբեր ամիսը, վորից հետո յերկու ամսով վերադարձավ Մոսկվա:

Նորից սկսվեց քաղաքի անկանոն կյանքը: Աշխարհիկ ժամանցները, թղթախաղը, նոր հրապուլցները Պուշկինին կանոնավոր աշխատանքից հեռ էյին պահում: Այդ տարիներին Պուշկինն արդեն մտածում էր ընտանեկան կյանք կառուցելու մասին: 1828թ. է վերաբերում Աննա Ուենինայի, գեղարվեստների Ակադեմիայի նախագահի և դրական մեկենասի դաստեր հետ ամուսնանալու փորձը: Այդ փորձը խանգարվեց հենց իրեն Պուշկինի մեջքով:

Այդ տարիներին լույս տեսան «Գնչուները», «Ավագակ յեղբայրները», «Յեվգենի Ունեգինի» առաջին վեց գլուխը, վոր առանձին պրակներով լույս էյին տեսնում 1825թ. սկսած, «Կոմս Նուլինը»: Ամսագրերի գրական քննադատութիւնը համակրանքով էր դիմավորում Պուշկինի նոր յերկերը:

Այդ տարիներին Պուշկինը շարունակում էր գրել «Յեվգենի Ունեգինը», իսկ այդ ժամանակվա խոշոր յերկերից պիտի հիշատակել «Պետրոս Մեծի խափշիկը» անավարտ վեպը, գրած Վայլտեր Սկոտի ստիլով, և «Պուտավա» պոեմը, վոր գրվեց կարճ ժամանակում՝ 1828թ. հոկտեմբերին: Յերկու գրվածքներումն էլ առաջադրվում է Պետրոսի թեման: Վեպում Պուշկինն ուղղում էր գծագրել Պետրոսի ռեֆորմատորական գործունեյութիւնը և վոր-

պես հերոս ընտրեց իր նախնիք Հաննիբալին: «Պուտավայում» նա շոշափում է Պետրոսի ռազմական պատմութիւնը: Թե մեկ և թե մյուս յերկում Պուշկինը, զիջելով գրական տրադիցիային, սյուժեին զարգացնում է սիրային պատմութիւն մտցնելու միջոցով: Հաննիբալի ամուսնութիւնը և Մարիա (Մարյոնա) Կոչուբեյի սերը Մադեպայի հանդեպ: Յերկու դեպքումն էլ սիրային պատմութիւնը պատմական փաստերի վրա չեն հիմնված: Հաննիբալի պատմութիւնն ընդհանրապես հնարված է սկզբից մինչև վերջ, իսկ Մադեպայի և Մարիայի հարաբերութիւնը բոլորովին այնպես չի պատկերացված, ինչպես վոր այն յեղել է իրականութեան մեջ: Բայց սիրային տարրը զիջում էր տրադիցիային: Յեվ մեկ և մյուս դեպքում գլխավոր թեման Պետրոսի ժամանակվա պատմական դեպքերն են:

«Պուտավան» լույս տեսավ 1829թ. մարտին: Քննադատութիւնն այն բոլորովին էլ այնպիսի հիացմունքով չընդունեց, ինչպես Պուշկինի նախկին պոեմները: Ճիշտ է Ն. Պուլեյի «Московский Телеграф»-ի եջերում քննվում էր վորպես Պուշկինի ամենակատարյալ ստեղծագործութիւնը, բայց «Сын отечества»-յում լույս տեսած կարծիքը խիստ զուսպ էր, իսկ «Вестник Европы»-յում Նադեժդինն հանդես յեկավ ծաղրով լի մի հոգիվածով: Ավելին վաղ նպաստավոր էյին կարծիքները «Կոմս Նուլինի» մասին, վոր լույս տեսավ առանձին հրատարակութեամբ: Պատմվածքն հայտարարվեց անբովանդակ և անբարոյական:

Յերը Պուշկինը գրում էր «Պուտավան», սկսվեց մի նոր գործ, վոր Պուշկինին շատ տհաճութիւններ պատճառեց: Կառավարութեան ձեռքն հասավ «Գավրիլիադան», և սկսվեց այդ «անաստված պոեմի» հեղինակի վորոնումը: Սկսվեց հետաքրնութիւն, և ոգոստոսին ու հոկտեմբերին Պուշկինին հարցաքննեցին: Այդ գործի առթիվ Պուշկինն իր տված գրավոր բացատրութիւններում հրաժարվեց հեղինակութիւնից և վերջի վերջ գրեց ինչ վոր նամակ ուղղակի Նիկոլայ I-ին, վոր մնացել է անհայտ:

1830թ. կեսերին հասարակական-քաղաքական դրութիւնը խիստ փոխվեց: Հուլիսին Յրանսիայում տեղի ունեցավ հեղափոխութիւն, վորը վերացրեց Բուրբոնների ֆեոդալական-կղերական ռեժիմը և իշխանութիւնն հանձնեց խոշոր բուրժուազիայի

ձեռքը: Այդ հեղափոխութիւնն արձագանքեց Յեվրոպայի շատ  
յերկրներում:

Նիկոլայ I-ը յեվրոպական դեպքերից շատ վախեցավ և  
պատրաստվում էր խառնվել հոգուտ Բուլղարիաների տապալված  
ռեժիմի: Իրան խանգարեց լեհական ապստամբութիւնը, վոր  
պայթեց 1830թ. նոյեմբերի վերջին և առաջ բերեց յերկարատե  
պատերազմ, վորը վերջացավ միայն 1831թ. ոգոստոսի 21-ին:  
Նիկոլայի դորքերի հաղթանակով:

Նույն 1830թ. խոշոր փոփոխութիւն տեղի ունեցավ Պուշ-  
կինի անձնական կյանքում: Ապրիլին Պուշկինը առաջարկու-  
թիւն արեց Նատալիա Նիկոլայնա Գոնչարովային, և այս  
առաջարկութիւնն ընդունվեց: Ծիշտ է, Գոնչարովայի հարա-  
դատները Պուշկինից պահանջեցին պաշտոնական վկայական  
ներկայացնել Բենկենդորֆից, վոր ինքը վստիկանական հրս-  
կոդուկցան տակ չի գտնվում, և հետո սկսվեց յերկար բանակ-  
ցութիւններ նյութական ապահովության մասին: Այդ նպա-  
տակով հայրը Պուշկինին տվեց իր Նիժեգորոդսկի կալվածքի մի  
մասը՝ Կիստենսկա գյուղը, վոր Մերգեյ Նիկոլայիչին պատկա-  
նած Բուլղինո գյուղից հեռու չէր գտնվում: Նյութական գործերը  
կարգի բերելու և սեփականութիւնն ընդունելու համար Պուշ-  
կինը Մոսկվայից մեկնեց Բուլղինո 1830թ. սեպտեմբերի 1-ին:  
Մեկնելուց առաջ նա ընդհարվեց Գոնչարովայի մոր հետ, և  
ամուսնության հարցը նորից բաց մնաց:

### 1830 թ. ԱՇՈՒՆԸ ԲՈՒԳԻՆՈՅՈՒՄ

Աշուներ Պուշկինի համար միշտ ել առանձնապես լարված  
ստեղծագործության ժամանակ էր: Բուլղինոյի աշուներ, վոր գու-  
գազիպեց Պուշկինի նյարդային չափազանց լարված շրջանին,  
աչքի յե ընկնում բացառիկ բեղմնավորությամբ: Այդ յերեք  
ամսում գրած յերկերի ցուցակը միայն տալիս է նրա բացառիկ  
ստեղծագործական աշխատանքի պատկերացումը: «Կասեմ քեզ  
(վորպես գաղտնիք),—գրում էր Պլետնյովին Մոսկվա վերադառ-  
նալուց հետո,—վոր Բուլղինոյում յես գրում եյի այնպես, ինչ-  
պես վաղուց արդեն չեյի գրել: Ահա թե ինչ եմ բերել այստեղ-  
Ոնեգինի յերկու վերջին գլուխները, 8-րդն ու 9-րդը, տպագ-  
րության համար լիովին պատրաստ, մի քանի դրամատիկական  
պատկերներ կամ փոքրիկ վողբերգութիւններ, այն է՝ «Ժլատ

ասպետը», «Մոցարտն ու Սալյերին», «Նոնուլք ժանտախտի պա-  
հին» և «Դոն Ժուանը»: Բացի դրանից գրել եմ մոտ 30 մանր վոտա-  
նավորներ: Սա դեռ բոլորը չե (խիստ գաղտնի, միայն քեզ  
համար), յես գրել եմ արձակով հինգ պատմվածք...»: Պուշկինի  
ցուցակը դեռ լրիվ չի. նա թվում է միայն տպագրության հա-  
մար պատրաստ գործերը: Փաստորեն այդ ցուցակին պիտի  
ավելացնել անավարտ «Գորյուխին գյուղի պատմութիւնը», վոր  
հղացումով կապված է «Բեկինի պատմվածքների» հետ, «Ոնե-  
գինի» 10-րդ գլուխը, վոր այրվեց նույն Բուլղինոյում, և մեծ  
թվով հոգվածներ և դիտողութիւններ «Литературная газета»-ի  
համար, վորոնց թվում մի մեծ հոդված, վոր մնացել է սևագիր և հան-  
դիսանում է պատասխան վերջին տարիների իր քննադատներին:

Նման արտադրողականութիւնը կարելի է բացատրել մի-  
այն նրանով, վոր Բուլղինոյում Պուշկինը վերանայեց իր հին  
մտահղացումները և վերջնականապես մշակեց նախկին տարի-  
ների ուրվագծերը (ըստ յերևույթին, մանավանդ 1828 և 1829  
թ. թ.): Այսպիսով, Բուլղինոյի աշխատանքը հանրագումարային  
էր, վոր ավարտում էր շատ տարիների աշխատանքները:

Բուլղինոյան յերկերի մյուս ցիկլը, վոր նորութիւն էր  
Պուշկինի գրական սիստեմում, հանդիսանում են «Բեկինի  
պատմվածքները»: Մինչև 1830 թ. Պուշկինն արձակին քիչ  
էր դիմում, իսկ այստեղ նա միանգամից տվեց հինգ պատ-  
մվածք, վորպես նախաբան տալով յերևակայական պատմող Իվան  
Պետրովիչ Բեկինի ֆիկտիվ կենսագրութիւնը, վորը մի համեստ  
կալվածատեր էր և պարզասրտորեն գրել էր առել իր լսած՝ ուշադրու-  
թյան արժանի պատմվածքները: Պուշկինի այդ պատմվածքները  
աչքի են ընկնում ուսմանտիղմի հետքերի կատարյալ բացա-  
կալությամբ:

Բուլղինոյում Պուշկինն ավարտեց «Յեվգենի Ոնեգինը»:  
Յերկի յերկարատե ստեղծման ընթացքում այդ վեպի բնույթն  
ու պլանը խիստ փոփոխվում էր: Դեռ ևս վեցերորդ գլուխն  
ավարտելով Պուշկինը վեպի շարունակության պլանը բոլորովին  
այլ կերպ էր պատկերացնում, քան այն իրականացվեց:

Բուլղինոյան աշնան լիրիքական վոտանավորները ներդաշ-  
նակում են Պուշկինի ընդհանուր տրամադրությանը: Նրանք  
նույնպես հանրագումարային ընույթ են կրում, կարծես թե  
ամփոփում են վերջին տարիների նրա գրական աշխատանքի  
արդյունքները: Նրանց մեջ արտացոլվեցին ֆրանսիական,

անգլիական, իտալական գրականության ուսումնասիրությունը: Յերևում է, թե վերջին տարիներում Պուշկինը վորքան շատ է կարդացել և ուսումնասիրել: Բայց այդ ուսումնասիրությունը չէր տանում դեպի այն նմանողությունը, վոր մենք գտնում ենք նրա վաղ յերկերում:

Բոլդեինոյում ապրելը նաև մի արդյունք ունեցավ, վոր կարե-վոր է Պուշկինի հետագա կենսագրության համար: Այստեղ նա համոզվեց, վոր կալվածքը քայքայված է և լքված: Նա տեսավ, վոր իր ապագան կալվածքի հետ չի կապված: Նրան չէր հաջող-վի դառնալ կալվածատեր, ասենք նա այդ բանի համար կոչված էլ չէր: Բոլդեինոն յեկամուտ տալ չէր կարող: Պուշկինի ապագան այն էր, վոր նա «գրագետ էր և բանաստեղծ»: Բոլդեինոն իր համար ստեղծագործության վայր էր և վոչ թե կալվածատի-րական հոգսերի:

Բացի գեղարվեստական յերկերից Պուշկինը Բոլդեինոյում շատ քննադատական և հրապարակախոսական հոդվածներ է գրում, վորոնք նույնպես անցածի ամփոփման բնույթ ելին կրում: Իր հակառակորդներին պատասխանելով, Պուշկինը ավեց իր սեփական ստեղծագործության տեսությունը:

### ՅԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Մոսկվա վերադառնալուց հետո սկսվեցին հարսանիքի պատրաստությունները, վորը տեղի ունեցավ Մոսկվայում 1831 թ. փետրվարի 18-ին: Կնոջ ծնողների հետ միասին անց-կացրած կյանքը մշտական ընդհարումների առիթներ է տալիս, և Պուշկինն շտապում է նրանցից բաժանվել: Մայիսին նա տե-ղափոխվեց Յարսկոյե Սելո, վորտեղ անցկացրեց ամառը: Խո-չերայի հետևանքով, վոր այդ ժամանակ տարածված էր Պետեր-բուրգում, Պուշկինը մնում է այնտեղ և տեղափոխվում է Պե-տերբուրգ միայն հոկտեմբերին՝ խոլերան վերջանալուց հետո: Այդ ժամանակվանից Պուշկինն իր ընտանիքով հաստատվում է Պետերբուրգում:

Միաժամանակ Պուշկինը նշանակվում է ծառայության արտաքին գործոց կոլլեգիայում և գրանով իսկ Պետերբուրգում նրա մնալը դառնում է պարտադիր:

1831 թ. Յարսկոյե Սելոյում նա մտածում է գրելու Ֆրանսիական հեղափոխության պատմությունը և սկսում է

ուսումնասիրել Ֆրանսիական պատմաբաններին: Այդ սախում է նրան ուսումնասիրել յեվրոպական միջնագարը:

Այն ինչ նրա գրական գործերը բոլորովին ել փայլուն չե-յին: 1831 թ. սկզբին լույս տեսած «Բորիս Գոգոլուցվն» հաջո-ղություն չունեցավ: Այս շրջանի ամենանշանակալից գրական յերկերից պետք է հիշել նրա չափածո հեքյաթները, վոր նա գրում է առաջուց սկսած ուսական հեքյաթային դրամա «Հա վերժահարսի» վրա աշխատելուն զուգընթաց:

Պուշկինի հեքյաթները հանդիսանում են նրա յերկերի մի առանձին տեսակը, վորոշ չափով կապված «Արևմտյան սլավոն-ների յերգերի» հետ, վորոնք վերաբերում են նույն շրջանին: Պուշկինի հեքյաթներն իրենց առաջ խնդիր չեյին դնում բուն ուսական ժողովրդական հեքյաթների մշակումը: ուսական հեքյաթի վոճը պահպանելով, Պուշկինն ազատորեն դիմում էր արտասահմանյան աղբյուրներին, ըստ յերևույթին, ընդունելով, վոր հեքյաթը միջազգային է:

Պուշկինին գրավում էր ժողովրդական ստեղծագործության (Փոլկլորի) պարզ ու հասարակ վոճը, և վոչ թե նրա հարագա-տությունը: Ի միջի այլոց, հետաքրքիր է, վոր նա միաժամա-նակ գրագվում էր նաև ժողովրդական յերգեր հավաքելով:

1832 թ. Պուշկինն ավագակազմականի թեմայով սկսեց մի նոր վեպ գրել—«Դուբրովսկի»— մի դատական գործի նյու-թերի հիման վրա, վորի մեջ մի հարուստ կալվածատեր մի չքավոր կալվածատիրոջից անորինաբար խլում է նրա կալ-վածքը: Այն ժամանակ, յերբ նա աշխատում էր Դուբրովսկու վերջին եջերի վրա, նրա մեջ արդեն նախապատրաստվում էր մի նոր վեպի հղացում: Կանգ առնելով Պուշկինի մոտ ծառայող ազնվական Շվանվիչի պատմական ֆիգուրայի վրա, նա միտք հղացավ գրելու մի վեպ, առնված Պուշկինի ապստամբության պատմությունից: Հետաքրքրությունը դեպի գյուղացիական «բուհար» Պուշկինի մեջ ծագեց 1830 թ., յերբ նա ալանատես էր խոլերային խոտվություններին: Դրանք նրա վրա առանձին ապավորություն թողին: Բայց գուցե նրա ուշադրությունն ավելի մեծ չափով գրավեցին Նովգորոգի արակչեկյան զինվո-րական բնակավայրերում (военные поселения) տեղի ունեցած խոտվությունները, վորոնց ժամանակ կոտորվեցին սպաներ: 1831 թ. հոկտիսին կատարված այդ խոտվություններին մասնակ-ցեցին հարևան գյուղերի գյուղացիները: Գյուղացիական ապրս-

տամբուլ թյունների պատկերները և խորհրդածուլ թյունները ուս-  
կալվածատեր ազնվականության ճակատագրի մասին, պատմա-  
կան անալոգիաների կարգով՝ Պուշկինին մտովի փոխադրեցին  
1773—1775 թ.թ. պուգաչևյան շարժման դարաշրջանը, վորի  
հիշատակը դեռ ևս կենդանի չեր: Հենց այստեղ էլ նա գտավ իր  
հերոս-ազնվականին, վոր անցել էր ազնվականության թշնա-  
միների կողմը:

Թեմայի ընտրությունը բերեց Պուշկինին դարաշրջանի  
լուրջ ուսումնասիրության անհրաժեշտությանը. և արդեն  
1833 թ. փետրվարին նա դիմեց զինվորական միսիստը Չերնի-  
շևին, խնդրելով թույլ տալ իրեն ոգտվելու Պուգաչևի մասին  
յեղած արխիվային նյութերից, պատճառաբանելով, թե մտադիր  
է գրել Սուվորովի պատմությունը, վոր մասնակցում էր Պու-  
գաչևի ապստամբության ճնշելուն: Ըստ յերկույթին, արդեն  
առաջին քայլերից Պուշկինի մեջ միտք հղացավ, վեպից բացի, գրել  
նաև Պուգաչևի շարժման պատմական հետադոտությունը: Նա  
ձեռնարկեց «Պուգաչևի պատմությունը», վորը մայիսին բավա-  
կանին առաջ էր գնացել: Հուլիսին նա վորոշեց մեկնել պուգա-  
չևչինայի տեղը և չորս ամսով արձակուրդ խնդրեց աշխատելու  
համար «վեպի վրա, վորի գործողության մեծ մասը կատարվում  
է Որենբուրգում և Կազանում»: Ոգոստոսի կիսին Պուշկինը  
Մոսկվայով մեկնեց Կազան, Որենբուրգ և Ուրալսկ: Կազանում  
և Ուրալսկում նա պուգաչևչինայի վերաբերյալ ուժեղ թափով  
նյութ էր հավաքում, զիմելով տեղացի ծերերին՝ ապստամբու-  
թյան վկաներին: Ուրալ կատարած ուղևորությունից Պուշկինը  
վերադարձավ Բոլդինո, վորտեղ անցկացրեց ամբողջ հոկտեմ-  
բերը և նոյեմբերի կեսը: Բոլդինյան այդ յերկրորդ աշունն ար-  
դյունավետ էր, թեև վոչ այնքան բեղմնավոր, ինչպես վոր  
1830 թ. աշունը: Այստեղ Պուշկինը վոչ միայն ավարտեց «Պու-  
գաչևի պատմությունը» այլ և գրեց «Պղնձյա հեծյալը», «Ձկնոր-  
սի և ձկան հեքյաթը», «Անջելոն», «Մեռյալ արքայադստեր հեք-  
յաթը», շատ վոտանավորներ և յերկու թարգմանություն.  
Միցկևիչից:

Մինչ այդ Պուշկինի անձնական կյանքում նոր փոփո-  
խություններ կատարվեցին: Ահա թե ինչպես է գրանցել այդ  
իր արագրում 1834 թ. հունվարի 1-ը թվականով. «Յերրորդ օրն  
ինձ շնորհեցին կամեր-յունկերի կոչում (վոր իմ տարիքի հա-  
մար բավական անվայելուչ է): Բայց արքունիքն ուզում է, վոր

Նատալիա Նիկոլաևնան պարի Անիչկովում»: Կամեր-յունկերը—  
ստորին պալատական կոչումը—իսկապես իրենց պալատական  
կարյերան սկսող յերիտասարդների սեփականությունն էր:  
Պուշկինն այդ ընդունեց վորպես վերավորանք, ըստ վորում իր  
պալատական նշանակումը՝ վոչ առանց հիմքի՝ համարեց ար-  
դյունք կնոջ հաջողությունների, վորին ցանկանում էին գրավել  
պալատական պարահանդեսների Անիչկովյան պալատում: Իր  
անբավականությունը Պուշկինն արտահայտում էր բավական  
բարձրաձայն, վորի հետևանքով վատացավ նրա անձնական  
հարաբերությունը Նիկոլա Լ-ի հետ: Այդ հարաբերություններն  
առանձնապես սրվեցին հունիսին, յերբ Պուշկինի իր կնոջը գրած  
նամակներից մեկը փոստում բռնվել և հանձնվել էր Նիկոլայ Լ-ին,  
վորը Պուշկինի նամակում իր կամեր-յունկերության մասին հա-  
մեմատաբար խիստ կարծիքի առթիվ, անբավականություն էր  
արտահայտել: Պուշկինը կատարվածից խիստ վրդովվել էր և հրա-  
ժարական ներկայացրեց: Նրան հասկացրին, վոր հրաժարականը  
միաժամանակ շնորհագրկումն կլինի. մասնավորապես նրանից  
խլվում էր արխիվներում աշխատելու իրավունքը: Հաշտեցնողի  
զերով գործին միջամտեց Ժուկովսկին, վորը Պուշկինին ստիպեց  
հետ վերցնելու իր հրաժարականը և մի կերպ գործին վերջ տվեց:  
Սեպտեմբերին Պուշկինը նորից մեկնեց Բոլդինո, վորտեղ մնաց  
մոտ մի ամիս: Այս անգամ Բոլդինոյում նրա մնալը՝ քիչ էր  
արդյունավետ. նա այնտեղից բերեց միայն «Վոսկե աքլորի  
հեքյաթը», վորի մեջ արտացոլվեց ցարի հետ ունեցած իր  
գժտության այս եպիգրադը:

Պետերբուրգ վերադառնալուց հետո Պուշկինի առաջ ծա-  
ռացավ իր հետագա նյութական դրության հարցը: Գրական  
փոքր արտադրողականությունը գրական փոքր էլ յեկամուտներ  
էր խոստանում. միայն վերահրատարակությունները Պուշկինին  
չեցին ապահովում: Արքունիքում գտնվելը գրական աշխատանքի  
համար անբարենպաստ պայմաններ էր ստեղծում: Ընտանիքը  
մեծացավ: Այդ ժամանակներում ծնվեց Պուշկինի դուստր Մա-  
րիան (1832), վորդի Ալեքսանդրը (հուլիս 1833): Հետագայում  
ծնվեցին և մի վորդի Գրիգորին (մայիս 1835) և դուստր Նա-  
տալիան (մայիս 1836): Կինը ծնողների մոտից վերադարձավ իր  
յերկու քույրերի հետ միասին, վորոնք բնակվեցին Պուշկինի  
ընտանիքի հետ միասին: Այդպիսի մեծ ընտանիք պահելու և  
այն էլ աշխարհիկ լայն կյանք վարելու հնարավորություն.

տալու համար Պուշկինը դիմեց փոխառութչունները, թանգազին իրեր գրավ դնելու և այլն: Վերջապես 1835 թ. հուլիսին Պուշկինը վճռեց խնդրել չորս տարով արձակուրդ իր գործերը կարգի գցելու համար: Արձակուրդը նորից մերժեցին: Պուշկինը վորոշեց լծի տակ մտնել: Այդ ժամանակ նրա պարտքը մոտ 60,000 ռ. էր: Պուշկինը խնդրեց տալ իրեն կանխավճար ի հաշիվ ուճիկի՝ 30.000 ռ.: Արդեն առաջ նա պետութչյանը պարտք էր 20,000 ռ., վոր ծախսված էր «Պուզաչևի բունտի պատմութչյան» (Նիկոլայի կարգադրութչյամբ «Պուզաչևի պատմութչունն» այդպես էր վերանվանված) տպագրութչյան վրա: Այդ 30.000 ռ. նրան տվին և դրանով նա վերջնականապես, ազատվելու առանց վորևե հոսյի, կապվեց պալատական Պետերբուրգին: Մինչդեռ նրա քաղաքական համոզմունքները փոխվեցին, ինքնակալութչյան հետ աշխատակցելու գաղափարից հեռանալու ուղղութչյամբ: Նիկոլայ I-ի ռեակցիոն քաղաքականութչյունը բավականաչափ պարզվեց, վորպեսզի Պուշկինը հրաժարվեր «նոր Պետրոսի» մասին ունեցած իր մտքից: Նա անցնում է քաղաքական ոպողիցիայի շարքերը, բայց առանց աստատուն ծրագրի, առանց հաստատուն պատկերացումն ունենալու այն միջավայրի մասին, վորտեղ նա դաշնակիցներ կգտնի: Կատարվում է Պուշկինի աստիճանական մեկուսացումը: Պալատական բյուրոկրատիայի շրջապատում նա բավականաչափ միայնակ էր: Նա շրջապատված էր ուժեղ հակառակորդներով:

1835 թ. վերջին Պուշկինն իրավունք ստացավ հրատարակելու «Современник» անունով լեռամսյա ժուռնալի տիպի (տարեկան չորս պրակ) պարբերական ժողովածու: 1836 թ. ապրիլին լույս տեսավ «Современник»-ի առաջին համարը: Մոտիկ աշխատակիցների թվում էին Վյազեմսկին, Որոսևսկին և ուրիշները, իսկ առաջին համարներում ամենամոտ մասնակցութչյան հրավիրվեց Գոգոլը: Սակայն Գոգոլի խիստ հողվածներն սպառնում էին սրել «Современник»-ի հարբերութչյունը «Библиотека для чтения» առևտրական հիմունքներով հրատարակվող ժուռնալի հետ, վոր հրատարակում էր Մմիրզինը: Պուշկինն շտապեց սահմանափակել Գոգոլի լիազորութչունները և ժուռնալը վարելու գործն իր ձեռքն առավ: Տարվա վերջին նա յերազում էր ժուռնալի կողմը գրավել յերիտասարդ քննադատ Բեկինսկուն: Գրական տեսակետից ժուռնալը գլխավորապես պահվում էր իրեն Պուշկինի յերկերով: Պուշկինն այստեղ տպագրեց վերջին տարիներ իր ամենախոշոր գործը «Կապի-

տանի աղջիկը» վեպը: Հենց այստեղ տպագրվեցին «Ճանապարհորդութչյուն դեպի Արգրում»-ը, «Ժլատ ասպետը» և մի շարք վտանավորներ: Ժուռնալը քաղաքական բաժին չունեց, բայց Պուշկինն այդ բայն աշխատում էր ծածկել Ա. Տուրգենևի փարիզյան նամակներով, վորոնց մեջ հաղորդվում էր Փարիզի հասարակական կյանքի քրոնիկան: Բացի դրանից, ժուռնալը մեծ տեղ էր տալիս գիտական աշխատութչուններին, ճանապարհորդութչուններին, մեմուարներին և այլն: Ժուռնալն ստիպված էին հրատարակել ամենազափան ցենզուրային պայմաններում: Հողված հողվածի հետևից արգելվում էին, մյուսները լենթարկվում էին առանձին կտորների մասնակի արգելումների: Ընթերցողների մեջ ժուռնալն հաջողութչուն չունեց: Պուշկինն ամեն կերպ հոգ էր տանում բարձրացնելու ժուռնալի նկատմամբ յեղած հետաքրքրութչյունը, շոշափելով ընթերցողների իր ընդարձակ շրջանը:

Պուշկինի մահը վրա հասավ ծրագրի և խմբագրութչյան կազմի վերակառուցման փորձերի շրջանում:

Պուշկինի մենամարտի անմիջական առիթը, վորի ժամանակ նա մահացու վերք ստացավ, յերիտասարդ Ֆրանսիացի Դանտեսի կողմից Պուշկինի կնոջը հետապնդելու շուրջն յեղած բամբասանքներն էին: Դանտեսը հուլիսյան հեղափոխութչունից հետո Ֆրանսիայից հեռացած միապետական յերիտասարդներից էր: 1834 թ. հունվարին նա ընդունվեց ուսական զինվորական ծառայութչյան: Նրա կարյերային նպաստեց նրա ծանոթութչյունն ու հետագա մերձեցումը Ռուսաստանի հողանդական դեսպան բարոն Հեկկերենի հետ: 1836 թ. սկզբին բարոն Հեկկերենը Դանտեսին վորդեգրեց: Դանտեսի կողմից Պուշկինի կնոջը հետապնդումն սկսվեց 1835 թ.: Նատալիա Նիկոլաևնան, վոր ընդհանրապես զգայուն էր դեպի աշխարհիկ հաջողութչունները, չէր մերժում հետաքրքիր յերիտասարդ Ֆրանսիացու իրենով հետաքրքրվելու փորձերը: Տեսակցութչունները կատարվում էին աշխարհիկ շրջապատում, վոր դեպի Պուշկինն անբարյացակամ վերաբերմունք ուներ և չարախնդութչյամբ հետևում էր Դանտեսի և Պուշկինայի հարբերութչունների զարգացմանը: Ստեղծված դրութչյանը Պուշկինը ջղախոտ վերաբերմունք էր ցույց տալիս: 1836 թ. նոյեմբերի սկզբին անստորագիր նամակների ձևով տարածվեց մի պասկվիլ, վորի մեջ ծաղրական արտահայտութչյուններով վորոշակի ակնարկվում էր կնոջ դա-

վաճանությունը: Պասկվիլը տարածելու մեջ Պուշկինը կասկածեց Հեկկերենին, և Դանտեսին մենամարտի հրավերեց: Մենամարտի առաջն առավ ժողովակու միջամտությունը: Բայց Նատալիա Նիկոլաևնայի նկատմամբ Դանտեսն իր հետևումները չդադարեցրեց: Պուշկինը շուտով իմացավ Նատալիա Նիկոլաևնայի և Դանտեսի տեսակցության մասին: Այս անգամ Պուշկինը մարտահրավերն ուղարկեց իրեն Հեկկերենին: Նրա փոխարեն հրավերն ընդունեց Դանտեսը, և մենամարտը տեղի ունեցավ հունվարի 27-ին Չլորնայա գետակի ափին, Կոմենդանտսկի ամառանոցի մոտ: Դանտեսի գնդակով Պուշկինը մահացու վիրավորվեց: Յերբ նրան տուն բերին և բժշկների կանչեցին, նրանք միայն կարող ելին արձանագրել վիրավորի անհուսալի դրությունը:

Մեռնող Պուշկինի անկողնու մոտ անընդհատ հերթապահություն էլին անում նրա մոտիկ բարեկամները՝ ժողովակին, Վյադեմսկին, Ալեքսանդր Տուրգենևը, բժիշկ Դալը (հայտնի գրող) և ուրիշները: Պուշկինի վիրավորվելու լուրն արագորեն տարածվեց քաղաքում, հետևյալ որը նրա ապրած տան մոտ սկսեց հավաքվել ամբողջը: Ծանոթներն ու անծանոթները մըտնում էլին Պուշկինի բնակարանն իմանալու նրա առողջության վիճակի մասին: Հունվարի 28-ի ամբողջ որը Պուշկինն անցկացրեց տանջանքներով: Այնուամենայնիվ նա ուժ ունեցավ մի քանի կարգադրություններ անելու համար: Հետևյալ որը Պուշկինն սկսեց գիտակցությունը կորցնել: Հունվարի 29-ին (նոր տոմարով փետրվարի 10-ին) 2 ժ. 45 րոպեյին նա մեռավ:

Վոստիկանությունը միջոցներ ձեռք առավ կանխելու Պուշկինի մահվան առթիվ սպասվող մասնիՖեստացիաները: Յեվ իսկապես, Պուշկինի մահը առաջ բերեց վրդովմունք, վոր քաղաքական անբավականության բռնկման ձև ստացավ: Այդ քաղաքական տրամադրությունն արտահայտեց Լերմոնտովը «Պուշկինի մահվան առթիվ» վոտանավորով (վոր տարածվեց ձեռագրով): Փետրվարի 5-ին Պուշկինին տեղափոխեցին Միխայլովսկոյե գյուղը և թաղեցին Սվյատագորսկի վանքի մոտ: Պուշկինի մարմինն ուղեկցում եր նրա բարեկամ Ալեքսանդր Տուրգենևը:

## ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ՊՈՒՇԿԻՆԸ

Իր դիտողություններից մեկում Պուշկինն այն միաքն է հայտնում, վոր պոեզիայով զբաղվելը թեթևամտություն է դառնում, «յերբ տաղանդը խորշում է աշխատանքից»: Պուշկինը վոչ միայն չեք խորշում աշխատանքից, այլ համարում եր այն ներշնչումից անբաժան: Պուշկինը ներշնչմանը հակադրում է հիացմունքը (восторг), վաչրկենական ավյունը (наитие), վորը բացառում է հանգստությունն ու աշխատանքը: «Հիացմունքը—դիտում է Պուշկինը—չի նախատեսնում խելքի ուժ»,—սրանով Պուշկինն ընդունում է բանականության մասնակցությունը («խելքի ուժ») հոգեկան ուժերի այն վերելքում, վորը ներշնչում (вдохновение) է կոչվում: Բանականության գործունեյությունից անբաժան ներշնչումն է ստեղծում դեղարվեստական յերկի հանճարեղ պլանը: Դանտեսի «Դոփսքի» միասնական պլանը, —ասում է Պուշկինը —արդեն բարձր հանճարի պտուղ է»:

Պուշկինի ստեղծագործության պրոցեսում պլանը, ծրագիրը մեծ դեր էլին խաղում: Հաճախ մի ամբողջ վոտանավորի, առանձին տների, գլուխների հիմնական միտքը նախապես նշում եր արձակ, թոռցիկ կանարկներով, վորոնք ըստ Աննենկովի «հաշված աստիճանների փոխարեն էլին ծառայում»: Նրանցով եր «բարձրանում պոետի վոգեշնչումը»: Այսպես՝ սևազրության մեջ Տատյանայի նամակն Ոնեգինին նախազգած է հետևյալ պլանով\*):

«[Յես վոչ վոք չունեմ...] [Յես արդեն չգիտեմ ձեզ]: Յես գիտեմ, վոր դուք արհամարհում եք... յես լերկար ուզում էյի

\*) Փակագծերում նշանակվածները ջնջված են Պ—նի ձեռագրում:

լուել, և կարծում էյի վոր ամեն ինչ կտեսնեմ... Յես վոչինչ  
չեմ ուզում—ուզում եմ տեսնել ձեզ,—յես վոչ վոք չունեմ,  
յեկեք... Դուք պետք է և այն լինեք, և այն. թե չե—աստված  
խաբել է ինձ: [Ինչո՞ւ յես տեսա ձեզ, սակայն այժմ արդեն ուշ  
է: Յերբ...] Յես վերստին չեմ կարգում նամակս, և նամակս  
ստորագրությունն չունի, գուշակեցեք, ո՞վ ե...»

Այս սակավաթիվ նշանածողերը դնելով, Պուշկինը գրում է  
վտանավորով Տառյանայի նամակը:

Сначала я молчать хотела,  
Поверьте: моего стыда  
Вы не узнали б никогда,  
Когда б надежду я имела,  
Хоть редко, хоть в неделю раз  
В деревне нашей видеть вас...

.....  
Зачем вы посетили нас?

.....  
Кончаю! Страшно перечесть...

(Յես ուզում էյի լուել սկզբում,  
Յեզ հավատացեք—իմ ամոթանքը  
Դուք յերբեք, յերբեք չեյեք իմանա,  
Թե յերբնիցե հույս ունենայի—  
Թեկուզ շաբաթը միայն մեկ անգամ  
Մեր գյուղում մեկ-մեկ ձեզ հանդիպեյի...  
.....  
Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք մեզ այցելեցիք.  
.....  
Վերջացրի. սոսկում եմ կարգալ նորից...\*)

Նամակը չի շեղվում արձակով գրված պլանից, սակայն  
վերջինիս «չոր ցուցումները զարգանում են մի շարք բանաս-  
տեղծական պատկերներում» (Աննենկով):

Ապշեցուցիչ է Պուշկինի պլանների և ծրագրերի լակո-  
նիզմը (հակիրճութունը): Սակավ բառերում, սեղմ ու ժլատ  
ֆրազներում Պուշկինը գետեղում է պատկերների, եպիգրամների,  
գրամատիկական գրույթների մի ամբողջ շարք:

Պուշկինը մեծ նշանակություն էր տալիս գեղարվեստական

\*) Թարգմ. Մ. Դ.-ի:

յերկերի պլանին: Պուշկինի սյուժետային պրոդան նրանից  
առանձին հոգատարությունն էր պահանջում պլանների մշակման  
գործում: Պետք էր խիստ կերպով կշռել ու մտածել բոլոր գոր-  
ծող անձերի դրությունը, դեպքերի կապակցությունը, նախագը-  
ծել պատմվածքի ընթացքը և այլն: Նախնական ուրվագծե-  
րում, պլաններում ու ծրագրերում, Պուշկինն ուշադրությամբ  
մտմտում է ու կշռադատում բոլոր ուղիներն ու զարտուղիները,  
վորով անցնելու և գործելու յեն նրա հերոսները և յերկրորդա-  
կան դեմքերը: Մեկ պլանում ընդունած այս կամ այն դրու-  
թյունը մերժում է մյուսում, սյուժեն փոխվում է և՛ հիմնա-  
կան դժուր և՛ մանրամասնությունների մեջ: Պլանը մշակելիս՝  
Պուշկինի տատանումների ու մտմտումների որինակ կարող են  
ծառայել «Կապիտանի աղջկա» սկզբնական ծրագրի յերկու-  
հատվածները:

I. «Բաշարինին հայրը բերեց Պետերբուրգ և գրել տվեց  
գվարդիա, չարության պատճառով կայազոր (գաբնիզոն) ուղարկ-  
վեց. ներվեց Պուզաչովի կողմից՝ բերդը գրավելիս, նշանակվեց  
կապիտան և առանձին խմբով (պարտիա) Միմբիրսկ ուղարկ-  
վեց, Պուզաչովի գնդապետներից մեկի հրամանատարության  
ներքո: Նա փրկում է իր հորը, վորը նրան չի ճանաչում: Ներ-  
կայանում է Միխեյլսոնին, վորն ընդունում է նրան իր մոտ...  
Ծերունի պարետն իր աղջկանն ուղարկում է մոտակա  
բերդը և այլն...»

II. «Բաշարինը ճանապարհին, բուք ժամանակ, ազատում  
է Բաշկիրցուն: Բաշկիրցին փրկում է նրան, բերդը գրավելիս,  
Պուզաչովը խնայում է նրան, ասելով Բաշկիրցուն, «Դու քո  
գլխով պատասխանատու յես նրա համար».

Բաշկիրցին սպանվում է, և այլն»:

Ծրագրում Բաշարին կոչվող հերոսը պատմվածքի սևագրի  
ուրվագծերից մեկում կոչվում է Բուլանին, իսկ վերջնական  
խմբագրության ժամանակ—Դրինյով: Ծրագրերի և պատմվածքի  
համեմատությունը ցույց է տալիս, վոր Պուշկինը շատ է փո-  
խել իր սկզբնական մտահղացումը: Պատմվածքում Դրինյովին  
հայրը վոչ թե գվարդիա, այլ Որենբուրգի կայազորն է ուղար-  
կում: Նրան այնտեղ է բերում վոչ թե հայրն, այլ ուղեկցում է  
Սավելիչը և այլն: Պատմվածքի սյուժեն կառուցված է Դրինյո-  
վի փրկության վրա՝ Պուզաչովի կողմից՝ բուք ժամանակ,  
մինչդեռ ծրագրում այլ սխտուացիա յեր գծված. Բաշարին—

Գրինյովը փրկում է Բաշկիրցուն, վորն իր հերթին փրկում է որան՝ Պուզաչովի կողմից բերդը զրավելուց հետո:

Մրազբերի ու պլանների մշակմանը հարում է նաև եպիգրաֆներին (բնաբան) ընտրությունը, վոր Պուշկինը նշանակում է մինչև իր յերկերը գրելը:

Ըստ յերևույթին եպիգրաֆները Պուշկինի համար նույնպես վորոշ նշանաձողեր էյին հանդիսանում: Պուշկինի թղթերի մեջ մնացել է մի թերթ «Պետրոս Մեծի խափշիկի» համար ընտրված եպիգրաֆներով: «Կրակոցի» («Բեկինի պատմվածքները») եպիգրաֆն ընտրված էր «Յեվգենի Ունեգինից» — «Теперь сходитесь»... Տպագրության ընթացքում Պուշկինն այս եպիգրաֆը փոխեց, վերցնելով Բարատինսկուց — «Стрелялись мы» — սակայն շարունակում էր վորոնել ու մտածել... «Կրակոցը» («Выстрел») տպագրվեց յերկու եպիգրաֆով՝ Բարատինսկուց և Բեստուժևից վերցրած — «Я поклялся застрелить его по праву дуэли» և այլն:

Պուշկինի արձակի սևագրությունները ծածկված են ուղղումներով: Մեղմելու ձգտումն ստիպում էր Պուշկինին կրճատել յերկար տեղերը, հանել ամբողջ եպիգրոհներ, ջնջել ու փոփոխել առանձին բաբեր ու դարձվածքներ, վորպեսզի ավելի ձգբրիտ ու արտահայտիչ լինի:

Պուշկինի վոճալին աշխատանքի որինակ կարող է ծառայել «Պետրոս Մեծի խափշիկի» վերջին գլխի սևագրության մի հատված (տողերը դասավորված են ինչպես Պ-նի ձևագրում, սովորական փակագծում դնում ենք՝ տողի վերևը Պուշկինի գրածներն, իսկ ուղղանկյուն փակագծերում՝ Պ-նի կողմից ջնջվածը)»

[тке]

[(тесной)] [(комнатке)], [(скр)]

[В] [нижнем жилье дома] В доме Гавр

[Аф] из сеней направо [под] [лестницею] находилась

(с одним окошечком)

тесная каморка, [род чулана]

в ней стояла простая кровать покрытая...

Հենց առաջին Ֆրազի վրա Պուշկինն սկսել է յեռանդուն աշխատանք: Жилье (բնակարան) ընդհանուր բառը փոխարինում է ավելի կոնկրետ «նեղ սենյակում», իսկ քիչ ներքև՝ «սենյակը» զառնում է «каморка» (բուն, խուց), վորն ավելի յե ընդգծում բնակարանի համեստությունը, այս «բնին» ավելի հարմար տեղ է գտնում — սանդուխների տակ և վերջապես

տեսնվում է. «В доме Гаврилы Афанасьевича из сеней направо находилась тесная каморка, և վերևից ավելացնում է՝ с одним окошечком...»

Նույնպիսի ջանք էր թափում Պուշկինը նաև չափածո գրքավածքների վրա. բերենք մի յերկու որինակ.

Нет, никогда среди пыльных дней...

Кипящей младости моей

Я не желал...

Лобзать уста молодых Армид

Առաջին ուրվագծում Պուշկինն «որեր» (дней) բառի եպիտետ ընտրում է «бурных», ապա մի քանի ուղղումներից հետո գրում է «пыльных», վոր ավելի արտահայտիչ է «չեռացող յերիտասարդության» (кипящая младость) համար — յեռուն և ըորոքվող միևնույն հասկացողությունն են նշանակում — յերիտասարդական կրակ, սիրո հուր («огнь любви»), ըստ մի այլ ուրվագծի: Ընդգծված հնչյուններն ավելի արտահայտիչ ու հրնչուն են դարձնում վոտանավորն ու իրար ավելի յեն ներդաշնակում: Мла արձագանքում է пыл մասնիկին. «Младость» ավելի ուժեղ է հնչում, քան խուլ «юность»: Ընդգծված են շարվածություն արտահայտող հնչյունները а-я, վորոնց մեղմում են սանուն ներդաշնակությամբ այլ ձայնախմբեր — пыл — мла — лал, мла — ми և այլն:

Բոլորին հայտնի յեն այն տողերը՝ վորոնցով սկսվում է «Պղնձե հեծյալ» պոեմը.

На берегу пустынных волн

Стоял Он, дум великих полн

И вдаль глядел. Пред ним широко

Река неслася; бедный челн...

Սկզբում այս տողերը գրված էյին հետևյալ կերպ.

На берегу варяжских волн

Стоял задумавшись глубоко,

Великий Петр. пред ним широко

Текла Нева; смиренный челн...

Պուշկինն ունի և այլ վարիանտ՝ սկզբի տողերի համար.

Однажды близ пустынных волн,

Стоял глубокой думы полн,

Великий муж...

Պուշկինն սկզբում անվանում է Պետերբուրգի հիմնադրին (Պետրոս Մեծ), ապա գիտակցաբար հանում, թողնելով՝ Նա (ОН)... ինչպիսիք լարվածություն, տոկունություն ու արվեստի վարպետություն եր պահանջվում, վորպեսզի ստացվեցին վերջիվերջո պոեմի կուռ, լակոնիկ, հնչուն ու արտահայտիչ տողերը...

Պուշկինն արգարև վարպետ եր՝ այս բառի ամենաբարձր իմաստով և հանձարեղ արվեստագետ: Կենսագրերի ասելով, «վոչ վոք իր վրա այնպես չեք աշխատում, ինչպես Պուշկինը», վորը վշտացած ասում եր: «Մենք քիչ գրողներ ունենք, վորոնք սովորեցին, մեծ մասը միայն սովորածն է մոռանում» (разучиваются): Հսկայական ելին Պուշկինի մտավոր հետաքրքրությունները: Նրա գրադարանն (ուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, լատիներեն, հունարեն լեզուներով) ապացուցում է նրան հետաքրքրող հարցերի բազմազանությունը— համաշխարհային գրականության յերկերը, սրանց պատմությունը, քննադատություն, լեզվագիտություն, փիլիսոփայություն, պատմություն, իրավաբանական գիտություններ, վիճակագրություն, աշխարհագրություն, քաղաքաանտեսություն, բնագիտություն, բժշկականություն— ամեն ինչ մտնում եր նրա ընթերցանության և ուսումնասիրությունների մեջ: Գրքերը Պուշկինի համար «արտադրության գործիքներ» ելին և նա ասում եր, վոր «նմանվում է իրեն անհրաժեշտ թանգագին արմաստներ դնելու համար քայքայվող ապակեգործին»:

Նա շատ եր կարդում, և անսովոր հիշողությամբ ոժտված լինելով— պահում եր գրքերից հավաքած այդ գանձերը: Պուշկինի հիշողության մեջ պահպանվում ելին «արագընթաց կյանքի» բազմազան տպավորությունները: «Վոչ մի խոսակցություն, մտորումների վոչ մի ըրպե նրա համար զուր չեք անցնում վողջ կյանքում» (Պլետնյով): Յեվ գրքերը, չեվ մարդիկ, և սերն, ընկերներն ու թշնամիները, Պսկովի և Նովգորոդի գորշ պեյզաժները, և «կեսորյա չերկիքի» փայլը, և «ալիքների անդուլ բարբառը», դայակի հեքյաթներն ու յերգերն՝ «իլիկի բղղոցի տակ» և գրական սուր վեճերը, արդիականությունն ու «հնություն առասպելներն» («предания старины») — ամեն ինչ՝ «ներշնչված աշխատանքի ժամերին», չենթարկվելով «պահանջկոտ արվեստագետի խիստ դատին», մարմնանում եր վոտանավորների յերաժշտություն, գեղարվեստական պրոգնոզի բլուրեղյա պայծառություն մեջ:

Ընկնվ պոետը— պատվի ջատագով,  
Ամբաստանություն գոհն անմեղապարս:  
Խոցված կուրծքը լի վրեժի տենչով  
Ու խոնարհելով գլուխը հպարտ:  
Ել չհանդուրժեց պոետի հոգին  
Լուսանքը ստոր, բամբասանքը դարձ:  
Ըմբոստ դեմ չելավ զաղիր կարծիքին  
Յեվ ընկավ իբրև մի գոհ աղեխարջ:  
Ընկնվ... Ել ինչո՞ւ ի գուր հեկեկալ,  
Տարափներ տեղալ դատարկ զովեստի  
Յեվ արգարացման խոսքեր քրթմնջալ,  
Յերը կատարվել է վճիռը բախտի:  
Դուք չեցիք հապա, վոր այնքան յերկար  
Վանեցիք նրա քանքարը գերող,  
Յեվ ձեր անառակ խնդություն համար  
Հրահրում ելիք հրդեհը մարող:  
Դեհ, ել ինչ արած, հրճվեցեք հիմա.  
Նա չդիմացավ տանջանքին մաշող.  
Ձահի պես մարեց հանձարը անմահ,  
Թոչնեց պսակը այն արևաշող:  
Իբրտ մարդասպանը սառնասրտորեն  
Ուղղեց հարվածը չկա փրկություն.  
Ու վոչինչ, վոչինչ չհուզեց իրեն,  
Չգողաց անգամ դենքը իր ձեռքում:  
Ինչո՞ւ զարմանալ, — հեռու աշխարհից  
Նա, շատերի պես մի փախտական,  
Յեկել է կամքով ճակատագրի  
Վորսալու այստեղ բախտ ու աստիճան:  
Հանդուզն ծաղրով նա յերկար, յերկար  
Գամահեց լեզուն ու բարձրն ոտար  
Ու չխնայեց մեր փառքը պայծառ  
Յեվ այս արլունոտ ժամին չըմբռնեց,  
Թե ինչի վրա ձեռք բարձրացրեց:

Յեվ նա սպանվեց, մտավ գերեզման,  
Անհայտ, բայց սիրված այն յերգչի նման,

Վորը գարձել եր խուլ խանդի ավար,  
Յերգվել տողերում նրա բոցավառ,  
Նրա պես խոցվել հարվածով դաժան:  
Ինչո՞ւ խաղաղ յեղերքների յերազանքից գեղահրաշ  
Նա վրա դրեց այս աշխարհը նախանձոտ ու ապառաժ,  
Մթթե ազատ սրտի համար և տենչերի վերասլաց.  
Ինչո՞ւ, ինչո՞ւ նա ձեռ մեկնեց գծուծներին խաբերա,  
Կեղծ խոսքերին, գրվածքներին հավատալով աներկբա,  
Նա, ում մարդկանց ճանաչելը մանկությունից եր աված:  
Պսակաղերձ արին նրան, գլխին պսակ դրին նոր,  
Վոր հյուսված եր դափնիներից և փշերից բյուրավոր:  
Յե՛վ փշերը դառնազին  
Վե՛հ ճակատը խոցեցին:  
Նրա վերջին վալրկյանները թուճավորված են այսոր  
Խենթ ու խարդախ տգետների փափսոցով նենգավոր:  
Յե՛վ նա մեռավ վրիժառման հուր ծարավով սոչորված,  
Սրտնեղիլով տարավ իր հետ ցնորքները խորտակված:  
Լռեց յերգերի ձայնը մոգական,  
Ու յերբեք, յերբեք նորից չի հնչի.  
Շուրթերը նրա փակ են հավիտյան,  
Խուլ և և անձուկ ոթեանն յերգչի:  
Յե՛վ դուք, սերունդներ գոռոզ ու անարզ  
Ստոր գործերով հայտնի հայրերի,  
Վոր արորել եք ձեր թաթերի տակ  
Այն բեկորները զրկված տոհմերի,  
Դուք, գահին կառչած ազահ և անգոհ  
Դահիճներ փառքի և ազատության,  
Պատսպարվել եք որենքի ներքո,  
Ձեզ համար ի՞նչ դատ և ի՞նչ դատաստան:  
Բայց, անառակներ, կա մի դատ վերին,  
Կա անեղ մի դատ, նա կզա, կզա,  
Անմատչելի յե նա վոսկու ուժին  
Յե՛վ մտքի, գործի կանխատես վկա:  
Այնժամ ձեր լեզուն առմիշտ կզոցվի  
Բանսարկությունը կլուի իսպառ,  
Ու ձեր սև արյամբ բնավ չեք քավի  
Ձոհված պոետի արյունը արդար:

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՆ ՈՒ  
ԳՐՈՂՆԵՐԸ ՊՈՒՇԿԻՆԻ ՄԱՍԻՆ  
(հասվածներ)

Վ. ԲԵԼԻՆՍԿԻ

Մինչև Պուշկինը մենք չենք ունեցել պոետ-արվեստագետ Պուշկինն առաջին ոտու գեղարվեստագետ բանաստեղծն եր: Ուստի և Պուշկինի նույն իսկ ամենավաղ պատանեկական ստեղծագործություններն, ինչպես «Ռուսլանն ու Լյուդմիլան», «Կովկասի գերին» ու «Իսխրիսարայի շատրվանը» - իրենց յերևալով նոր դարաշրջան նշեցին ուսական պոեզիայի պոետմության մեջ: Այդ յերկերում բոլորը տեսան: Վոչ միայն պոետական նոր յերկեր, այլ բոլորովին նոր մի բանաստեղծություն, վորի ակնարկն անգամ չեյին տեսել ուսերեն լեզվով: Յեվ այդ պոետները կարգում եր Ռուսաստանի վողջ գրագետ հասարակությունը. այդ պոետները շրջում եյին տարերում, արտագրում եյին աղջիկները, աշակերտները դպրոցական նստբաններին, խանութի ու կրպակների ծառայողները: Հենց այդ ժամանակ հասկացան, վոր վոտանավորների տարբերությունն արձակից վոչ միայն հանգի ու չափի մեջ ե կայանում, այլ վոր վոտանավորներն ել, իրենց հերթին լինում են և բանաստեղծական, և արձակ: Այդ նշանակում եր ըմբռնել պոեզիան վոչ իբրև ինչ-վոր արտաքին բան, այլ նրա ներքին եյությամբ: 1

...«Ոնեգինը» Պուշկինի ամենասրտալի (самое задушевное) յերկն ե, և բանաստեղծական շատ քիչ յերկեր կարելի յե նշել, վորոնց մեջ բանաստեղծի անձնավորությունն այնպես լիությամբ, այնպես պարզ ու պայծառ արտահայտվեր, ինչպես «Ոնեգինում» արտացոլեց Պուշկինի անձնավորությունը: Այստեղ նրա վողջ կյանքն ե, վողջ հոգին, վողջ սերը, այտեղ են նրա զգացմունքները, ըմբռնումներն ու իրեալները... Չխոսելով արդեն «Ոնեգինի» եստետիկական արժանիքների մասին, այդ պոետը մեզ, ուսաներիս համար պատմական ու հասարակական հսկայական նշանակություն ունի... Ամենից առաջ «Ոնեգինում» մենք տեսնում ենք բանաստեղծական վերարտադրումը ուսական հասարակության, նրա զարգացման ամենահետաքրքրական մոմենտներից մեկում:

Այդ պոետի պատմական նշանակությունն առավել եր բարձր ե նրանով, վոր Ռուսաստանում այդ ուղղությամբ առաջին փորձն եր: Պուշկինն այստեղ վոչ միայն սոսկ պոետ ե

հանդիսանում, այլ և զարթնող հասարակական ինքնագիտակցութեան ներկայացուցիչն է: Մինչև Պուշկինը ուսական պոեզիայի բոլոր յերկերն ավելի շուտ ետյուզներն ու պատճեններն էլին նմանվում, քան թե ինքնուրույն (самобытныи) ներշնչման ազատ լերկերի... «Յեվգենի Ունեզինն» առաջին ազգային-գեղարվեստական լերկն էր... Իր ժամանակակից «Խելքից պատուհաս» յերկի հետ Պուշկինի վեպն ամուր հիմք դրեց ուսական նոր պոեզիայի, ուս նոր գրականութեան: Ռուս բանաստեղծները մինչև այս յերկու լերկը չէին կարողանում բանաստեղծ դառնալ, ձեռնարկելով ուսական կյանքի աշխարհը պատկերացնելու...

Այս յերկու յերկը հիմք դրին հետագա գրականութեան, դարձան այն դպրոցը, վորից դուրս յեկան Լերմոնտովն ու Գոգոլը: Առանց «Ունեզինի» անհնար էր «Մեր ժամանակի հերոսը», այնպես, ինչպես առանց «Ունեզինի» ու «Խելքից պատուհասի» Գոգոլն իրեն պատրաստ չերգգա այնպիսի խորութեամբ ու ճշմարտութեամբ պատկերացնելու ուսական իրականութեանը:

...«Ունեզինը» կարելի չէ համարել ուսական կյանքի հանրագիտարան և վերին աստիճանի ժողովրդական լերկ: Զարմանալի չէ արդոք, վոր այս պոեման այնպիսի հիացմունքով ընդունվեց հասարակութեան կողմից և այնպիսի հսկայական ազդեցութեամբ ունեցավ թե ժամանակակից և թե հետագա ուս գրականութեան վրա: Ապա նրա ազդեցութեանը հասարակական բարքերի վրա: Նա գիտակցութեան մի ազդեցություն էր ուս հասարակության համար, առաջին, սակայն ինչպիսի մեծ քայլ էր նրա համար. սա դյուցազնական մի քայլ էր, և նրանից հետո մի տեղում կանգնելն այլևս անհնար դարձավ:

...Կգա ժամանակ, յերբ նա Ռուսաստանում կդառնա կլասիկ բանաստեղծ, ըստ վորի յերգերի կկերպավորվեն ու կզարգանան վոչ միայն եստետիկ, այլ և բարոյական զգացմունքները:

Իհարկե, կգա ժամանակ, յերբ ապագա սերունդը նրան հավիտենական արձան կկանգնի:

...Պուշկինը պատկանում է ստեղծագործական այն հանձարներին, պատմական այն մեծ դեմքերի թվին, վորոնք, աշխատելով ներկայի համար, ապագան են պատրաստում, ուստի և չեն կարող միայն անցյալին պատկանել...

... Նա տուրք տվեց ժամանակակից բոլոր խոշոր գեղեցի-

րին, յերեւութներին ու մտքերին, այն ամենին, ինչ կարող էր զգալ Ռուսաստանն այն ժամանակ:

Պուշկինի առավելաչափ ազդեցութեանն առաջանում էր այն բանից, վոր Ռուսաստանի նկատմամբ նա իր ժամանակի զավակն էր, այս բառի իսկական իմաստով, վոր նա իր հայրենիքին հավասար էր ընթանում, նրա մտավոր կյանքի զարգացման ներկայացուցիչն էր:

1844

Ն. ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻ

...Պուշկինի յերկերի զլխավոր նշանակութեանն այն է, վոր նրանք գեղեցիկ են, կամ, ինչպես ասում են այժմ — գեղարվեստական են: Պուշկինը կյանքի մասին վորոշ հայացքի բանաստեղծ չէր, ինչպես Բայրոնը, նույն իսկ մտքի բանաստեղծ չէր ընդհանրապես, ինչպես, որինակ Գյոթեն ու Երլերը: «Ֆաուստի», «Վալենտինի», «Չայլդ-Հարոլդի» գեղարվեստական ձևն առաջացավ այն նպատակով, վորպեսզի նրանում արտահայտվի խորին հայացք կյանքի մասին: Պուշկինի յերկերում մենք այդ չէինք հանդիպի: Նրա յերկերում գեղարվեստականութեանը վոչ միայն թաղանթն է հանդիսանում, այլ հատիկն ու թաղանթը միաժամանակ:

...Պուշկինի միջոցով գրական կրթութեանը տարածվեց տասնյակ հազարավոր մարդկանց վրա, մինչդեռ, մինչև Պուշկինը գրական հետաքրքրութեանները շատերին չէին զբաղեցնում:

Նա առաջինը մեղ մոտ ազգային գործի արժանիք զարգացրեց գրականութեանը, մինչդեռ մինչև Պուշկինը գրականութեանն — ըստ հին ամսագրերից մեկի հաշտ վերնագրի — դիլետանտներն են զրջանի համար «հաճելի ու ոչտակար ժամանց էր»:

Նա առաջին բանաստեղծն էր, վոր վող ուս հասարակութեան աչքում այն բարձրունքներին կանգնեց, վորին հասնելու չէ իր յերկերում մեծ գրողը: Ռուս գրականութեան հետագա զարգացման վող հնարավորութեանը պատրաստվել էր ու մասամբ դեռ պատրաստվում է Պուշկինի կողմից:

Սակայն չեթե Պուշկինը գերազանցորեն պոետ—արվեստագետ եր, չեթե նրա յերկերում արտահայտվեց վոչ այնքան բանաստեղծական բովանդակութեան զարգացումն, ինչքան բանաստեղծական ձևի զարգացումն, չի կարելի սակայն մոռանալ վոր Պուշկինը, առավելապես վոչ մտածող, վոչ գիտնական լինելով—արտակարգ խելքի տեր ու չափազանց կրթված մարդ եր. վոչ միայն յերեսուն տարի առաջ, այլ և այժմս մեր հասարակութեան մեջ կրթվածութեամբ Պուշկինին հավասար քիչ մարդիկ կգտնվեն:

...Ռուսական կրթութեան պատմութեան մեջ Պուշկինը նույնպիսի տեղ ե գրավում, ինչպես և ուրս պոեզիայի պատմութեան մեջ...

Կգա ժամանակ, յերբ նրա յերկերը կմնան իբրև իր ժամանակի հուշարձաններ. սակայն յերբ կգա այդ ժամանակը, մենք դեռ չգիտենք, իսկ այժմ մենք կարող ենք կարգալ ու նորից կարգալ մեծ բանաստեղծի ստեղծագործութուններն ու, յերախտագիտութեամբ մտածելով նրանց նշանակութեան մասին, ուստական կրթութեան մասին, կրկնել նրան հետեւելով.

«Կեցցե Մուսան, կեցցե բանականութեանը՝ Յեւ թող անմահ մնա այն մարդկանց հիշատակը, վորոնք ծառայել են Մուսաներին ու բանականութեանն, ինչպես ծառայել ե Պուշկինը:

1855

## Ն. ԴՌԲՐՈՒՑՈՒԲՈՎ

Պուշկինի նշանակութեանը հսկայական ե վոչ միայն ուրս գրականութեան պատմութեան, այլ և ուստական լուսավորութեան պատմութեան մեջ: Նա առաջինը ուրս հասարակութեանը կարգալ սովորեցրեց, և սրանում ե նրա մեծագուշն ծառայութեանը: Նրա վոտանավորներում առաջին անգամ մեղ յերկաց ուստական կենդանի խոսքը, առաջին անգամ բացվեց մեղ համար ուստական իրական աշխարհը:

Բոլորը հիացել եյին, բոլորը տարվել մինչև այդ չլսված պոեզիայի հզոր հնչյուններով: Սրանից առաջ ուստական պոետները վարձու հիացմունքներով, ըստ պատվերի, պոչերդում

եյին հրավառութեանները, տոներն ու այլ դեպքերը, վորոնց մասին իրենք վոչ մի հասկացողութուն չունեյին, և վորոնց նկատմամբ վողջ ժողովուրդը վոչ մի շահ չուներ:

Պուշկինը կարողացավ հասնել (ПОСТИГНУТЬ) ժողովրդական կենցաղի իսկական պահանջներին ու իսկական բնույթին: Նա ճանաչեց ուստական բնութեանն ու կյանքը և գտավ, վոր նրանց մեջ շատ կա իրապես լավ ու բանաստեղծական: Ինքը հրապուրված այս հայտնութեաններով, նա ձեռնարկեց իրականութեան պատկերացման և ամբոխը հիացմունքով ընդունեց այս շքնաղ ստեղծագործութունները, վորոնց մեջ այնքան հարազատ ու սեփական բան կար, վորը նա վաղուց եր տեսել, սակայն վորի մեջ այդպիսի պոետիկական հրաշալիք չեր յենթադրում պոետներ:

... Յեւ Պուշկինն արձագանքեց այն ամենին, վորի մեջ արտահայտվում եր ուրս կյանքը, նա դիտեց նրա բոլոր կողմերը, քննեց այն բոլոր կողմերից, բոլոր մասերից:

Ամեն ինչ գրավիչ եր, ամեն ինչ այնպես գեղեցիկ եր թվում, վոր պոետի մատաղ կրծքից ակամայից հիացմունքի ու թովչանքի հնչյուններ եր խլում: Յեւ ամբոխն ունկնդրում եր նրան յերախտագիտական սիրով: Նրա համար այդ աղերն, այդ պատկերները վառ վերհիշումներ եյին ամենի, վորի մասին մինչ այդ չեր ել համարձակվում մտածել, ինչպես ստոր պրողայի, ինչպես աոորյա քաշքատուքի մասին, վորից պետք եր հեռու պահել իրեն: Յեւ հենց սրանում ե կայանում Պուշկինի բանաստեղծութեան մեծ նշանակութեանը. նա ժողովրդի միտքը զարձրեց այն իրերի վրա, վորոնք հենց գրավելու եյին նրան, և յետ պահեց այն ամենից, վոր մշուշային եր, տեսիլային, հիվանդագին—ըղձական, վորոնց մեջ առաջ գեղեցկութեան ու կառարելութեան իղեալ եյին գտնում բանաստեղծները: Ուստի և տարորինակ չի թվալու, վոր Պուշկինն այնքան ուժգնորեն ե հրապուրվում մեր խեղճ աշխարհով, և այդպես քիչ եր խոռովվում նրա անկատարելութեամբ: Այն ժամանակ դեռ ևս պետք եր ցույց տալ, թե ինչ լավ բան կա յերկրի վրա, ստիպելու համար մարդկանց՝ ողալին ամբոցից յերկրի վրա իջնելու: Խիստ քննութեան շրջանը դեռ չեր հասել, և Պուշկինը չեր կարող ժամանակից առաջ անել այդ: Յեւ այդ ապարդյուն կլինեբ. քչերն ընտրյալներից կհասկանային նրան, իսկ մաստան կմնար իր իղձերով տարված: Իսկ այժմ Պուշկինը, Պուշկինի պոեզիան

պատրաստեց այն ձևը, վորով հետագայում կարող էին հանդես գալ բարձրագույն ստեղծագործութունները, իսկ նրա ազդեցութունը հասարակութեան վրա ավելի ընդունակ դարձրեց վերջինիս այդ ստեղծագործութունները հասկանալու և ընդունելու: Հասարակութունը Պուշկինի քաղցրալուր պոեզիայում հասկացավ կյանքի արժեքը, և այժմ կյանքի ստորութեան նկատմամբ ամենազառն ատելութունը ձարդկանց կզրդի միայն ուղղվելու, և վոչ թե յերկրի իրականութունից նրանց անդրյերկրային աշխարհները կտանի:

1856

Ն. ԳՈԳՈՒ

Պուշկինի անվան հետ իսկույն միաք և ծագում ուստ ազգային բանաստեղծի մասին:

Իսկապես, մեր բանաստեղծներից վոչ վոք նրանից բարձր չեր և չի կարող ավելի ազգային համարվել. այս իրավունքը վճռականապես նրան և պատկանում: Նրա մեջ, ինչպես բառաբանում (լեքսիկոն), պարունակվում եր մեր լեզվի վողջ հարստութունը, ուժն ու ձկունութունը:

Նա բոլորից առավել, բոլորից հեռու ընդարձակեց նրա (լեզվի) սահմանները և ավելի ցույց տվեց նրա տարածութունը: Պուշկինն արտակարգ յերևույթ ե. և թերևս, ուստական վողու միակ յերևութե ե. նա ուստ մարդն ե իր վերջնական զարգացումով, վորում, թերևս, հանդես կգա յերկու հարյուր տարի հետո:

... Բանաստեղծը կարող ե ազգային լինել և այն ժամանակ, յերբ բոլորովին կողմնակի աշխարհ ե նկարագրում, սակայն նայում ե նրա վրա իր ազգային տարերքի աչքերով, վողջ ժողովրդի աչքերով, յերբ զգում ու խոսում ե այնպես, վոր իր հայրենակիցներին թվում ե, վոր կաթմես իրենք են այդպիս զգում ու խոսում: Յեթե խոսենք այն արժանիքների մասին, վոր Պուշկինին են հատուկ ու նրան տարբերում են այլ բանաստեղծներից, այդ արժանիքները կայանում են նկարագրութեան չափազանց արագութեան և վողջ առարկան մի քանի գծերով պատկերելու արտասովոր վարպետութեան մեջ:

Նրա եպիտեղծներն այնպես վորոշակի ու համարձակ են, վոր յերբեմն մի ամբողջ նկարագրութեան են հավասար. նրա վրձիները թույլում ե: Նրա փոքրիկ պիեսը միշտ մի ամբողջ պոեմ արժե: Հազիվ թե վորևե բանաստեղծի մասին կարելի լինի ասել, վոր նրա փոքրիկ պիեսում այնքան մեծութուն, պարզութուն և ուժ պարունակվի, ինչքան այդ տեսում ենք Պուշկինի մոտ:

Իր մանր յերկերում, այս չքնաղ անտողգիայի մեջ, Պուշկինն արտասովոր բազմակողմանի յե և ավելի լայն ե ու տեսանելի, քան պոեմներում: Այս փոքր յերկերից մի քանիսն այնքան սուր են ու շրացուցիչ, վոր ամեն մեկն ընդունակ ե հասկանալու, բաց և նրանց մեծ մասը, ամենալավերբ, բազմամարդ ամբոխին սովորական են թվում: Այն հասկանալ կարողանալու համար պետք ե շատ նուրբ հոտառութուն ունենալ, ավելի ձաշակ, քան թե այն, վորով կարելի յե միայն սուր և խոշոր գծերը հասկանալ:

Պուշկինի մանր վոտանավորների ժողովածուն ամենաշրացուցիչ պատկերների մի շարք ե: Այն պարզ աշխարհն ե, վորը շնչում ե միայն հներին ծանոթ կողմերով, վորտեղ բնութեյունն այնպես կենդանի յե արտահայտվում, ինչպես արծաթե գետի շիթերում, վորտեղ արագ ու վառ ցոլում են շրացուցիչ ուսերն ու սպիտակ ձեռքերը կամ լնակոճի (алебастровая) վիզը, սե գանգուրների գիշերով ծածկված, կամ խաղողի թափանցիկ վողկույները, կամ մրտենու (мирты) հովանին, վորը կյանքի համար ե ստեղծված: Այստեղ ամեն ինչ կա—և հաճույք, և պարզութուն, և մտքի վայրկենական բարձրութուն, վորը վողեշնչման սրբազան սառնութեամբ տիրապետում ե ընթերցողին: Այստեղ չկա բազմաբառութեամբ զրավող պերճախոսութուն, վորտեղ առանձին Փրազն ուժեղ ե, վորովհետե միանում ե մյուսին և խլացնում վողջ զանգվածի ծանրութեամբ, սակայն յերբ բաժանվում ե, թույլ ու անուժ ե դառնում: Այստեղ պերճախոսութուն չկա, այստեղ միայն բանաստեղծութուն կա. վոչ մի արտաքին փայլ, ամեն ինչ պարզ ե, վայելուչ, ամեն ինչ լի յե ներքին փայլով, վորը միանգամից չի բացվում, ամեն ինչ—հակիրճութուն ե (лаконизм), ինչպես միշտ լինում ե մաքուր պոեզիան: Շատ չեն բառերը, բաց այնպես ճշգրիտ են, վոր ամեն ինչ են բնորոշում: Ամեն մի բառի

մեջ տարածութեան անդունդ ե. ամեն մի խոսք անընդգրկելի յե, ինչպես բանաստեղծը:

Այստեղից բղխում է այն, վոր այս մանր յերկերը կարգում ես մի քանի անգամ, մինչդեռ այս առավելութունը չունի այն յերկը, վորտեղ միայն գլխավոր իդեան է չափազանց թափանցում:

1832

Մ. ԳՈՐԿԻ (1868—1936)

... Պուշկինը—վարպետ է. նա հրաշալի գիտե իր ղենքը, նա լայն ընդհանրացումների ընդունակութունների տեր է:

Մինչև Պուշկինը գրականութունը—աշխարհիկ գլխաբանք եր, գրողը, լավագույն դեպքում—պալատական էր, ինչպես Դմիտրիյեվը, Դերժավինը, Ժուկովսկին, կամ—մանր աստիճանավոր, ինչպես Փոն - Վիդինը, Ռիլեյեվը: Յեթե պալատական է, նրան հաշվի չեն առնում, բայց քանի վոր աստիճանավոր է, նրան քամահրում են (третируют), ինչպես ծաղրածույի, գլխաբանքնողի:

Պուշկինն առաջինն զգաց, վոր գրականութունն առաջնակարգ կարևորութեան ազգային գործ է, վոր նա բարձր է գրասենյակի աշխատանքից և պալատում ծառայելուց, նա առաջինը հասցրեց գրականագետի կոչումն այն բարձրութեան, վոր անհասկանալի յեր մինչ այն. նրա աչքում բանաստեղծը—ժողովրդի վողջ զգացմունքների ու մտքերի արտահայտիչն է, նա կոչված է կյանքի բոլոր յերևույթները հասկանալու և պատկերելու:

... Ամենից առաջ՝ Պուշկինը ռուսական առաջին գրողն էր, վոր ուշադրութուն դարձրեց ժողովրդական ստեղծագործութեան վրա և գրականութեան մեջ մտցրեց այն, չխեղաթյուրելով—հոգուտ պետական գաղափարի—«ժողովրդականութեան» (народность)—պալատական բանաստեղծի քսու տենդենցների. ժողովրդական յերգն ու հեքյաթը նա դարդարեց իր տաղանդի փայլով, բայց անփոփոխ թողեց նրանց միտքն ու կարողութունը:

Քանի դեռ Պուշկինը գնում էր ռոմանտիզմի ուղիով, վոր կոխտոված էր մինչ այն, քանի նմանվում էր Ֆրանսիա-

ցիներին, Բալթիկին, Բատյուշկովին, Ժուկովսկուն,—հասարակութունը, նրա զարմանալի տաղանդը տեսնելով, — խրախուսում էր պոետին: Բայց յերբ նա վոտքի կանգնեց և խոսեց ռուսական մաքուր ժողովրդական լեզվով, գրականութեան մեջ մտավ ժողովրդական մոտիվներ, առորյա կյանք, սկսեց կյանքը պատկերել ռեալ, պարզ ու ճշտորեն,— հասարակութունը նրան հեգնանքով ու թշնամութեամբ վերաբերվեց, նրա մեջ տեսնելով ռուսական սոցիալութեան ու սարկութեան, ստորութեան ու դաժանութեան խիստ դատավորի ու անաչառ վկայի:

...Նրան հալածում էր (травил) Բուլգարինը, աղավաղում էր ցենզուրան, Բենկենդորֆը հետևում էր զգուշացումներով,— մի շարք վոտանավորներ և հեգնական քառյակներ վերջիվերջո անհաշտ թշնամութուն առաջ բերին դեպի բանաստեղծը, ճարպիկ մարդիկ վարպետորեն բորբոքեցին այդ անբարյացակամութունը, վերջապես նրա դեմ գործադրեցին զրպարտութուն, բամբասանք և— շուտով սպանեցին նրան:

... Պուշկինը ռուս գրականութեան համար այնպիսի մեծութուն է, ինչպիսին Լեոնարդոն է յեվրոպական արվեստի համար: Մենք պետք է անջատենք նրանից այն, ինչ պատահական է նրա մեջ, այն, ինչ բացատրվում է ժամանակի պայմաններով և անձնական, ժառանգած հատկութուններով—ազնվականն ու ժամանակավորը—այս մերը չէ, այս խորթ է ու անպետք մեզ համար:

Ուրեմն ինչ է տալիս Պուշկինը պրոլետար ընթերցողին:

Առաջինը, նրա ստեղծագործութեան որինակով մենք տեսնում ենք, վոր կյանքի ճանաչումով հարուստ, այսպես ասած փորձով ծանրաբեռնված գրողը—իր գեղարվեստական ընդհանրացումներում («Յեվգենիյ Ունեզին», «Կոմս Նուլին», «Դուբրովսկի» և այլ պատկերներ) դուրս է գալիս դասակարգային հոգեբանութեան սահմաններից, դասակարգի միտումներից վեր է բարձրանում և ներկայացնում (об'ективирует) այդ դասակարգը մեզ. արտաքուստ—իբրև պատմական փորձի մի մասի անհաշտ և անբարեկազմ կազմակերպութուն, ներքուստ—իբրև շահասիրական հոգեբանութուն, լի անհաշտելի հակասութուններով:

Անկասկած Պուշկինն ազնվական է. մի ժամանակ նա ինքն էր հպարտանում սրանով,—բայց մեզ համար կարևոր է

գիտենալ, վոր դեռ ևս պատանեկության շրջանում նա զգաց  
ազնվական տրադիցիաների նեղությունն ու հեղձութունը  
(духота) հասկացավ իր դասակարգի մտավոր աղքատությունը,  
նրա կուլտուրական թուլութունը և արտահայտեց այս ամենը,  
ազնվականության վողջ կյանքը, նրա վողջ արարքն ու թու-  
լությունները զարմանալի ճշտությամբ:

... Պուշկինի որինակում մենք ունենք մի գրող, վորը  
սոյության (бытие) տպավորություններով հազեցած, ձգտում  
էր առավելագույն ռեալիզմով ու առավելագույն ճշգրտությամբ  
արտահայտել այն վտանավորով ու արձակով, վորին և հաս-  
նում էր հանձարեղ հմտությամբ: Նրա յերկերը բարձրերի, սո-  
վորութունների, վորոշ ժամանակի հասկացողությունների մա-  
սին՝ խելացի, գիտուն և արգարամիտ մարդու մի թանգարժեք  
վկայական է,—այդ բոլորը ռուսական պատմության հանձարեղ  
իլլուստրացիաներ են:

«...Ումից էլ վոր յես ծագում ունենամ,—գրում է Պուշ-  
կինը,—իմ մտածելակերպն այդ բանից վոչ մի կերպ կախում  
չէր ունենա»:

Այս—խոսքեր են մի ձարդու, վորն զգում էր, վոր նրա  
համար ամբողջ ազգի շահերը բարձր են քան միայն ազնվա-  
կանության շահերը, իսկ այսպես էր ասում նա այն պատճառով,  
վոր նրա անձնական փորձն ավելի լայն էր ու խոր ազնվական  
դասակարգի փորձից:

Ս. Վ. ԼՈՒՆԱԶՍԻՍԿԻ

### ԱԼԵԲՍԱՆԴԻ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ՊՈՒՇԿԻՆ\*)

Պուշկինի կյանքի զարուհը խոշոր հափսվ գուգադիպում է  
ազնվական հասարակության գարնանը: Այս գուգադիպումը  
նշանակելի յե և արտահայտվում է Պուշկինի լիցեյական կեր-  
պարանքում: Վորիկ բարեկազմ խափշիկ, գանգրուներ, հուրն  
աչքերում, սնդիկի պես շարժուն, լի կրքով,—այսպես են ճա-  
նաչում Պուշկինին իր լիցեյական ընկերներն ու մանկավարժները:

Անհավանական ազահությամբ նա հավից կյանքի բաժա-  
կին, վորը նրան ձգում էր դեպի իրեն ամբողջությամբ, հա-  
ճույքներ տալով նրան. կյանքի ֆիզիքական պրոցեսը, համեղ  
ուտելիքն ու խմելիքը: Ընությունը, վոր հետզհետե իր խո-  
րությամբ բացվում էր նրա առջև, սերը, վոր սկսում էր խոռ-  
վել ու շոյել նրան,—այս բոլորը նրա համար լի էյին հրաշա-  
լիքով: Այս—զրույցը, վորը մերթ յետում էր մրցման ու  
սրամտության փայլով, մերթ դիպչում էր խորը լարերին, վորոնց  
զողզոյունից չերկար ալեկոծվում էր նրա ելությունը, ռուս  
և օտար հեղինակների ընթերցումը, ինքնուրույն մաքի առաջին  
շարժումը, ինքնուրույն գտնադորժության առաջին խոյանքը:

Նույն իսկ այն դեպքերում, յերբ Պուշկինը մեկի հետ վի-  
ճում էր կամ մեկի մոտ իրեն մեզավոր էր զգում, նա իր  
անսպառ շոյանքն էր արտահայտում, սկսում էր ճմկթել  
(щипать), համբուրել իր զրուցակցին, հաշտեցնում էր ու կա-  
խարում նրան իր բարեկամության հեղեղով: Մատաղ, սիրա-  
լիր, կյանքով կախարդված եյակ, վոր բախտին էր պատրաստվում

\*) Պուշկինի յերկերի ներածական հոդածից,  
IV գլուխ (կրճատումներով):

— այսպես եր Պուշկինը: Յեվ կարծես թե դիտմամբ Ալեք- սանդր I ու նրա մերձավորները նրա համար հնարեցին լիցեյը («Յարսկոյի Սեկո»-յում), իր այգիներով, արձաններով, շրեքով, կիսասանտիմենտալ, կիսալիբերալ մանկավարժությամբ, տա- քարյուն ընկերական միջավայրով, շողողացող գրական հրա- պուրանքներով...

Հասունացող Պուշկինի կուլտուրական պատվանդանը բա- վականին ընդարձակ եր: Բախտը միանգամից դրեց նրան ան- ցած սանդուխքի բավականին բարձր աստիճանի վրա:

Ո՛վ չգիտե, թե ինչպես «ծերուկ Դերժավինը» նկատեց Պուշկինին և նրա մուսային: Ծերուկ Դերժավինը մարմնաց- նում եր իր մեջ ռուսական կլասիցիզմի ամենաբարձր ու ամե- նից ազատ նվաճումները, ինչպես մարմարի տախտակ՝ Պուշ- կինի բանաստեղծական գահի տակ պուսկելով:

Սակայն ազնվականութունը չեր բավականանում միայն վերամբարձ շարադրանքների շեփորի ու քնարի հնչյուններով: Ինքը Դերժավինն արդեն հանդիսավոր գինին խառնում եր անհամեմատ ավելի մտերմականության շերձ բույրի հետ: Այս անցումը՝ ցուցադրականից դեպի մտերմականը նշանակելի յե դարձնում այն տասնամյակը, վորի ընթացքում ծնվեց ու մե- ծացավ մանուկ Պուշկինը:

Ժուկովսկու սանտիմենտալիզմը և վորոշ չափով թուլա- մորթ ումանտիկան ընորոշում ելին ինտիմ միջավայրի ու ներքին աշխարհի այս աճը:

Վոտանավորների «թովիչ քաղցրութունն» արդեն վորոշ չափով ձեռք եր բերված, և ժուկովսկին ուսերն եր դեմ անում իր անհամեմատ ուժեղ հաջորդին:

Շատ գրողներ (նույն թվում և առաջին պլանում Գյոթեն) ուշիմությամբ ու ճշտորեն ցուցաբերել են, վոր հավերժակա- նության իրավունքներ ամուր կերպով ձեռք են բերում այն գրողները, վորոնք իրենց ժամանակի իսկական զավակներն են չեղել, վորոնք նախատեսել են այդ ժամանակի պրոգրեսիվ տենդենցները, կարողացել են ապրել նրա հյուսթերով, իբրև նյութ վերցնել կյանքի կենսաթրթիո հատվածները և վերա- մշակել այն՝ սուր կրքերի, տվյալ ժամանակի ամենակրիտիկական գաղափարների վողով:

Ո՛վ իր դարաշրջանի լավագույն ժամանակակիցն և յեղել

նա առավելագույն շանսեր ունի ապագայի շատ դարաշրջան- ների ժամանակակիցը դառնալու:

Պուշկինի ժամանակաշրջանն սկիզբն եր հին ռուսական կյանքի բոլոր հիմքերի այն հսկայական ու բարերար առաջ- խաղացման, վորն ըստ կենինի վկայության կարող եր դառ- նալ սոցիալական հոյակապ հենարան այնպիսի գեղարվեստական վերամշակման, վորը մեր չերկրի համար վոչ միայն նշանակեք մի քայլ առաջ, այլև համաշխարհային նշանակութուն ստանար:

Վաթսուներորդ թվականների մեծ եպոխոյում, չերք մեր անմիջական նախորդներն՝ ուտոպիստ—ազնոչինեցներն առաջ- նորդում ելին հին Ռուսաստանը գրոհողների զորասյունը, նրանք վորոշ կասկածով ելին վերաբերվում ռուս-ազնվական կուլտուրայի մեծագույն պոետին:

Ճիշտ ե, և Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը սիրում ելին Պուշկինին, սակայն չգտնելով նրա մեջ քաղաքացիական մոտիվ- ներն ամբողջությամբ, վորոնցով հիացում եր նրանց նեկ- լասովը: Պիտարեք սակայն, իրեն հատուկ պարագոքսալ սրու- թյամբ ավելի հեռուն եր գնում. նրա աչքում Պուշկինը շատ քիչ չափով «պիտանի» գրող եր:

Անցան մի քանի տասնյակ տարիներ: Կապիտալիզմին ծա- ոայելու յեկող և ռենեգատի թափով՝ անհաջողության մասնը- ված նարոդնիկականութունից հրաժարվող ռեակցիոն ինտելի- գենցիան, վոր իր և «կուլտուրայի» ծարավի իր հարուստ տերերի համար սկսել եր կառուցել չեվրոպայակերպ նրբին ներ- քին ու արտաքին կենցաղ,—ամեն կերպ ձգտում ե վերականգ- նել Պուշկինի պաշտամունքը, միաժամանակ ջարդ ու փշուր անելով մեծ վաթսուականների հեղինակութունը: Սակայն Պուշկինի կրասիցիզմի մասին միշտ ել կարելի յեր վստահու- թյամբ ասել, վոր նա ունենալու յեր ժամանակավոր խավա- բումներ, սակայն յերբեք չի հաջողվելու վարկաբեկել այն, նրա ճաճանչափայլ լեքիտասարդութունը ծածկելով հնամենի թախս- մաններով և անկումաչին եստետիզմի բուրվառներով:

Մենք առանձնապես պնդում ենք Պուշկինի, այսպես ասած հասարակական լեքիտասարդության վրա: Յեվ մենք պըն- դում ենք, վոր մեզ համար Պուշկինը հանդիսացավ այն (ըստ անալոգիայի), ինչ վոր հանդիսանում ե անտիկ արվեստը մարդ- կության համար՝ ըստ Մարքսի:

\* 60—ական թ. թ. գործիչների:

Հեղափոխութեան նախորդելն Պուշկինին պահում էին փառքի լույսի մեջ: Տեսնենք ինչ եր ասում բուրժուական առաջատար քննադատությունը մեծ բանաստեղծի գնահատման իր վերջին խոսքով: Թերևս այս առավելագույն պարզ կերևա այն գնահատությունից, վոր Բրյուսովն եր տալիս Պուշկինին, վորը (Բրյուսովը) հանդիսանում եր բուրժուական հաստատականութեան (Эстетство) ամենաառաջատար խավերի առաջնորդն ու վառ արտահայտիչը:

Բրյուսովը մինչև հեղափոխությունը, ամբողջ մի խմբի ձայնակցութեամբ, մեծարում ե Պուշկինին հատկապես՝ իբրև «մաքուր» արվեստագետի: Զանալով հասարակականագետ ե բարոյագետ արդարացին աչն արվեստագետների դերը, վորոնք նպատակ են դրել զարգարել լեվրոպայացող (европействующий) բուրժուաների կյանքն ու կենցաղը, ապրանք հանել շուկանոր, բուրժուական արխատկրատիային, Բրյուսովը ե նրան շրջապատողները Պուշկինի մեջ էյին տեսնում իրենց այդ դերի մեծ արդարացումը: Այս պատճառով ել մեծ մասամբ լուսթյան էյին մատնում Պուշկինի մեջ յեղած վողջ սոցիալականն ու վողջ պատկերականը:

Յերկրորդ պսակը, վոր դրեց Պուշկինի գլխին Բրյուսովը, նրա եկեկտիզմն ե հանդիսանում:

Ճիշտն ասած, Պուշկինի եկեկտիզմն ըստ էյության վողթե եկեկտիզմ ե, այլ արտասովոր բազմակողմություն (многогранность) ու լայնություն: Սակայն այն, ինչի վոր վերածվեց սիմվոլիստների կողմից Պուշկինի բազմակողմանիությունն ու լայնությունը, դարձավ եկեկտիզմ:

Բրյուսովին անսահմանորեն հաճելի յեր հանձինս Պուշկինի տեսնել, այսպես ասած, բոլոր կուլտուրաները, բոլոր ժանրերն ու յերաժշտական-պոետիկական բոլոր ձևերը (лаз) կրող մի մարդու:

Հեղափոխությունից հետո կոմկուսակցութեան մեջ մտնող Բրյուսովը սակայն միանգամից չդարձավ պրոլետարական գնահատանքների ինչ վոր մուսնեակի: Շատ բաներում նա մնաց սահմանագծի վրա: Մի վոտքով չեր անցել չեղրը ե մերն եր, մյուս վոտքով նա ամբողջովին գեռ ես կանգնած եր բուրժուական կուլտուրայի հողի վրա: Բրյուսովն ամբողջութեամբ նվիրվեց Պուշկինյան ձևի արդյունավետ ուսումնասիրութեան: Խոսքի վարպետը, յերաժիշտն՝ ըստ Բրյուսովի հետագա աշխատու-

թյունների («իմ Պուշկինը») ծածկեց իր աստվածացրած պոետի վողջ հիասքանչ սոցիալական—հոգեբանական բովանդակությունը, այսինքն գաղափարական—եմոցիոնալ կողմը:

Յեկ անա այժմ հասել ե ժամանակը, յերը Պուշկինի գնահատությունը մենք ենք տալու:

Պուշկինը հանդիսանում ե կուլտուրական յերևույթի մի այնպիսի հսկայական որինակ, համեմատաբար այնքան ուսումնասիրված մի որինակ, վոր հենց նրա վրա կարող ենք ստուգել մեր մեթոդները ե սովորել այդ մեթոդների ճշտումը: Այստեղ մենք կարող ենք ապացուցել բանաստեղծի արտահայտած գաղափարների ե զգացմունքների նրա պատկերների, բառային ստիլի, յերաժշտութեան ե այլն—նրբին կախումն հասարակական այն բազայից, վորն ազդում ե նրա վրա իր դասակարգի միջոցով ե ավելի սպեցիֆիկորեն,—այն դասակարգերի խմբի միջոցով, վորոնց պատկանում եր բանաստեղծը:

Սակայն բացի իր ժամանակի հետ կապված՝ Պուշկինի հսկայական նշանակութունից, նշանակութուն ունի արդյոք Պուշկինը, յերը նրան անշատենք իր ժամանակից ե իբր թե մեզ ժամանակակից համարենք:

Մենք կարծում ենք, վոր այս տեսակետից Պուշկինն իր հետ կրում ե հսկայական արժեք նոր կյանքի կառուցման խնդրում:

Մեզ չի կարող չգրավել Պուշկինի հիմնական կենսուրախությունը: Շրջապատող կյանքի զարգացման հնարավորութեան զգացումը՝ մինչև ամբողջ բուրժուակալի հետաքրքրականութեան ու պրոգրեսիվութեան ընդունումն—ուղեկցում եր Պուշկինին իր ամբողջ կյանքի ընթացքում, չնայած բոլոր հարվածներին, վիրավորանքներին, հիասթափություններին ու թախծին: Այս կենսուրախությունը Պուշկինի որդանական հիմնական ուժն եր ե նրա բոլոր ապրումներն, ինչպես ե սրանց վողրերգական արտացոլումը այդ կենսուրախութեան պերմանենտ պայքարն են հանդիսացել արտաքին արգելքների դեմ:

Այս հոգեբանական պրոցեսի մյուս կողմն ե հանդիսացել Պուշկինի ձգտումը դեպի կրթությունը: Նրա ժամանակաշրջանի լավագույն մարդիկ բոլորն ել համակված են յեղել կենսակառուցման այս ձգտումով թե իրենց անձնական ե թե իրենց շուրջը «լուսավոր կյանք» կառուցելու ուղղութեամբ:

Պուշկինը համակված եր դեպի ամբողջականությունը

(ЦЕЛЬНОСТЬ) տանող այս բնազդային ձգտումով ավելի, քան մի այլ վոք: Սակայն այս բանի համար նա պետք է հսկայական աշխատանք կատարեր ինչպես շրջապատող միջավայրի (հասարակական և բնական) չերևույթների յուրացման ուղղութիւնով, այնպես ել իր սեփական ներքին կյանքի յերևույթների յուրացման ուղղութիւնով:

Պուշկինի ստեղծագործութիւնը վորոնումների բարձր ձեւերում՝ հավասարակշռութիւն վորոնումների պրոցես է հանդիսանում: Խնդիրն հանգում է միշտ ել՝ գեղարվեստական չերկի վերածել ապրումների՝ այսինքն գեղարվեստական ձեւափոխման միջոցով անձնականը մինչև հասարակականի աստիճանը բարձրացնել:

Ըստ այսմ պետք է ասել, վոր Պուշկինի անձնական ապրումները սերտորեն կապված էին իր խմբի, սրա հետ նաև տնտեսական—քաղաքական և կուլտուրական դրվածքի (уклад) սոցիալական ապրումների հետ:

Պուշկինը մեծ հավասարակշռութիւնով ընդունակ էր անձնական կրքով լուսավորել իր լիրիքական յերկերը. — բոլոր փորձերը, Պուշկինի առանձին արտահայտութիւնների հիման վրա, պնդելու, վոր իբր թե նրա լիրիկան բոլորովին անկեղծ է, այլ դեկորատիվ է (ֆորմալիստների ջանքերը), դուրկ են հիմնավորումից: Սակայն Պուշկինն ընդունակ էր վերափոխելու իր արյունը սուտակի (суток) և իր արցունքները մարգարիտների, այսինքն աշխատելու իր շատ հաճախ տանջալի ապրումների վրա ակնագործ — գեղարվեստագետի տոկունութիւնով ու մեթոդականութիւնով:

Մյուս կողմից — եպոսը (մասամբ և դրաման) պահանջում էր գոնե արտաքին ռեկտիվիզմ: Հանգամանքներն այստեղ պետք է իրենք խոսեն իրենց փոխարեն, հեղինակը չպետք է «միջամտի»:

Վ Պուշկինն իր եպոսում հաճախ (որ. «Յեվգենի Ռենգին») անսովոր վարպետութիւնով իր մեջ է ներառում հեղինակի անմիջական խոսքերը և լիրիզմի անմիջական ցոլքերը, սակայն միաժամանակ առկայում է Պուշկինի խոշոր աչառութիւնը դեպի ռեկտիվութիւնը: Այս առաջանում է Պուշկինի վստահութիւնից այն բանում, վոր յերկի համոզեցուցիչ լինելը շահում է, յերբ ընթերցողին թվում է, վոր իրականութիւնն այստեղ հավասար է իրեն և վոչ վոք ու վոչ մի կերպ, վոչ մի

չափով չի գունավորել (прикрасить) կամ չի դիմափոխել (подтасовать) դեմքերն ու ձայները:

Պուշկինի այս ընդունակութիւնը համասեռ է նաև մի այլ կողմ: Նրա պոեզիան հուզական է և մտքերով հարուստ. բաց և հուզերը և մտքերը համարյա միշտ ամփոփված են իր կոնկրետութիւնով ու պլաստիկականութիւնով գերող պատկերում:

Վերջապես Պուշկինն ամենարարձր կատարելութիւն հասցրեց իր հիմնական գործիքը — խոսքը — իբրև արտահայտման միջոց, և խոսքն իբրև յերաժշտական ելեմենտ, բնավորում պատկերավորութիւնն ու յերաժշտականութիւնը Պուշկինը միասնականութիւն էր բերում, վորին հաղվագյուտ դեպքերում է հասել մարդու արվեստը չերկրագնդի վրա:

Պուշկինի ժամանակաշրջանը և ստեղծագործութիւնը լեզվի տեսակետից կլասիկ էր ու կանոնական: Կասկած չկա, վոր հետագայում և մեր պոեզիան և հատկապես մեր պրոզան դուրս յեկան պուշկինյան շրջանակներից: Սակայն նրանք միաժամանակ դադարեցին այնպես ավարտված լինելուց, ինչպիսին էին իրենց կուլմիսացիայի (գաղաթնակետի) մոմենտին:

Նույնպես և վոչ մի կասկած չկա, վոր մենք, մեք ստեղծագործութիւն ընթացքում անշուշտ կանցնեք վորոնումների, տեղաշարժերի բավականին յերկար շրջան, նախապատրաստական շրջան, և վոր մեզ կհաջորդի իր բարձրութիւնով չտեսնված սոցիալիստական կուլտուրայի շրջանը: Այս նոր կուլմիսացիայի բարձրունքից, թերևս, ազնվական — պուշկինյան գաղաթը միայն աստիճան, միայն լեռնալանջ կթվա: Սակայն մինչ այդ մենք կդիտենք Պուշկինի հասած լեզվական վարպետութիւնն, իբրև ինչ վոր մի խոշոր բարձրութիւն՝ մեզինից այն կողմ գտնված ձաձանչափայլ, դեռահաս-պատանեկական լեզվական ու վոճային հավասարակշռութիւն տեսակետից:

Պուշկինն առհավետ մտել է մարդկութիւն կուլտուրայի մեջ, և մարդկութիւն սոցիալիստական ազատագրումը բոլորովին չի հարվածի նրան: Հիշեցեք, ինչ էր ասում Լինինը Տոլստոյի մասին.

«Արվեստագետ Տոլստոյը հայտնի յե նույնիսկ Ռուսաստանում չնչին փոքրամասնութիւն: Վորպեսզի նրա խոշոր յերկերն իսկապես բոլորի սեփականութիւն դառնան, պայքար և պայքար է անհրաժեշտ այն հասարակարգի դեմ, վորը միլիոններին ու տասնյակ միլիոններին խավարի, աղքատութիւն, տաժանակիր աշխա-

տանքի յե դատապարտել, պետք է սոցիալիստական հեղաշրջում:

Տոլստոյը տվել է գեղարվեստական յերկեր, վորոնք միշտ կգնահատվեն և կկարգացվեն մասսաների կողմից, յերբ նրանք իրենց համար կյանքի մարդկային պայմաններ կստեղծեն, տապալելով կալվածատերերի ու կապիտալիստների լուծը»:

Հենինի այս խոսքերն ավելի Պուշկինին են վերաբերում, քան Տոլստոյին:

Ահա բարձրանում են մեր կառուցած կենցաղի նոր քաղաքներն ու նոր գյուղերը: Մենք կառուցելու յենք իրեղեն շրջապատ, մենք կառուցելու յենք մեր ներքին աշխարհը:

Իհարկե, այդ ներքին աշխարհն անհատապաշտական (индивидуалистический) չի լինելու, ներքուստ պարփակված աշխարհ չի լինելու: Նա ներգաշնակված է լինելու մյուս մարդկանց «ներքին աշխարհին»: Մարդկանց անջատող այն արգելքները, վոր ստիպում էյի սարսափով գոչել միայնակության մասին (որինակ, Մոպսսանին) և խոսել այն մասին, վոր «ուրիշի հողին մուծն է», — կվերանան: Բայց և այնուհանդերձ ամեն մի անձն (личность) կլինի անհատ, և այս մասին Մարքսը մեծ յեռանդով կարողանում էր պնդել: Սոցիալիզմը բերում է վոչ թե անհատի վոչնչացում և հոտայնություն (стадность), այլ անձնական մոմենտների անսովոր հարուստ զուգակցություն՝ հասարակականի հետ:

Մենք բավականին ռեալ կերպով «չերազում ենք» այն ժամանակը, յերբ ամեն մի միջին մարդ՝ աշխարհն ապրելու (переживать мир) և ստեղծելու տեսակետից ավելի հարուստ կլինի, քան անցյալի մարդիկ: Բայց մեզ առաջժ պետք են ողնականներ՝ մեզ դասեր են պետք, և ներքին աշխարհի կառուցման գործում, պրոլետարների և գյուղացիների սևուցիչ կարող է լինել և պետք է լինի մյուսների շարքում Պուշկինը: Ազնվականականը, մեռածը կվանվի նրանից, պատմական հետադուրման առարկա կդառնա, բայց կենդանի կողմերը կծաղկեն: Պուշկինի գանձարանի յուրաքանչյուր հատիկը յուրաքանչյուր քաղաքացու կյանքում սոցիալիստական վարդ կամ խաղողի սոցիալիստական վողկուց կտա:

Պուշկինի ժամանակաշրջանի մարդիկ, Բելինսկին նախ և առաջ, նրան այսպես էյին գնահատում:

«Պուշկինի առավելաչափ ազդեցությունն առաջանում էր նրանից, վոր Ռուսաստանի նկատմամբ նա իր ժամանակի զավակն էր այս բարի բուն իմաստով, վոր նա իր հայրենիքին հավասար էր գնում, նրա մտավոր կյանքի զարգացման ներկայացուցիչն էր»:

Մենք այժմ դգում ենք, վոր իր ժամանակի «զարգացումն» արտահայտելով, Պուշկինը գնահատելի դարձավ նաև մեզ համար, հարյուր տարի անց և համաշխարհային մեծագույն հեղափոխությունից հետո:

Յերեք-չորս տարի առաջ յես զըոսնում էյի Ոստաֆյեվոյի պուրակում, վորտեղ Պուշկինը հաճախ էր լինում: Այս հին չքնաղ պուրակը զարդարված է արձաններով՝ Ժուկովսկուն, Կարամզինին, Վյազեմսկուն: Այս արձանների շարքում կա և մեկը, Պուշկինին վոչ այնքան մեծը, վորի հեղինակն է Պուշկինին հայտնի արձան կերտողը՝ Մոսկվայում:

Պարկում կային մի խումբ եքսկուրսանտ կոմյերիտականներ, յերեք-չորս տղա, յերեք չորս աղջիկ: Նրանք հետաքրքրությամբ շրջում էյին մուգեյը, պուրակում և կանգ առան Պուշկինի արձանի առջև:

Նրանցից մեկը կուցավ (մակագրությունը վորոշ չափով անընթեռնելի չեր դարձել) և կարդաց.

„Здравствуй, племя младое, незнакомое“

(Վողջույն քեզ, սերունդ մատաղ, անծանոթ)

Յես կանգնած էյի բավականին մոտ և ապշել էյի այն անսովոր պատեհությամբ, վոր ստացավ այդ միջավայրում արձանի մակագրությունը: Ըստ յերևույթի՝ ապշել էյին նաև կոմյերիտականները: Նրանք լուեցին և իրար նայեցին: Ուղղակի նրանց էր դիմում գերեզմանից մեծ ձայնը: Կարմիր թաշկինակով փոքրիկ կոմյերիտուհին Պուշկինին ուղղեց իր վեհերոտ, վորոշ զարմանքով, սակայն և բարեսիրությամբ լի աչքերը, և կամացուկ ասաց.

«Վողջույն, Պուշկին»

ՊՈՒՇԿԻՆԸ  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ.  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ՄԻ ՊԱՏԿԵՐ ՊՈՒՇԿԻՆԻ ԿՅԱՆՔԻՑ,

1814 թվի դեկտեմբերն եր: Փոխադրական քննությունները մոտենում էյին: Լիցեյում փոխադրական քննություններն՝ ընդհանրապես նշանակալից դեպք եր: Բաղաքից գալիս էյին կարևոր անձինք, և վարչությունը քննությունից առաջ միշտ բռնվում եր փառասիրության տենդով, աշխատելով ըստ հնարավորության շատ փայլել:

Այս անգամ Լիցեյում լուր տարածվեց, վոր գալու յե Դերժավինը: Լուրը հաստատվեց:

Բանահյուսության ուսուցիչ Գալիչը, վոր յերբեմն հարբում եր, մի անգամ դասի ժամանակ ամենահանդիսավոր տեսք ընդունելով՝ հայտարարեց.

— Պարոնայք, նախազգուշացնում եմ, վոր փոխադրական քննություններին ներկա պիտի լինի մեր ականավոր քնարերգու Գավրիլ Ռոմանովիչ Դերժավինը: Նա հազաց և նշանակալից հայացքը ձգեց դեպի Պուշկինի կողմը:

— Իսկ ձեզ, Պուշկին, խորհուրդ եմ տալիս առանձնապես ի նկատի առնել այս և հանդիպել Դերժավինին բանաստեղծական նվերով:

Այդ ժամանակ Պուշկինը զրուցում եր Յակովլևի հետ: Լսելով Գալիչի խոսքերը նա անսպասելի կերպով գունատվեց և շրթունքը կրծեց:

Դասերից հետո Պուշկինը լրակյաց և մտազբաղ եր: Յերբ նրան վորևե բանի մասին հարցնում էյին, պատասխանում եր տհաճությամբ և համարյա կուպիտ: Կյուխլյան (Կյուխլբեկերը) խորհրդավոր կերպով թեանցուկ արեց նրան:

—Պուշկին,—ասաց նա,—բնչ ես կարծում, յես ել եմ ուզում վոտանավոր ձոնել Դերժավինին:

Պուշկինը բռնկվեց և թեք հետ քաշեց. հանկարծ նրա աչքերը արյունով լցվեցին. նա չպատասխանեց Վիլհելմին (Կյուլխելբեկերին) և գնաց իր սենյակը, կանգնած թողնելով զարմանքից բերանը բաց Վիլհելմին:

Հետևյալ օրը բոլորը գիտեցին, վոր Պուշկինը վոտանավոր և գրում Դերժավինի համար:

Լիցեյը հուզվում էր:

Վրա հասավ քննությունների օրը:

Պուշկինը առավոտվանից գեռ լուսկցաց էր և կոպիտ: Նա շարժվում էր ծուլորեն և քնկոտ, վոչինչ չէր նկատում և նույնիսկ դիպչում էր շուրջը յեղած իրերին:

Մույլ-ծույլ՝ բոլորի հետ միասին նա ել գնաց դահլիճ:

Բազկաթոռի վրա նստել էյին համազգեստավորներ և սև ֆրակավորներ. Վասիլիյ Լվովիչ Պուշկինի (Ալ. Պուշկինի հորեղբայրը, վոր հայտնի յեր վորպես բանաստեղծ) վզնոցն աչքի յեր ընկնում իր սպիտակությամբ և շքեղությամբ: Նա կանոնավոր կերպով հաճախում էր քննություններին և Սաշայի, Ալեքսանդր Պուշկինի կյանքով ավելի էր հետաքրքրվում, քան իր քեզայր Սերգեյ Լվովիչը՝ հայրը:

Քննությունն սկսվեց: Հարցաքննում էր բարոյադիտության ուսուցիչ Կուկիցինը:

Դերժավինը չէր լսում: Նրա գլուխը յերերում էր. նա պղտոր հայացքով նայում էր բազկաթոռներին: Նրա ուշադրությունը գրավում էր Վասիլիյ Լվովիչի վզնոցը:

Այսպես յերերալով և ննջելով նստած էր նա:

Սկսվեց բանահյուսության քննությունը:

Ցակովլեից և Կյուլխելբեկերից հետո կանչեցին Պուշկինին:

Գունատ և մճակահանորեն առաջ յեկավ Պուշկինը:

Գալիչը գիտեր Դերժավինի համար Պուշկինի գրած վոտանավորի մասին: Ամբողջ Լիցեյը անգիր գիտեր այդ:

Հենց առաջին սողից հետո հուզումը պատեց Դերժավինին: Նա աչքերը հառեց դեպի պատանին: Կիտած հոնքերը բարձրացան, նրա խոշոր ոնգները լայնացան: Շրթունքները նկատելի կերպով շարժվում էին, Պուշկինից հետո կրկնելով նրա արտասանած հանգերը:

Դահլիճում տիբում էր լուսթյուն:

Պուշկինն ինքն ել լսում էր իր հնչուն լարված ձայնը և յենթարկվում էր նրան: Նա չէր հասկանում իր կարգացած բառերը—նրա ձայնի հնչյունները տանում էյին նրան իրենց հետեվից:

Դերժավինը յեկ Պետրովր ձոնում էյին յերգերը

Հետսնեթին բարձրանչուն քնարնեթի լաբեով:

Ձայնը հնչում է—թվում է թե ահա կկտրվի:

Դերժավինը ձգվեց բազկաթոռի վրա, աչքերը ծածկեց և այդպես լսում էր մինչև վերջ:

Լուսթյուն:

Պուշկինը շուռ յեկավ և փախավ:

Դերժավինը ցատկեց տեղից և գուրս վաղեց: Նրա աչքերում արցունքներ կային: Նա վնասում էր Պուշկինին:

Պուշկինը սանդուխքներով վաղեց վերև: Նա հասավ իր սենյակը, և լացախառն ծիծաղով ընկավ բարձերի վրա: Մի քանի րոպեյից հետո ներս վաղեց Վիլհելմը, կտավի նման գունատված: Նա վրա պրծավ Պուշկինին, գրկեց նրան, սեղմեց կրծքին և շշնջաց:

«Ալեքսանդր, Ալեքսանդր դու իմ պարծանքն ես: Բախտավոր լինես...»

Քե՛զ է հաճանում Դերժավինն իր քնար:

ԳԵՆԵՐԱԼ — ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿՈՄՍ ՎՈՐՈՆՅՈՎԸ  
ՅԵՎ ՊՈՒՇԿԻՆԸ

Վորոնցովն իր ազանձնասենյակում նստած կարգում եր գաղտնի գործակալներից մեկի դեկուցագիրը: Չեկուցագրի մեջ կեղծավոր և ճարտասան վոճով հաղորդված եր.

«Չարամիտ վոտանավորները, վորոնց մասին Ձերդ պայծառափայլությունը բարեհաճեց տնորինելու, իրոք հորինված են Պուշկինի կողմից, վորին ապացույց կարող են ծառայել հարակից տողերը, վոր գտնվել են նրա անպետք թղթերի մեջ: Մրանից բացի կցվում է նույն պարոն Պուշկինի՝ մեր կողմից բռնըված մի նամակը՝ գրված իր մայրաքաղաքի բարեկամին: Այս նամակի անբարտավան տոնը...»

Վորոնցովը քմահաճությամբ դեն շարտեց չինովնիկի գեկույցը և մատների ծայրերով դուրս քաշեց մոխրագույն ծրարի միջից Պուշկինի Բեստուժովին ուղղած նամակը:

Արյունը կուտակվեց յերեսին, յերբ նա շտապով կարգաց անփութորեն ու հապճեպ գրված մի քանի տողերը: «...Մեր տաղանդներն աղնվաբարո չեն և անկախ—կարգում եր Վորոնցովը—Դերժավինի հետ միասին լռեց շողոքորթության ձայնը... Ահա թե ինչ չի հասկանում ստոր Վորոնցովը: Նա յերևակայում է, վոր ոռու քանաստեղծը կհայտնվի նրա նախասենյակում նվիրաբերությամբ կամ ուղերձով, իսկ նա հայտնվում է հարգանք պահանջելով...»

—Գարշելի,— փնթփնթաց Վորոնցովը:

Դուռն անհամբեր թակեցին:

Կոմսը հագիվ կարողացավ նամակը և ծրարը դնել սեղանի արկղը, յերբ առանձնասենյակը մտավ նրա կինը, կոմսուհին— Յելիզավետա Կսավերյովնան: Չնայած իր յերեսուն տարիքին, կոմսուհին կուսական վայելուչ հասակ ուներ, իսկ նրա գեղեցիկ դեմքը՝ թարմության ու թեթևամտության ինչ վոր անվորսալի զուգորդումը, նրան յերիտասարդ աղջիկ եր դարձնում:

—Ի՞նչ է պատահել Ձեզ, Լիզա:

Վորոնցովը զարմանքով նայում եր կնոջ դեմքին: Կոմսուհու վոչ խոշոր, սովորաբար ուրախ և քնքուշ աչքերը նայում ելին սառնությամբ և չարությամբ: Փոքրիկ շրթունքները գունատ ելին ու ցնցվում ելին:

—Ի՞նչ է պատահել Ձեզ,— մեկ ել կրկնեց նա:

Այն, վոր դուք և միայն դուք եք Պուշկինի հետ տեղի ունեցած անհնարին պատմության պատճառը: Դուք նրա մասին գաղտնի ամբաստանագիր եք ուղարկել:

Վորոնցովն ուղղվեց իր ամբողջ հասակով յեվ յերկար մատների ծայրերով հենվեց սեղանի մահուդին:

—Միրելի Լիզա, յես խնդրում եմ ձեզ կշռադատել այն, ինչ վոր դուք արտասանեցիք:

Կոմսուհին ձեռքերը սղմեց քունքերին:

—Սուսկալի չե այդ: Ռուս մուժիկներն անտաշ են, բայց յեվրոպականությամբ հղկված ոռու արխատոկրատները շատ ավելի վասնգավոր են նրանցից: Այնտեղ գոնե տեսնում ես՝ ում հետ գործ ունեն. իսկ այստեղ ջենավմենի դիմակն է, իսկ դիմակի տակ...

—Յես շատ եմ ցավում, վոր Դուք այդպես թեթևամիտ գտնվեցիք, կապելով Ձեզ ոռուների հետ—սառնությամբ ընդհատեց Վորոնցովը:—Գիտեմ ինչպես են պաշտպանում պատիվը ձեր՝ կոմս Բրանիցկինների ընտանիքում, բայց յես Պուշկինին Ողեսայից վերացնելը անհետաձգելի յեմ համարում:

—Դա Ձեր գործն է...ընդհատեց կոմսուհին...բայց գաղտնի ամբաստանագիր...»

Վորոնցովը հոնքերը կիտեց:

—Դուք բառերը գործ եք ածում առանց հասկանալու նրանց նշանակությունը: Նեսսելրոդին ուղղաժա նամակում յես մատուցել եմ Պուշկինի տաղանդին ու խելքին անհրաժեշտ հարգանքը, և հենց այդ հարգանքից յեղնելով է, վոր միջնոր-

զել եմ կառավարութեան առաջ՝ փոխադրել Պուշկինին մի այլ նահանգ, վորտեղ հասարակութունը համակված է վոչ այնքան վտանգավոր տրամադրութիւններով, ինչպես Ուեսսայում է վորտեղ վարակիչ և ծայրահեղ գաղափարները ազդեցութիւնը բանաստեղծի համար այնքան սպանիչ չի լինի...

— Ահա, ահա... — կոմսուհին վեր ցատկեց — ահա հենց այդ է ամբաստանազերը. վրեժխնդիր ամբաստանազեր. դուք վերա-վորված եք Պուշկինի եպիգրամներից, չեք կարող ներել նրա համբավը:

Վորոնցովը գոռոզարար սեղմեց շրթունքները:

— Դուք, — առաջվա նման տաքանալով շարունակեց կոմսուհին, — Դուք ուղարկուած եյիք նրան մորեխի դեմ պայքարելու, ինչ վոր հիմար թվեր արտադրելու: Յես ինքս տեսել եմ, ինչպես Դուք, ահա այստեղ, այս առանձնասենյակում ինչ վոր չինովնիկական զեկուցագրերի վրա մակագրուած եյինք «հանձնարարել կոլլեժսկի սեկրետար Ալեքսանդր Պուշկինին»...

— Նա ինքը հենց կոլլեժսկի սեկրետար է, — հանգիստ արտասանեց Վորոնցովը:

— Պան Հիսուս, — գոչեց կոմսուհին լեհերեն լեզվով, ինչպես միշտ՝ հուզված ընկերներին: — Յեվ Դուք, Դուք ձեզ համարուած եք լեզվուպացի... Դուք ազնվազարմ պան էք, սամարուս է ուրիշ վոչինչ: Պուշկինը չի սողում, չի քճում: Պուշկինը Ձեզ հետ վարվում է ինչպես արխատոկրատն արխատոկրատի հետ և ձեր ինքնասիրութիւնը դրանից խոցված է:

Կոմսը ձեռքը տարավ համազգեստի քղանցքից ներս և մի քանի քայլ առաջ շարժվեց դեպի կոմսուհին:

— Վերջ տանք այս տեսարանին, — ասաց նա նույն հանգիստ — սառը տոնով. լես չեյի ուզում շոշափել մի ուրիշ պատճառ, վորից լես ստիպված եմ ցանկանալ Պուշկինի հեռացումը:

— Ելի ինչ, — անվստահորեն հարցրեց կոմսուհին:

— Այն, վոր Պուշկինն իր անամութեամբ չի սահմանափակվում միայն տիկին Ռիզնիչի և նմանների շրջանով: Յեվ այն, վոր լես չեմ ցանկանում վոր Ձեր մասին շրջեն նման վոտանավորների թերթիկները, վորոնցով նա պարզեատրել է Դավիդով ամուսիններին:

— Յես Ալեքսանդր չեմ, — զայրույթով պոթկաց կոմսուհին:

— Իսկ յես Ալեքսանդր Դավիդովը չեմ, — հատու կերպով արտասանեց նա յուրաքանչյուր բառը — և ի նկատի չեմ առնի»

վոր զանցառու չինովնիկ Պուշկինը բացի նողկալի պակասի-ներից հեղինակում է նաև ինչ վոր քաղցրահնչյուն վոտանավորներ:

— Բավական է, լես չեմ կարող այլևս Ձեզ լսել:

— Վոչ, — տիրապետելով իրեն շարունակեց Վորոնցովը, — բարեհաճեցեք լսել: Յես չեմ կարող մտքով անգամ անցկացնել, վոր ձեզ համար հաճելի լինի տեսնել ձեր վոտքերի մոտ սիրահարված Պուշկինին, քանի վոր այդ դեպքում Ձեր հաջողութիւնը վոչնչով չի տարբերվի զանազան հույն կանանց, մոլդավուհիների, հրեուհիների, իտալական դերասանուհիների — հաջողութիւններից:

— Դեհ լսեցեք, չեմ ցանկանում Ձեզ լսել:

— Ինչպես կցանկանաք:

Վորոնցովը լսեց:

— Յերեխաների հետ միասին յես կմեկնեմ Բելայա Տերկով մորս մոտ:

Յես հոգնել եմ և ուզում եմ հանգստանալ:

— Ինչպես կցանկանաք, — կրկնեց Վորոնցովը:

Յերը կոմսուհին դուրս յեկավ, նա մատների ծայրերով կրկին վերցրեց Պուշկինի նամակը, նորից ծրարի մեջ դրեց և գցեց հերթական փոստի համար պատրաստված պետական ծրարների մեջ:

## ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նովորոսի և Բորովիչի քաղաքների միջև փոքրիկ կայա-  
րան է: Յուրաքանչյուր մեկը՝ վոր ընկնում է այստեղ ու  
սպասում, մինչև վոր կայարանի վերակացուն շեշտակի նայելով  
և հասկանալով նրա աստիճանն ու կոչումը՝ ձիեր կտրամադ-  
րի նրան, ահամայից սկսում է թափառել սենյակում և դիտել  
պատերին կախված հաստամարմին Աննա Իվանովնայի, ճաղատ  
Պավելի հին, ծանոթ նկարները, կամ բարկացած զորապետ-  
ների անձանոթ նկարները: Իհարկե կախված է այստեղ նաև  
«Անառակ վորդու պատմությունը»:

Յեթե դուրսն աշուն է և անձրև է մազում, սպասելն ա-  
ռանձնապես ձանձրալի յե:

Սպասողները յերկու հոգի ելին՝ մեկը հաստամարմին, ա-  
լեխառն, փոքրիկ և արագաշարժ աչքերով մի մարդ՝ իսկ մյուսը  
մի հուսար:

Նրանք ձանձրութից զբաղված ելին թղթախաղով:

Այդ միջոցին ներս մտավ փոքրահասակ արագաշարժ  
մի մարդ: Նա վատ եր տրամադրված, հայհոյում եր վերակա-  
ցուին և գողգոռում նրա վրա, վոր նա խոստացավ ձիեր  
տրամադրել մի ժամից հետո միայն. ապա նստեց բազկաթոռին,  
սկսեց յեղունգները կրծոտել և պահանջեց ճաշ մատուցել իրեն:

Նա թեթևակի վողջունեց խաղացողներին, դուրս նայեց  
պատուհանից, սկսեց ինչ վոր յեղանակ սուլել, հետո հե-  
տաքրքրվեց խաղով և սկսեց հետևել: Նրան ճաշ բերին և  
մի շիշ ոտ:

Վերջացնելով ճաշը նա կանչեց վերակացույին և վճարեց  
հաշիվը:

Վերակացուն նայեց դրամին և յերկչոտ ձախով ասաց:  
— Հինգ ուրբի պակաս է, ձերդ վողորմածություն:  
Ճամբորդը մանր դրամ չուներ. նա վերցրեց վերակա-  
ցույի ձեռքից հինգ ուրբի, մոտեցավ խաղացողներին և ժալ-  
տալով ասաց.

— Թույլ կտամք, — և դրամը դրեց թղթախաղի վրա:

Հաստամարմին մարդը տարավ:

Այդ ժամանակ ճամբորդն շտապով հանեց գրպանից իմ-  
պերիալ — և նորից օանուլ տվեց: Ճամբորդը հոնքերը կիտեց,  
մոտեցրեց խաղացողներին իր բազկաթոռը և սկսեց խաղալ:

Յերկու ժամից հետո ձիերը պատրաստ ելին: Նա կար-  
գադրեց սպասել: Մի ժամից հետո նա նորից վեր կացավ, վճա-  
րեց հաստամարմին մարդուն 1400 ուրբի, իսկ 200 ուրբու-  
ղիմաց տվեց հետևյալ ստորագրությունը՝ «այսու պարտավորում  
եմ ըստ պահանջի վճարելու 200 ուրբի: Ալեքսանդր Պուշկին»:

Մրտնեղելով թե իր և թե անձրևի վրա, նա դուրս յեկավ  
կայարանից, փաթաթվեց թիկնոցում և լուռ ու մունջ գնաց մին-  
չև հետևյալ կայարանը:

Հետևյալ կայարանը կոչվում եր Չալաղի (բառացիորեն՝  
խրվելու վայր):

— Իսկ վոր Չալաղի — շշնջաց նա, ներս մտավ կայարան  
և անհամբերությամբ սպասելով ձիերին, սկսեց խոսակցել  
տանտիրուհու հետ, վորը դեռ մի ջահել կին եր, լայն հագու-  
տով և անշարժ կյանքից հաստացած մարմնով:

— Չանձրալի յե՞ ձեզ համար միևնույն տեղում. — հարցրեց  
նա ժալտալով.

— Վոչ, ինչո՞ւ յե ձանձրալի, մեկ դես, մեկ դեն, չես ել  
նկատում ինչպես է որն անցնում:

«Իսկի տեղից ել չի շարժվում» — մտածեց Պուշկինը:

— Իսկ վաղո՞ւց է վոր այստեղ եք.

— Տաս տարի յե արդեն:

«Տասը տարի այս կայարանում... մտածեց նա, — ձանձ-  
րութից կարելի յե մեռնել: Աստված իմ, չե վոր Լիցեյը  
վերջացնելուց հետո անցել է 10 տարի»:

Լսվեց դանգակի ձայն, մուտքի մոտ միանգամից կանգ  
առավ չորս կառք:

Առաջին կառքից ցած թռավ Փելլեյեզերը (գազանի թըղ-  
թատար) ներս մտավ սենյակ և զցեց սեղանի վրա ուղեգիրը:

—Յերեւի լեհեր են,— կամացուկ ասաց Պուշկինը տանաիրուհուն։

—Այո, չերեւի,— ասաց տանաիրուհին,— նրանց այժմ ասնում են։

Ֆելդշեգերը խեթ—խեթ նայեց նրանց, բայց վոչինչ չասաց։ Պուշկինը դուրս չեկավ բանտարկյալներին նայելու։ Իմացի պլոկված սյանը հենված կանգնած եր ֆրիդե շինելով, բարձրահասակ, սպիտակահեր, կորացած մեջքով և մթագնած հայացքով մի բանտարկյալ։

Նա ծուլ հայացքով նայեց Պուշկինին, ապա աննպատակ կերպով նայեց յուր ձեռքին և չեղունգներին։

Քիչ հետու կանգնած եր յերեք կառք, վորոնցից դեռ իջնում էյին ժանդարմները և բանտարկյալները։

Բարձրահասակ ծերուկին մոտեցավ նույնպես բարձրահասակ և կորացած, բայց յերիտասարդ մի բանտարկյալ, նույնպես ֆրիդե շինելով և սովորականից բարձր փափախով։

Պուշկինը տեսաճությամբ նայեց նրան։ Բանտարկյալը սև էր, նիհար, չերկար սև մորուքով։

«Ո՞ւմ ե հիշեցնում սա» — մտածեց Պուշկինը։

«Հա, հա, Ֆոգելին։ Սատանան գիտե, թե սա ինչ բան է»։

Ֆոգելը հանդուցյալ Միլորադովիչի գլխավոր լրտեսն էր, վորն այժմ ել Պետրբուրգում լրտեսությամբ եր դբադվում։ Ամբողջ Պետրբուրգը ճանաչում եր նրան։

«Լրտես է,— մտածեց Պուշկինը,— տանում են հարցաքննության կամ բացատրություններ տալու»։

Պուշկինը գարշանքով կնճռոտվեց և դարձավ նորից դեպի լեհ բանտարկյալը, մինչդեռ այդ բարձրահասակ չերիտասարդն աշխուժությամբ նայում եր Պուշկինին։ Ձգալով նրա հայացքը, Պուշկինը բարկացած դարձավ դեպի նա. այդպես դեմ հանդիման նրանք նայում էյին մեկ-մեկու։

—Ալեքսանդր,— ասաց «լրտեսը» խուլ ձայնով։

Պուշկինն ապշեց,— իսկ «լրտեսը» փարվեց նրա կրծքին, համբուրում եր նրան ու լալիս։

—Ձե՞ս ճանաչում, սիրելիս, հոգյակս

Պուշկինը ցնցվեց և շշնջաց։

—Վիլհելմ, հոգյակս, այդ դու յես, յեղբայր, ուր են տանում քեզ։

Յե՞վ նա արագորեն շարունակեց։

—Ի՞նչպես ե առողջութունդ։ Ձերոնք առողջ են, վաղուց չե, վոր տեսել եմ. բոլորը հիշում են քեզ, հոգում ենք քո մասին՝ գուցե հաջողվի։ Ի՞նչ գրքեր ուղարկեմ քեզ։ Ձե՞ վոր գրքեր թույլատրում են քեզ։

Յերիու պնդակազմ ժանդարմ բռնեցին Վիլհելմի ուսերից և քարշ տալով հեռացրին նրան։

Յերրորդը ձեռքով հրեց Պուշկինի կրծքին՝ նրան հեռացնելու նպատակով։ Բանտարկյալները խմբված և շունչները պահած կանգնած էյին։

—Ձեռքերդ հեռու,— ասաց Պուշկինը, կատաղությամբ նայելով ժանդարմին։

—Բանտարկյալների հետ խոսելն արգելվում է, պարոն,— ասաց ժանդարմը, բայց ձեռքերը հետ քաշեց։

Ֆելդշեգերը դուրս թռավ։ Նա բռնեց Պուշկինի թևից և գոռաց։

—Ի՞նչու դուք խախտում եք կանոնները։ Կպատասխանեք որենքի առաջ։

Պուշկինի թևերից բռնած նա գլխով նշան արեց ժանդարմներին դեպի Վիլհելմի կողմը։

Պուշկինը չեր լսում ֆելդշեգերին և չեը դգում, վոր նա իր թևը բռնել է. նա նայում է միայն Վիլհելմին։

Վիլհելմին քաշ տվեցին դեպի կառքը։ Նա վատ եր զգում իրեն։ Նրա դեմքը գունատ եր, աչքերը շաղվել էյին, գլուխը կախ եր ընկել կրծքին։ Նրան նստեցրին. ժանդարմները թիթեղյա բաժակով ջուր տվին նրան։ Նա մի կում խմեց, նայեց Պուշկինին և անխելի ձայնով արտասանեց։

—Ալեքսանդր.

Պուշկինը թևը պոկ տվեց և վաղեց դեպի նա։ Ուզում եր հրաժեշտ տալ, բայց ֆելդշեգերը բղավեց։

—Սոսակցություններ թույլ չտալ։

Ժանդարմը լուռ հրեց Պուշկինին ձեռքով։

Պուշկինը վաղեց ֆելդշեգերի մոտ և խնդրեց։

«Լսեցեք».— նա իմ ընկերն է, թույլ տվեք վերջապես հրաժեշտ տալ նրան. յես ունիմ 200 ուրբի, թույլ տվեք տալ նրան»։

Ֆելդշեգերը նայելով դեպի սթարածութունը գոռաց։

—Հանցագործներին դրամ պահել չի թույլատրվում։

Նա մոտեցավ Վիլհելմին, և հարցրեց խստորեն.

—Ի՞նչ իրավունք ունես կողմնակի մարդկանց հետ խոսելու։

— Իս Պուշկինն ե. միթե չե՞ք ճանաչում նրան: Նա, վոր յերկեր ե գրում:

— Յես վոչինչ չգիտեմ,—ասաց Փելլեյեզերը հոնքերը կիտելով,—չառարկել:

Ապա նա հրամայեց կառապանին.

— Շարժվեցե՞ք. կես վերստի վրա կսպասեք մեզ:

Կառքը շարժվեց: Վիլհելմը շրջվելով դեպ հետ՝ ժանդարմի ուսի վրայից լուռ նայում եր Պուշկինին: Յերկու ժանդարմ նրա թևերից ամուր բռնել եյին:

Կառքը գոգոտելով և ցեխը ցրելով տալով սլացավ:

Այն ժամանակ Պուշկինը արյունակալած աչքերով վազեց Փելլեյեզերի մոտ և գոռաց.

Հա, և այդպես դուք թույլ չտվիք ինձ հրաժեշտ տալու իմ ընկերոջը, չթողեցիք՝ նա դրամը վերցնի: Ինչպէս ե ձեր անունը, սիրելիս: Յես ձեր մասին կխոսեմ Պետրբուրգում:

Փելլեյեզերը վախեցավ և վոչինչ չպատասխանեց:

— Անունդ, անունդ,—գոռում եր Պուշկինը շառագունած դեմքով:

— Իմ անունս Պադգորնի յե,— ընդհատ պատասխանեց Փելլեյեզերը:

— Հրաշալի,— շնչակտուր ասաց Պուշկինը:

— Յերբ հանցագործը բանտ ե դրված, ապա նա իրավունք չունի դրամ պահելու,— խոժոռած դեմքով ասաց Փելլեյեզերը՝ հոնքերի տակից նայելով Պուշկինին:

— Թքել եմ քո բանտի վրա,— բղավեց Պուշկինը:— Թքել եմ քեզ վրա յե ջո բանտի վրա յել: Յես ինքս յեղել եմ աքսորում, բայց վերջը խոմ թողեցին: Ինչպէս համարձակվեցիր դու իմ թևից քաշել, խոսիր:

Փելլեյեզերը հետ քաշվեց, նայեց Պուշկինին, վոչինչ չպատասխանեց նրան և ներս գնաց կալարան՝ ուղեգիրը գրելու:

Պուշկինը հետևեց նրան. նրա շրթունքները գողում եյին: Ինչպիսի ժամանակ նա ազահորեն հարցրեց սյան մոտ կանգնած ծերունուն.

— Մըր են տանում ձեզ.

Նա թափ տվեց ուսերը—չգիտենք:

Բանտարկյալները լուռ եյին:

1827 թ. հոկտեմբերի 16-ին Վիլհելմին բերեցին Ինսբուրգի բանտը:

## ՊՈՒՇԿԻՆԻ ԹԱՂՈՒՍԸ

Գիշերվա ժամը 12-ին Իեմուսի պանդոկին, վորտեղ իջեվանել եր Ալեքսանդր Իվանովիչ Տուրգենևը, մոտեցավ մի պետական կառք:

Մուտքի դռան մոտ ժանդարմական համազգեստով մեկը ուժգին զանգահարեց: Իրան ապակու հետևից փայլեց դռնապահին շոյանազգեստը և ծանր դուռը կամացուկ բացվեց: Կարճ հարցուփորձից հետո, ժանդարմը կոշիկի խթանները զրնգացնելով վեր վազեց կարմիր շորով ծածկված սանդուխքներով և թակեց առաջին համարը:

Մի քանի րոպեյից հետո նա արդեն վերադառնում եր նույն հապճեպուլթյամբ, իսկ նրա հետևից՝ յերկար քուրքի մեջ փաթաթված շտապում եր Տուրգենևը:

— Յեթե վորևե մեկը ինձ հարցնի,— ասաց նա դռնապահին,— ասա վոր շուտով կվերադառնամ:

Հազիվ եր կառքի դուռը ծածկվել, վոր ձիերը թափով շարժվեցին տեղից և սլացան Մոյկայի գետափնյա փողոցով: Կոնյունշիննի յեկեղեցու մոտ կառքը կանգ առավ: Տուրգենևը մտավ յեկեղեցու բակը և անցնելով քահանայի տունը, մոտեցավ մի ցածրիկ դռան, վորը տանում եր դեպի ներքնահարկը: Ինչ վոր մեկը կանգնած եր դռան մոտ: Տուրգենևը մոտիկից նայեց նրա դեմքին և նրան ճանաչեց.— Յելիզավետա Միխայլովնա Խիտրովոյի սպասավորուհին եր:

— Ինչու յեք դուք այստեղ— զարմանքով գուրս թուավ նրա բերանից:— Նրանք այստեղ են, դադաղի մոտ— հազիվ լսելի ձայնով պատասխանեց կինը: Յերբ բոլորը ցրվեցին, մենք աննկատելի կերպով յեկանք այստեղ և աղաչեցինք տեր հորը,

վոր մեկ թողնի հրաժեշտ տալու: Սկզբում չէր համաձայնվում,  
վախենում էր, բայց Յեւրիզավետա Միխայլովնան շատ համառ էր:

Տուրգենևիվը զգուշությամբ իշնելով սառած սանդուխ-  
ներով, բացեց ցածրիկ դուռը:

Ներքնահարկում, վորտեղ դրված էին դատարկ արկղներ  
և տակառներ, կողքի վրա ընկած էր մկրտության ավազանը և  
գերեզմանոցի ժանգոտած խաչը. ուղղակի աղյուսե հատակի վրա  
դրված էր Պուշկինի բաց դագաղը:

Նրա գլխավերևում, դագաղը տեղավորելու համար պատ-  
րաստված արկղին կպցրած, վառվում էր յերկու մոմ: Միջանցիկ  
քաճուց մոմերի բոցը որորվում էր և մոմեղեն արցունքները  
զլորվելով ու սառչելով սպիտակ ահոսներ էլին կազմում:

Յեւրիզավետա Միխայլովնան նստած էր դարսած աղյուս-  
ների վրա և անընդհատ նայում էր մեռած դեմքին: Նա նույն-  
խակ չըրջվեց դեպի Տուրգենևիվը, չերբ վերջինը մոտեցավ և  
ծունիկ չոքելով համբուրեց մահացած ձեռքը:

— Հիմա կզան տանելու,— ասաց Տուրգենևիվը զգուշությամբ  
ձեռքը, դնելով նրա ուսին:

— Արգեն—հարցրեց նա, շունչ քաշեց և սկսեց հուսահա-  
տորեն լաց լինել:

— Մխիթարվեցեք, Յեւրիզավետա Միխայլովնա,— քնքշու-  
թյամբ հանդստացնում էր Տուրգենևիվը,— վաղաժամ էր, բայց և  
այնպես վերջ տրվեց նրա տառապանքներին:

Յերբ Խիտրովոն շրջեց իր դեմքը, Տուրգենևիվը ցնցվեց.  
նրա առաջ առողջ, թարմ, վարդագույն թշերով և ալ շրթունք-  
ներով միջահասակ տարիքով կնոջ փոխարեն, վորին նա վա-  
ղուց չէ վոր տեսել էր նրա աղջկա պարահանդեսում, նստած  
էր վշտից այլանդակված, կորացած մի պառավ կին: Յեւ վերբ  
նա սկսեց խոսել, նրա մտերմական և հյուսթալի ձայնն էլ հըն-  
չում էր վորպես պառավ ձայն:

— Յեթե յես կարողանայի արցունքներով խեղդել իմ՝ դե-  
պի նա ունեցած սերը....

Չեմ կարողանում հավատալ Ալեքսանդր Իվանովիչ: Չի  
կարող պատահել, վոր այդ հաված շրթունքների վրա չըողա  
ժպիտը, չհնչի վարակիչ ծիծաղը և վոր անա այս մատները  
չըրքրեն գանգուր մազերը: Նայեցեք, ինչպես անհեթեթ ձեռով  
են սանրել նրան: Գունքերը հարթել են, կարծես աստիճանա-  
վորն իր պետին և ներկայանալու:

Նա քնքշությամբ կուսցավ հանգուցյալի վրա և մատները  
սանրի ձեռով անցրեց նրա մեռած գանգուրների միջով:

— Ահա այսպես, ահա այսպես, իմ սիրելիս: Այնպես, ինչ-  
պես կենդանի ժամանակը,— և փարվեց Պուշկինի փայտա-  
ցած կրծքին:

— Վոչ, վոչ,— մի ըոպեյից հետո նա բարձրացավ,— սիրտը չի  
բարբառում, այնտեղ հանգիստ է, սարսափելի հանգիստ,— դուրս  
էլին թռչում նրա բերանից աղեկտուր բացականչություններ:

Տուրգենևիվը մոռյված շփում էր կծկումներից սղմված  
կոկորդը և հիշում էր ճորտ կանանց, վորոնք ճիշտ այսպես  
էլին սգում իրենց սիրելի հանգուցյալներին, ինչպես այս աս-  
կանավոր՝ բարձր շրջանի տիկինը:

\* \* \*

Լուս էր և մոայլ Պետերբուրգը, չերբ գիշերվա ըստ սո-  
վորականին դատարկ փողոցներով, նեղլիկ և չհզկած արկղում  
ամբացրած դագաղի մեջ տանում էլին Պուշկինին: Պալատների  
և յեկեղեցիների ստվերները հազիվ էլին նշմարվում, և լուսա-  
մուտների վարագույրների արանքից հազիվ էլին շողում լույ-  
սի շերտերը:

Յերբ մոտեցան ուղարգելին, ինչ վոր զանգակատնից ժա-  
մացույցը զարկեց մեկ անգամ: Դռան տակից ժանդարմի ձիու  
վրա վնդատալով մի շուն հարձակվեց, նրան ձայնակցեցին  
մյուսները. ինչ վոր մի տեղ ճոճոցին դարպասի դռների ժան-  
գոտած ծխնիները և հարբած ու խոպոտ ձայնը վրոնաց:

— Գործակալ.

Աղեկտուր ծղրիղի նման ձայնեց վոտտիկանի սուլիչը:

Շների հաջոցն ավելի կատաղի դարձավ:

Տուրգենևիվը կուչ յեկավ կառքի մի անկյունում, ամուր  
փաթաթվեց իր մուշտակի մեջ և պինդ կկոցեց աչքերը:

Վոտտիկանական սուլիչների հետ միախառնված շան հաջո-  
ցով էր ճանապարհում Պետերբուրգը մեռած Պուշկինին: Նրա  
դագաղը խուլ թրխկոցով դիպչում էր արկղի անողորկ տախ-  
տակներին: Առջևի մասում մի կողքի վրա՝ արկղը սահնակին  
կապող պարանից բռնած տեղավորված էր Պուշկինի սենեկապահ  
Նիկիտան, վորն ուղեկցում էր նրան և այստեղ: Իսկ հանգուց-

յալի և Տուրգենևի սահանակների միջև ճոճում եր ձիավոր ժանգարմի մուսյ կերպարանքը:

«Իսկ ուսական պատկեր ե, կասեր յեղբայրս»—հիշեց Ալեքսանդր Իվանովիչը՝ նիկուլայ Տուրգենևիին, վորն արդեն սկըսել եր գրել իր եջերը «Ռուսաստանի և ուսնների մասին»:

Յերբ դուրս յեկան Պսկովի խճուղին, սառած արցունքի նման ձյունի հատիկները ուժեղ քամուց դիպչում եյին ծածկած կառքի կտուրին: Մորթյա վզնոցի արանքից Տուրգենևիին յերևում եր պղտոր, կարծես արտասովակեղ լուսինը: Մեջ ընդ մեջ նա քողարկվում եր սգո մետաքսե ամպերով:

Կարճ ընդհատումներով, վորի ընթացքում թեյ եյին խմում Նիկիտան ու ժանգարմը, նորից ու նորից սլանում եյին նրանք դաշտերով, վորտեղ բուքն սպիտակ ծխի նման պտույտներ ե գործում:

Ամբողջ ժամանակ Տուրգենևի առջևից գնում եր՝ ձյունով ծածկված՝ նեղիկ արկղը բարձած սահնակը: Ձյունը մուժ արծաթազոծ կտորի գուլյն ուներ և ճանապարհի դար ու փոսերում թափվելով մերկացնում եր անողորմ տախտակները:

«Մի՞թե այդ գամված տախտակների մեջ Պուշկինն ե, մտածում եր Տուրգենևի—Պուշկինը, վոր յետուն, կայծկլտող կյանքի մարմնացումն եր. Պուշկինը՝ միշտ վառվոուն ու խորունկ—և նախկին տարիների իր բուռն կենսուրախությամբ և կյանքի վերջին անտանելի ամիսների մուսյությամբ, Պուշկինը, վորը մերթ վայրենի, մերթ յեվրոպացի, մերթ Շեքսպիր, մերթ Բայրըն, մերթ Անակրեոն, բայց միշտ ուսական Բայրըն, ուսական Շեքսպիր և ուսական Անակրեոն»:

Տուրգենևիը հիշում եր կենդանի Պուշկինի կյանքից առանձին տեսարաններ:

Ահա նա, Ալեքսանդրա Ոսիպովնա Մմիրնովայի մոտ հատվածներ ե կարդում իր «Պուզաչովյան ապստամբությունից»:

Ընթերցումը տեղի ուներ առատ և զինելից ճաշից հետո:

Ընթերցանության ժամանակ Տուրգենևիը ննջում եր: Տանտիրուհին իրեն կորցրել եր և լալու չափ կարմրել: Պուշկինի հեղեղուն ծիծաղը զարթեցրեց Տուրգենևիին: «Ներիր, Ալեքսանդր Իվանովիչ, ներիր, վոր քունդ խանգարեցի»—կարմրելով ներողություն եր խնդրում նա և նոցից շարունակում ընթերցումը: Ահա նա և պալատական պարահանդեսում: Ծայր աստիճան սիրալիր, բայց տենդոտ և այրվող հայացքով դիտում

ե ինչպես իր կինը պարում ե ցարի հետ: Ահա նա սրընթաց, առանց վոչ վոքի նայելու, գնում ե Նեվայի ուղղությամբ դեմքը լուսավորված ինչ վոր ներքին պայծառ լույսով: Յեվ վերջապես մահացու վիրավոր, աչքերը հառած գրքերով լի դարակներին, յուրաքանչյուր շարժման, հանճարեղ գլխի յուրաքանչյուր թեքումի մեջ անձայր թախիծ: Խնդության, բարության, մթության, ատելության, սիրո, քինո մի ամբողջ աշխարհ.—և այդ բոլորը հանկարծ սառեց հավիտյան և ընդգրկված ե այս դագաղի մեջ, վորն ընկղմվում ու դուրս ե գալիս բուք ու բորանից ծածկված ճանապարհի դարափոսերում: Յեվ քանի ավելի յեր մտածում Ալեքսանդր Իվանովիչը Պուշկինի մասին, քանի ավելի վառ եր հիշում ամբողջ նրա կյանքը Լիցեյից մինչև այս դագաղն, այնքան ավելի յեր նրան թվում, վոր իրեն՝ Տուրգենևիին վիճակվել ե ակամայից դիտել չքնաղ լուսատուի կյանքը՝ նրա ծագումը, գագաթնակետը, խավարումը և վերջապես նրա մահը:

Լուզայում վորոշեցին հանգստանալ: Դագաղով արկղը տարան ծայրամասի յեկեղեցին: Տուրգենևիը կարգադրեց կանչել տերտերին և հոգեհանգիստ կատարել: Տերտերը յեկավ սարկավազի և ժամկոչի հետ միասին:

Վախեցած դեմքով լսեց Տուրգենևիի ասածը, ուղղելով հայացքը տարրինակ հանգուցյալի վրա: Ժամկոչի հետ յերկար փսփսալուց հետո վորոշեց ծեսը վերջապես կատարել:

—Արա հանգիստ.....

Հաղիվ եր սկսել սարկավազն իր խոպոտ ձայնով, յերբ ներս վազեց յեկեղեցին գավառական վոստիկանը և հաղիվ շունչ քաշելով վազեց դեպի Տուրգենևիը:

—Վոչ մի կերպ չի կարելի, ձերդ պայծառափայլություն.— շտապով վրա տվեց նա. ժանգարմների շեֆի՝ նորին պայծառափայլության կոմս Բենկենդորֆի գաղտնի կարգադրությամբ վոչ մի... և դրեց Տուրգենևիի փիլ պետական արծվանիշով և կնիքներով դրոշմված ինչ վոր թուղթ:

Տուրգենևիը նայեց թղթին: Աչքի եյին ընկնում գրասենյակային թանաքով ընդգծված հետևյալ տողերը:

«Պուշկինի դիակը տանում են Պսկովի նահանգը հողին հանձնելու:

Կոմս Ալեքսանդր Խրիտաֆորովիչ Բենկենդորֆի հանճարարությունն ե, միաժամանակ պատիվ ունեմ հայանել թա-

գավոր կայսրի կամքը՝ արգելել ամեն տեսակ հատուկ արտահայտութիւնն ...»:

Առանց վերջացնելու Տուրգենևի վերադարձրեց թուղթը և բարկացած շարժեց ուսերը:

— Չե վոր սա սովորական յեկեղեցական ծիսակատարութիւնն է. խոմ դագաղը չի մնալու դրսում ալյուրով ու թըռչուններով բարձած սայլերի կողքին, — գլխի շարժումով ցույց տվեց նա դեպի լիքը բարձած գլուղական սահնակները:

— Ճիշտ այդպես է, ձերդ պայծառափայլութիւնն, բայց ավելի լավ է մեղքից հեռու մնալ:

Վոստրիկանը վոտքերը շարունակ շարժվում էր և աննկատելի կերպով նշան էր անում քահանային ընդհատելու ծիսակատարութիւնը:

«Հավերժ հիշատակ, հավերժ հիշատակ, հավերժ հիշատակ», — բռնեց կուլ տալով շտապում էր քահանան, իսկ սարկավագն արդեն շտապով հանգեցնում էր հազիվ բոցավառված մոմերը և դարսում էր հանդերձանքը չթե կապոցի մեջ:

Ներս մտած գլուղացիները գլխարկները խրեցին գոտկատեղին և հետ տարան դագաղը, թողնելով վոտնամանների լճացած հետքերը:

Տուրգենևիվ բարձրացավ իր սայլակը, ժանդարմը ծանրորեն յերավ թամբին իսկ Նիկիտան տեղավորվեց կառսպանի կողքին:

Յեվ նորից արտասովոր շքերթը շարժվեց դարտուղի ճանապարհներով:

— Մի տեսնեյիր, ինչ է կատարվում, — ասաց գլուղացիներին մեկը, նայելով յերթի հետեից:

— Չարմանալի լի — իսկույն համաձայնվեցին մյուսները և ցրվեցին դեպի իրենց սայլերը:

Տերտերը՝ սարկավագի և տիրացուի հետ միաժամանակ մնացին կանգնած յեկեղեցու գավթում:

— Հոգու համար զանգերը չքաշե՛մ, — հարցրեց ժամհարը:

— Քաշիր մի տաս անգամ, — թույլ տվեց տերտերը:

Չանգերի դանդաղ, յերկարաձիգ դողանջները հասնում էին հեռացող սահնակներին, յերբ նրանք սլանում էին արևից փայլող ձյունապատ դաշտերով:

Յերեկոյան դեմ հասան Պսկով:

Նահանգապետն ընդունեց Տուրգենևիին իր տաք վառած ընդունարանում շատ սիրալիր և նույնիսկ հրավիրեց գիշերելու:

— Այսոր ինձ մոտ պարում են, — ավելացրեց նա և թեք գցեց Տուրգենևիի միջքով:

Ալեքսանդր Իվանովիչը կտրականապես հրաժարվեց:

— Ինչպես պարել, յերբ... նա ձեռքով նշան արեց այն կողմը, վորտեղ լուսամուտի մյուս կողմը մթին էր տալիս յերկար արկղի ուրվագիծը:

Նահանգապետը մի քիչ շփոթվեց:

— Յավալի յե, ցավալի յե, — ասաց նա հառաչելով, — և այնպես հանկարծակի: Յես միշտ տածել եմ դեպի հանգուցյալը լավագույն զգացմունքներ և միշտ պատրաստ եմ յեղել մատուցելու նրան ծառայութիւններ... ի միջի այլոց, իմ Յեվստենպեյը — հրաշալի խոհարար է: Ափսոս վոր չեք մնում ընթրելու, ապա թե վոչ անձամբ կհամոզվեցիք այդ բանում: Յես միշտ նախանձախնդրութեամբ եմ վերաբերվում դեպի նրա արվեստի գաղտնիքները: Ալեքսանդր Սերգեյեվիչին հաճույք պատճառելու ամար, յես թույլատրեցի նրան Պուշկինի պատանի ճորտին չվերցնի իր մոտ սովորեցնելու և նա այնպես սովորեցրեց... յեթե յերբեիցե առիթ եք ունեցել հանգուցյալի մոտ ձաշի, չեյիք կարող այդ չնկատել: Հատկապես լավ էր պատրաստում վորսի միսը: Պատահում էր, վոր նապաստակին համեմում և այնպես էր մատուցում: — Նահանգապետը լեզուն ձգձպացրեց: Ճիշտ, Ալեքսանդր Իվանովիչ, մնացեք, դագաղն այժմ կուղարկենք, իսկ դուք առավոտյան կհասնեք:

Տուրգենևիվ հրաժարվեց ավելի չոր և վճռական տոնով:

— Ինչպես կցանկանաք — ավստասնքով արտասանեց նահանգապետը և հրամայեց աստիճանավորին հանձնել Տուրգենևիին յերկու գրութիւն: Մեկը Սվյատոզորսկի վանքի վանահորը, մյուսը՝ զավառական վոստիկանին — «հանգուցյալի ուղեվորութեան վայրը նշանակելու մասին»:

Վերջին անգամ կանգ առան Տրիգորսկում Ոսիպովայի մոտ: Պրասկովյա Ալեքսանդրովնան, պարզ ծամերով, սև շալն ուսերին դուրս վազեց պատշգամբ և վողբալով ընկավ դագաղի վրա: Նրա յերկու աղջիկները, վորոնք լացից ու ցրտից դողում էին, ձգնում էին պոկել նրան սառած արկղից:

— Մայրիկ, բավական է, հանգստացե՛ք...

— Աստված իմ, — հեկեկում էր Ոսիպովան, — մեր Պուշկինը, մեր Ալեքսանդրն այս տախտակների մեջ, սառած, հավիտյան լուռ:

Մեկը նրա ուսերին վերարկու գցեց, մյուսը նրան հանգըստացնելու համար հոտ քաշելու դեղ տվեց, իսկ մի ուրիշը հրամայեց դադարի վրա յեղենու ձյուղեր փռել և գյուղացիներին ուղարկել Սվյատոգորսկի վանքը գերեզման փորելու:

Յերեկոյան լերկար ժամանակ զրուցելով իրենց վիշտն ելին արտահայտում հանդուցյալի մասին:

Սմենից շատ խոսում էր Պրասկովյա Ալեքսանդրովնան:

— Յեթե մեկին յերջանկացնելու համար բավական լիներ միայն բարի ցանկությունները, ապա Պուշկինը կլիներ ամենալերջանիկներից մեկն աշխարհում:

Իմ զգացմունքների մասին այնքան եմ գրել նրան, վոր յեթե յերկինքը թուղթ դառնար, իսկ ծովը թանաք, դարձյալ չէր բավի՝ իմ մտքերը և անձնվիրությունը նրան արտահայտելու համար: Բայց մենք ուսաներս միայն խոսել գիտենք: Խոսում ենք, յերբ հարկավոր է գործել, և գործել առանց հապաղելու:

Չե՞ վոր նա ինձ գրում էր, վոր Պետերբուրգի կյանքը նրա սրտովը չէ: Յեթե նա զար այստեղ, գուցե մենք մեր բարեկամության և սիրո ուժով կարողանայինք նրան պահել այս կողմերում, յեթե վոչ մշտապես, գոնե յերկար ժամանակ: Մեզ հարկավոր էր ազդել նաև Նատալիի (Պուշկինի կնոջ) վրա: Յե՞վ ով գիտե, միթե նա բավարար ուշադրությամբ չէր լսի մեր ապացույցները գյուղում ապրելու առավելությունների ոգտին: Ինչ էլ վոր լիներ, պետք էր նրանց այստեղ բերել տալ... բայց մենք բոլորս, վորպես բարբարոսներ, չենք կարողանում պահպանել մեր գանձը:

Այդ գանձը կորավ և մենք վաղը հողին պիտի հանձնենք...

Տուրգենևիվը մխիթարում էր նրան:

— Թող ձեզ վորոշ չափով մխիթարի այն միտքը, վոր նրա Տրիգորսկում ձեզ հետ անցկացրած բոլորները չեն մոռացվի հավիտյան: Նրանք այլևս չեն վերադառնա, բայց մեզ բոլորիս վիճակված է վաղանցուկ զգացումներ սրտի և հոգու հաճույքների և հարատև վիշտ սիրելի և անվերադարձ կորուստների համար: Տուրգենևիվը պատմում էր թե ինչպես Պուշկինը մահվանից քիչ առաջ հիշում էր 28 թվի ամռանն իր կովկաս ուղեվորվելու մասին, վորտեղ նա Հերհերից դեպի Բզովլալի շենանցքը բարձրանալիս հանդիպել է Գրիբոյեզովի դիակին՝ յեզան սայլով տանելիս: Գրիբոյեզովն ընկավ դաշույնից,

վորպես տգիտության և դավաճանության դոհ: Նրա այլանդակված դիակը, վորը յերեք որ շարունակ խաղալիք էր դարձել Թեհրանի գազազած ամբոխի ձեռքին, ճանաչվել է միայն աջ թևի բազկի վրայի վերքից, վորն ստացել էր նա Յակուբովիչի հետ մենամարտելու ժամանակ:

— Թեև ընած ստոր նշանը, — ասաց Պրասկովյա Ալեքսանդրովնան, — չե՞ վոր Գրիբոյեզովը հրաշալի յերաժիշտ էր:

Նայեց սառած ապակուն, և նրա վրա նկարված տրոպիկ անտառի պատկերների միջև հազիվ կապտին էր տալիս յեղենու ձյուղերով ծածկված դազաղը: Բուքը սաստկանում էր: Բամուց ձյան հողմեր ելին յեղնում ու պտտում, յերկիրը կարծես հուսահատությունից ալեհեր գլուխն էր փետում:

Տուրգենևիվն առաջինը հող գցեց դազաղի կափարիչի վրա: Բահերով գինված գյուղացիները ցնցվեցին, կարծես ուրախանալով, վոր կարող են վերջապես իրենց գործին անցնել: Սառած հողի կոշտերը՝ սկզբում ուժեղ, իսկ հետո թույլ թրխկոցով դիպչում ելին դազաղին, թափվելով իրար վրա: Բահանան ցրտից անհնազանդ շրթունքներով վերջացնում էր աղոթքը:

Յերբ գերեզմանի վրա ձյունախառն հողից սև — սպիտակ բուրբ գոյացավ, Տուրգենևիվը կռացավ, մի քիչ հող վերցրեց և լցրեց իր սպիտակ փղոսկրյա ծխատուփի մեջ:

— Ընտանիքին ե՞ք տանում — հարցրեց Ոսիպովան և սառած ձեռքերով շոշափեց յերեսը:

— Վոչ, Ելիզե Խիարովոյին.

Տուրգենևիվն իր թե՛վն առաջարկեց, նրան, և նրանք դանդաղորեն քայլեցին դեպի տուն:

Ժանդարմը ցրտից արտասվող հալացքով հետևում էր նրանց:

Ճանապարհին Ոսիպովան կտրեց խնձորենու մի սառած ձյուղ:

— Այս էլ տարեք նրան. Ալեքսանդր Սերգեյիվիչն այնպես սիրում էր խնձորենին, մանավանդ յերբ նա ծաղկած էր լինում, — և քիչ լուրուց հետո ավելացրեց. — Թշվառ Ելիզա, դժվար թե վորևե մեկը նրան այնպես հասկանա, ինչպես յես...:

— Յերկար պիտի ցցվես այստեղ, — չարախինդ անհամբուրությամբ ձայն տվեց ժանդարմը գերեզմանից վոչ հեռու գտնված ծառի մոտ կանգնած Նիկիտային:

Նա չպատասխանեց. աչքը գերեզմանից չհեռացնելով նա


կիսաձայն յերգելով շարունակում եր իր դառնագին վողբը.  
 —Քնիր, իմ թառան, այստեղ քեզ ել չեն անհանգստացնի  
 բամբասանքները, ամբաստանություններն ու հրովարտալիները:  
 Քեզ չեն արթնացնի վոչ բարեկամները, վոչ թշնամիները, գու-  
 ցե ազոավը կռավի, կամ սոխակը դայլալի գարնանը... գուցե  
 ամռան գեփյուռը խոտերը սոսափի, կամ յերկինքն իր փեշով  
 քեզ փարի, կամ արշալույսը քեզ վողողի իր արցունքներով և  
 կամ ամպերն անձրևեն քեզ վրա:

Գլուղացիները լուս լսում եյին գյուղի համար սովորական  
 վողբասությունը. նրանց համար տարրինակ չեր թվում լսել  
 այդ նույնիսկ պարոնի սենեկապահից, վորն իր ամբողջ կյանքն  
 անց եր կացրել քաղաքում:

Ժանդարմը մեկ ել ձայն տվեց Նիկիտային.

—Կհեռանաս դու թե վոչ:

Նիկիտան թեով սրբեց արցունքները, խաչակնքեց և ա-  
 ռանց գդակը դնելու հեռացավ գերեզմանից:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑՈՒՆԿԸ

Հուլիսի 2-ին (Թարմ. Ն. Զարյան)

I. ՊՈՒՇԿԻՆԻ ԿՑԱՆՔՆԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Պուշկինը—ռուսական մեծ բանաստեղծ . . . . . «Պրավդա»
2. Ս. Ս. Պուշկին (կենսագր.) . . . . . [Redacted]
3. Ս. Ս. Պուշկին (կենսագր.) . . . . . Բ. Տոմաշեվսկի
4. Ինչպես եր աշխատում Պուշկինը . . . . . Ն. Աշուկին
5. Բանաստեղծի մահվան առթիվ . . . . . Մ. Լեբմոնտով  
 Թարգմ. Հ. Մազմանյան

II. ԲՆՆԱԴԱՏՆԵՐԸ ՅԵՎ ԳՐՈՂՆԵՐԸ ՊՈՒՇԿԻՆԻ ՄԱՍԻՆ

1. Բեյլիսկի, Չերնիշևսկի, Դորբոյլով, Գոգոլ, Գոլկո (հատվածներ)
2. Ալ. Սերգեյևիչ Պուշկին . . . . . Ա. Լուսաչարսկուց

III. ՊՈՒՇԿԻՆԸ ԳԵՂԱՐՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

1. Մի պատկեր Պուշկինի կյանքից . . . . .
2. Գինեքալ-նահանգապետ կոմս Վորոնցովը և Պուշկինը . Մ. Մարիչ
3. Անսպասելի հանդիպում . . . . . Յու. Տինյանով
4. Պուշկինի թագումը . . . . . Մ. Մարիչ

Ժողովածուն կազմեց՝ Մ. Դոկուբայան  
Պատ. խմբագիր՝ Հ. Մելիքյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Հրատ. 4021, Գլ. լրագ Կ.-4547 սլատվեր 238, տիրած 3000

Հանձնված և արտադրութան 10 փետրվարի, 1937 թ.

Մտորագրված և տպելու 20 մարտի, 1937 թ.

Պատճառի տպարան, Յերևան, ԻԻ Կոմունյանցի, 4

«Ազգային գրադարան»



NL0320137

ԳԻՆԸ 2 ՈՒ.  
ԿՕՁՄԸ 75 Կ.

ПУШКИН  
СБОРНИК

Гиз Арм. ССР, Ереван, 1987 г.